 են ձևով, սակայն միմյանցից տարբերվում են երկարությամբ, 5-րդն
 ավելի երկար է, 6-րդը՝ նրանից կարճ, իսկ 7-րդը ավելի կարճ: Կազմի
 աստուծի ծառերից մեկին ունի 2 դույզ վերին ճյուղեր:



Նկ. 2.

Ծյուղերից յուրաքանչյուրը կազմված է երկու զուգահեռ զարդաձե-
 րից: Ծառի պատկերն ընդգրկող սոմբան շրջանակի չորս կողմերից յու-
 րաքանչյուրը զարդարված է երկու շարք կենտրով, որոնք հընչնում են
 թռչունների կռուցների և դասավորված են միմյանց հանդեպ հակառակ
 ուղղությամբ, այդ կենտրի թիվը տարբեր սոմբերի մեջ տարբեր է (10—18
 դույզ): Մի զարդանկարի վերաբաղման ժամանակ մենք ամեն մի կող-
 մից ընդունել ենք 14 դույզ կենտր: Ի զեպ պեսք է ասել, որ այդ կենտրը
 (նման են թռչունի կռուցի) շատ սիրված զարդանկար են ոչ միայն հայ-
 կական մոդավորական կապրուսագործության մեջ (կապերտ, գորգ, խորջին
 և այլն), այլև արևելյան շատ մոդավորների համապատասխան բնագա-
 վաններում:

Շրջանակի կողմերը զեպիցի կերպով միմյանում են սոմբի անկյուն-
 ների զարդանկարի նետ: Հետաքրքիր են անկյունների այդ զարդանկարը,
 որոնք վերջանում են զեպի ցած ուղղված մեկական սուր գագաթով, նեղ
 այդ սուր գագաթների ներսից էլ սիմետր է ծառի բունը: Այսպես ծառի



նկ. 3.

հիմքի երկու կողմում, կտուցները զիպի ծառի բունը, նստած են երկու թռչուն: Ասեղնագործութեան տեխնիկայի, թե նմայ աղագիցույի շնորհիվ՝ այդ թռչունների մարմինները միացել են խաչաձև:



նկ. 4.

Ասեղնագործութեանը կատարված է ճերմակ թափանցիկ կտորի վրա: Գա թափանցիկ կտավ է, որի թելերը ննարավոր է հաշվել:

Ասեղնագործութեանը միազույն է, կարված միայն կտրվել (մոռի դույն) ուրբա՞ծ մետաքսյա թելով: Ենթադրում ենք, որ նման բարակ կտորի վրա այնպիսի տեխնիկայով ասեղնագործութեանը կատարվել է քարոզյանի մեջ:

Ասեղնագործութեանը արված է ուղիղ կտրով, զծային, բայց կտրերը միմյանց հանդեպ հորիզոնական են, ուղիղ, ոչ մի տեղ կոր գծի զոյանում: Կտրերը գասավորված են որոշ խմբերով, մի զմի վրա, այդ գծերը ասեղնագործված են զուգահեռ կերպով, մեկ մասնաբաժնով, մեկ հեռանալով ծառի բնից, ինչպիսի ձևով և լրացվում, ասեղնագործվում են զարդաձևերը:

Մասն ասեղնագործված է առանձին, իսկ ուժը-ըրվանակը՝ առանձին: Ասեղնագործութեանը կատարված է աճեհանին ու տարածված ասեղնի առաջ շուշայով, կամ ալեյի ճիշտ՝ շարակարգով, խիստ զուտեթյանը հաշվելով կտորի թելերը, թե նրանց ծածկելու, թե բաց թողնելու նմար: Ասեղնագործութեանը այնպես է կատարված, որ աստառի կողմից ստացվում է իսկական երեսին արված զարդարանքի նեղատիվ ձևը:

Այնտեղ, որ կտորի վրայով անցնում է կտրվել մետաքսյա թելը, կտորը ասեղնի մնում է գտտարի և ընդհանրապես — եթե երեսի կողմից մնում է բաց տարածություն (թելով շծածկված կտոր), այդ զրա ստեղծված անցնում է մետաքսյա թելը:

Ասեղն մեկ իջնում է կտորի ասի, մեկ բարձրանում, անցնում է կտորի երեսով: Կտրերը միմյանց հետևից շարվում են ասեղի վրա ուղիղ շարերով, այդ պատճառով էլ նպաստակարգմար է այս ասեղնագործութեանը և կարի տեխնիկան անվանել շարակար:

Թվում է, որ կարի այս հնագույն ձևը այն կարն է, որի մասին Վ. Վ. Ստասովն ասել է.

«...Далее следует самое скорое шитье набором... Шитьё это состоит в том, что нитка постоянно ныряет вверх и вниз, как при ткачестве, так что один стежок приходится на лицо, а другой на изнанку холста. Другие названия этого шитья: „бранью“, по бранному, выкладкой, шьется красной бумагой, иногда и синими нитками»¹.

Սակայն կա տարբերություն հայկական ասեղնագործութեան քննվող նմուշի և սուսական մոդիլիցական «набор» ձևի ասեղնագործութեան մեջ:

Սուսական նմուշ ասեղնագործութեանը կատարվել է նստ կտավի վրա, որի թելերը ասոր են, նստա, հեշտ են հաշվվում, բացի զրանից, այդտեղ օգտագործված է բամբակի կամ վուշի թել: Մեր սուսամասերած ասեղնագործութեանը արված է բարակ, թափանցիկ կտորի վրա, որի թելերը զմար է հաշվել, իսկ զարդակարը կատարված է մետաքսյա թելով, որը բարդացնում, երկարացնում է աշխատանքը: Դա միամասնակ խոսում է նմե վերջինիս ներության մասին:

Մյուս տարբերութեանն այն է, որ մեր նմուշի մեջ ծառը կարվում է առանձին, իսկ շրջանակ-ուժըրը առանձին, որպիսի հանդամանքը, առանձին թելերը հաշվելու, լրացուցիչ զմարութեան է առաջ բերում, մինչդեռ սուսական ասեղնագործութեան մեջ ամբողջ շարքը արվում է առանց բնդ-հատանների:


9. Ս. Մասլյան գտնում է, որ ուկրաինական «НИЗ» կարը նման է սուսական «набор»-ին²:

Հետևապես մեր շարակարը ունի որոշ նմանություններ սուսական «набор» և ուկրաինական «НИЗ» կարերին:

Մեր նմուշի մեջ մեծ տեղ է զբաղում 1, 3 թելերի հաշվը, կրեմն 2, 4-ը կամ 4, 5, 6, 7-ը, եթե այդ պահանջվում է երկրաչափական որևէ զարդի ձևավորման համար:

Անկյունի զարդակարը ասեղնագործվում է նետայլ կերպ՝ կողքի ուղղահայաց շերտերը ասեղնագործվում են ինը թելի վրա, մի զոմով: Երեք թել ծածկվում է մետաքսյա թելով, մի թել բաց է թողնվում, մի թել ծածկվում, մի թել նորից բաց թողնվում և էլի երեք թել ծածկվում:

Հետևյալ շարքում՝ երկու թել ծածկվում է մետաքսյա թելով, մի թել բաց թողնվում, երեք թել ծածկվում, մի թել բաց թողնվում, երկու թել ծածկվում, մի թել բաց թողնվում, երկու թել ծածկվում և այլպես, միմյանց հաջորդելով ասեղնագործվում են շարքերը հետևյալ սխեմայով.



Թավ թվանշանները ցույց են տալիս, թե կտորից քանի թել է ծածկվել մետաքսյա թելով:

¹ Стасов В. В., Русский народный орнамент, т. 1, изд. 1894 г., С. Петербург, стр. 150.

² Г. С. Маслова, Историко-культурные связи русских и украинцев по данным народной одежды, «Советская этнография», № 2, 1954.

Ռոմբի ներքին անկյունի զարգանկարը ստեղնագործվում է ամբողջ լայնութայամբ՝ աջից-ձախ, ապա ձախից-աջ, գործելիս միանգամից ստացվում են զարգանկարի կողքի ուղղահայաց շերտերը, թաշտանները, ծառի բունը, եռանկյունները։ Այդ զարգանկարի ներքին ծայրից սկսվում է, ինչպես ստացինք, ծառի բունը, նախ երեք թելի վրա, ապա հինգ և այդպես միջոց (երեք-հինգ) մինչև ընդ երկրաչափական ձևերի ու ծառի ճյուղերի սկզբը։

Ծառի բունը, սածկոյձ անկյունի այդ զարգանկարից, ստեղնագործվում է ծառի ճյուղերի հետ միասին մինչև ծառի զագաթը։

Ծառն իր ճյուղերով ստեղնագործվում է զուգահեռ գծերով, նախ՛ի ամբողջ լայնութայամբ, մի ճյուղի ծայրից մինչև նրա զիմացի ճյուղի ծայրը, ձախից աջ և ապա նաև զալիս աջից ձախ, էլի ձախից աջ և այլն։

Ամբողջը կարվում է մեկ գծով, միայն ճյուղերի վերջին կետ ծայրերը ստեղնագործվում են առանձին-առանձին, ամեն մեկը իր ներքին ճյուղերը գործելիս պահպանում է 1—3 թելերի հաշիվը։ Օրինակ, ամենաներքին ճյուղը (նկ. 2) կազմված է չորս շարք երեքական թելերից, որոնք վեր են բարձրանում՝ թեք ուղղութայամբ։

Մեծաքանակ ծածկված ամեն երեք թելից հետո արանքում մնում է մեկ չծածկված թել՝

3—1—3—1—3—1—3

Ճյուղերի արանքում (երեսի կողմից) կտորից հինգ թել մնում է չծածկված մեծաքանակ թելով, այդ արանքը ծածկվում է կարծիր թելով՝ աստառի կողմից։

Ծառի ընդ մոտ երկրաչափական ձևերը — ոտները, արավիցիամերը նույնպես ծածկվում են աստառի կողմից մեծաքանակ թելով, իսկ երեսի կողմից մնում է բաց ձևրմակ կտորը։ Ծառի բունը էլ կամ երեսից է ծածկվում թելով, կամ աստառի կողմից։

Ծառն ստեղնագործելուց հետո, պետք է ստեղնագործել ոտմաձև շքր-ջանակը։ Ռոմբի կողմերը սկսվում են ոտմբի չորս անկյունազարգերից, քարձրանում են վեր կամ իջնում ցած թեք սանդուխթի ձևով։ Այդպեղ էլ պահպանվում է 3—1—5 թելերի հաշիվը. ամբողջ շարքը 3—1—3 թելի հաշիվով է արվում, 5 թել է վերցվում միայն այն մասանակ, երբ սկսվում է կետը, կտուցը (տես նկ. 1)։

Շրջանակ ոտմբի ամեն մի կողմը սկսվում է մի անկյունից և թեք ստեղնագործվելով վերջանում մյուս անկյունում։

Այսպիսով ծառն իր ճյուղերով և ոտմբի անկյունազարգերն ստեղնագործվում են առանձին, իսկ շրջանակ-ոտմբի կողմերը՝ առանձին-առանձին, այդպես էլ հետևյալ ծառը. հետևյալ շրջանակը՝ մեկը արջիջների կարգով։

Ծառի ու շրջանակի միջի տարածությունը (դաշտ) մնում է բաց, այդպես զարգարանքի թափանցիկ կտորը ոչ երեսի և ոչ էլ աստառի կողմից չի ծածկվում մեծաքանակ թելով։

Թե ինչ զարգարան կտորի մասունքներ են ՀՍՍՄ Պետ. Մասենա դարանի № 3611 ձևագրում պահվող և մեր քննությունը ստարիկ այդ քեկորները, չչիտենք։ Այն հանգամանքը, որ ծառերի մոտիֆները բոլոր դեպքում ունեցել են միևնույն ուղղությունը, ցույց է տալիս, որ մեկ հեռա-

բրքերը զարգարանն կտորը գործ է անվել այնպիսի պարագաներում, երբ հարկավոր է եղել, որ բոլոր ծառերը երևան քնական դիրքով։ Ուստի կարելի է ենթադրել, որ մենք այժմ գործ ունենք միջնադարյան մի թանկարժեք վարագույրի, կամ ծածկոցի մնացորդների հետ։ Դա կարելի է ապացուցել նաև այժայ ստեղնագործության տեխնիկայով. օրինակ, զարգանկարը մարտի, կոկիկ ստեղնագործված է թե երեսի և թե աստառի կողմից, որի շնորհիվ հնարավոր է եղել այն դիտել երկու կողմից էլ։ Զարգանկարը երեսի կողմից մի նախ է ներկայացնում, իսկ աստառի կողմից — դրա հակասակը — նեղատիվը, որն ինքն ըստ ինքյան նույն նախի մի այլ վարիանան է հանդիսանում։ Այդ աշխատանքը այնպիսի վարպետութայամբ է կատարված, որ վերաբողոքության մասանակ մենք դժվարանում էինք որոշել, թե ընդ է երեսը, և ընթ աստառը։ Իսկ ինչպես հայտնի է, այն ստեղնագործությունները, որոնք կատարվում են թափանցիկ կտորների վրա և գործ են անվում առանց աստառի, օրպես վարագույր, ծածկոց, քող և այլն, կարվում են մեծ խնամքով և մարտի են լինում նաև աստառի կողմից։

Վերջացնելով հայկական սոցիալադեմոկրատիայի այս եղանի նշանակություն ունեցող հին նմուշի նկարագրությունը, պետք է ստել, որ թափանցիկ ձևերի կտորի վրա կարելի է մեծաքանակ թելով կատարված այս ստեղնագործությունը շափազանց նուրբ է, զեղեցիկ, արտանայելի։

Ստեղնագործությունը զարմացնում է իր զարգանկարի արվեստային կատարվածքով, մեկը արջիջների պես դասավորվածութայամբ, բոլոր մասերի ներգաշնակ համաչափութայամբ, նուրբ զեղեցիկութայամբ, թելերի խելայի, նույնիսկ խորամանկորեն կազմված թվարանական հաշվածքով։

Հասարակ հնագույն սասեղն առաջ է շարակարով հորինել — ստեղնագործել այնպիսի բարդ կառուցվածք ունեցող զարգարանք, ինչպիսին է մեր հին նմուշը, կարող էր կատարել միայն մեծ ճաշակ, հնարողություն, զեղեցիկի բարձր զգացում, մեծ փորձ ու սեր ունեցող մոլորդողական ստեղծագործություն մեծ վարպետը։

Վ. ԲԳՈՅԱՆ

ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԾԵՍԵՐԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅՑՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳԻՐ, ԳՐԱՆՑՎԱԾ 14-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Մատենադարանի № 3937 ձեռագիրը քերականական, խրատական, մեկնողական ու քարոզական նյութերի ժողովածու է, ընդօրինակված Հայոց ՊժԹ (1370) թվականին: Ձեռագրի վերջին՝ 192թ—196թ էջերի վրա, մի այլ գրիչ, նույնպես 14-րդ դարի վերջերին, ընդօրինակել է անհայտ հեղինակի մի քարոզ, որը ազգագրական ուշադրավ նյութեր է պարունակում:

Քարոզի հեղինակը իր առաջ նպատակ է դրել հայ հարսանեկան ձևերն ու սովորույթները, որոնք ձևավորվել էին հաղարամյակներ առաջ, մեկնաբանել քրիստոնեական եկեղեցու գիրքերից և, շեմախոսություններն ու սգուգանեաներն անց կացնելով, ցույց տալ, որ, իբր, այդ ձևերի հիմքում ընկած են եկեղեցական ու աստվածաբանական պատկերացումներ: Այս տեսակետից անվերնագիր այդ քարոզը դուրի է որևէ արժեքից:

Սակայն հեղինակը իր նպատակից կշնկելով, քարոզի յուրաքանչյուր նոր պարբերություն սիրում է հայ հարսանեկան սովորույթների հերթական զրվագներին նկարագրություն մը և նոր միայն անցնում է այդ զրվագների մեկնությունը: Հարսանեկան սովորույթներից շեղվել նկարագրությունը, շնորհիվ այն բանի, որ ձեռագրի վերջից բնկել են թերթեր, մնում է անսլաքառ: Սակայն պահպանված պատասխանները, գրանցված լինելով 14-րդ դարի վերջերին՝ մեծ արժեք են ներկայացնում:

Հայանի է, որ հարսանեկան սովորույթների ուսումնասիրման համար հայ ազգագրագիտություն տրամադրություն տակ կան միայն 19—20-րդ դարերում կատարված նկարագրություններ և առանձին, սակավաթիվ ու անբավարար, ակնարկներ նախորդ դարերից հասած մատենագրական երկերում:

Մատենադարանի № 3937 ձեռագրի մեջ պահպանված նկարագրությունը, լինելով ամենահինը և լրիվը, հնարավորություն է ընձևելու մասնագետներին՝ ուսումնասիրել հայկական միջնադարի հարսանեկան ձևերն ու սովորույթները և, համեմատելով դրանք 19—20-րդ դարերում կատարված նկարագրությունների հետ՝ ցույց տալ այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել այդ ձևերում 14-րդ դարից հետո ընկած ժամանակաշրջանում:

Հրատարակվող հատվածները հատկապես ուշադրով են այն տեսակետից, որ վկայություն են պահպանել կնոջ գնման (ղլխագնի) մասին: Պարզվում է, որ 14-րդ դարում հայկական ամուսնական ձևերի մեջ տակավին պահպանվում էին պատրիարխալ-սարկական սովորույթներ:

Ուշադրութեան արժանի է նաև անհանգաման հարցին վերաբերող վկայութիւնը: Մի կողմից գյուղամիջոցային ամուսնութեան զեպարուս պատկերներին եկեղեցի տանելու միջոցին ձիովոր ուղեկիցներին հանդես դալը (ձեռագիր, էջ 195ա) և մյուս կողմից եկեղեցուց ամուսնացողներին դուրս բերելու աջ ու ձախ կողմերից սրերով պաշտպանելու սխեմայի ձեւը (ձեռ. էջ 196ա), անհանգաման ամուսնութեան մնացուկի նետաքրքրական վկայութիւններ են հանդիսանում: Մրան իբրև լրացնող և հակընդդէմ վկայված է, որ հարսնատի մասնակիցներին հետադուրս էին ազդկա համայնքի մարդիկ, որոնք սովորութի ճետածայն շինողներն ինչս և ոչ թողուն (երթա) մինչև անունն» (ձեռ. էջ 196բ):

Հարսանեկան սովորութիւններին վերաբերող քննարկող նյութերի արժեքը հայկական ընտանեկան հարաբերութիւնները հանգամանորեն ասումնասիրելու անսակեանք՝ ակնհայտ է, ուստի մի կողմ թողնելով քարոզի եկեղեցական ներկայացումը, անհանգամանակ աստիճանական մեկնութիւնները, այստեղ ներկայացնում ենք քարոզի բոլոր այն համաձայնները, որոնք պարունակում են հարսանեկան ձևերի մասին վկայութիւններ:

Բ Ն Ա Գ Ի Բ

193ա Արդ, նախ սովորութիւն է ազգաց փեսային՝ խնդրել հարսն: Եւ կրկին կերպիւ ընտրեն՝ նախ ի յիւրեանց հաւատոյն, թէ նայ ջրիւստեանայ է և թէ այլ քրիստոնեայք, և ապա ի մէջ նոցա յընտիր և պատանական ազգէ մեծատանց և յաղտաց, զի զոն պարտա և զոհնիկ հայք...:

193բ ...Այսպէս թէ ընտրեցեն ջրիստոնիկայն զհաւատովն և զզորմամն և սրերայ ամուսնութեամբն ընտրեցան, զի եղիցին նման բարձրելոյն, որ առ Աբրահամ: Եւ ետես, զի ազգականքն ընտրեն և ոչ փեսայն...:

Երկրորդ. Սովորութիւն է, զի յետ ընտրութեանն երթալ խաւին և տան թոյս զինքի ի հայր և ի մայր հարսինն, և կամ ի համանմանս նոցիւն...:

Երրորդ. Սովորութիւն է՝ յամենայն տաւնի և տարեկանաց զնայ ի տուն հարսինն ընծայել և կերակրել: Չայս արար աստուած ի յարէն յայնմանէ, որ հանցաւ յԱբրահամ և ի Մովսէս, յամենայն դարու և ի ժամանակի ասաքեր մարգարէս բանիս և մարգարութեամբ, նշանօք և արուեստիք: Վասն որոյ և եկեալքն ի տուն հարսինն, պարտին նմանիլ մարդաբէյնն, զի կարացեն ա[ս] և հաշտեցուցանել դատար ազգիսն առ փեսայն:

Չորրորդ. Սովորութիւն է՝ զնայ քանանայիցն և տանել նշան և այն մասանի կամ ասարանջան կամ գինգ, որ ետ պատրումն, և կնիք առ հարսն և ի կամս նորա, մինչ զի այլ ոչ գոյ նմար քակել նոցա ի միեկանց...:

194ա Հիմեկերորդ. Չի յևս նշանացն սովորութիւն է տանել պատրաստութիւն հարսանեացն և առ զաւժիտան՝ հաց և միս [և] զինի և այլ ոչ ինչ, զի աւելի ինչ խնդրելն յանարսինացն է...:

Իսկ վեցերորդն. Կատարութիւն և կատարութիւն է ժամանակ հարսանեացն, որպէս և Քրիստոսի՝ ի ժամ խաչելութեանն: Եւ զի յերկուսին ժամուն ասնին հարէս Գ զունով՝ կարմիր և դեղին, կանաչ և սպիտակ: Եւ զհանդերձն փեսային և հարսին ի վերայ կեցալ ասնին նախ ի տուն հարսինն: Բայց զհարսինն զամենայն ինչ մերկացուցանեն ի նմանէ և ապա զորն սղեցուցանեն, իսկ փեսային ոչ նմեն, այլ ի վերայ հոյն զնորն սղեցուցանեն...:

194բ Իսկ երկերորդ. Չի ի ժամ հարսանեացն հրախրակ ստաքին ի տուն հարսին՝ առ աւետիս զայոյ հարսանեացն, զոր զեղջուկն աղուէս կռեն՝ վասն թագաբար գայոյն...:

195ա Ուերորդ. Չի սովորութիւն է, զի մինչև ի ժամանակ պատկին զալ և անուշ և ուտել՝ է մերձուորաց փեսային ի տան հարսին, իսկ յետ պսակին՝ այլ ոչ...:

Իսկ իմեկերորդ. Սովորութիւն է տանել ի զուն եկեղեցոյն բազում երգաւք և նուտարանաւք, մեծալայիք և քնարիք և երկվարաւք...: Իսկ ասաներորդ՝. Սովորութիւն է ի զրան եկեղեցոյն զհնահարկը՝ նախ մայրն ի փեսայն և ապա քանանայն զհարսն ի փեսայն և ապա անզրագարձեալ, և երկոքեանն յանձն անուն...:

195բ Իսկ մեծասաներորդ. Սովորութիւն է զի նարա[ւ]ս ուրեալ կարմիր՝ քնգ բամբակի (քնագրում՝ բանբակի) խառնեալ և երեք (քնագրում՝ երեկ) կցի շարձանեալ, մի կուզն կարճբովն խառն և երկուսն անխառն, միայն բամբակ (քնագրում՝ բանբակ), զոր մասնն փեսեղբարսն և քանանայն, հարսին քորսն և քանանայն, և նովաւ կապեն զեսաչն ի սրբանացն փեսային...:

Իսկ երկուսասաներորդ. Սովորութիւն է, զի արտաքոյ եկեղեցոյն յանձնեն, և ի մէջ եկեղեցոյն պսակին, և արտաքոյ եկեղեցոյն ասնեն զզորմ ամուսնութեան...:

Իսկ երեքուսասաներորդ. Սովորութիւն է պատարագաւ պսակել ժամամտաւ և ամենայն, որ ինչ պատարագին կարգն...:

Իսկ չորեքուսասաներորդ. Սովորութիւն է [և] պսակ անուսնել պսակ զնել ի զուրիս փեսային և հարսինն...:

196ա Իսկ ճեղկուսասաներորդ. Սովորութիւն է սոլիտակ հանդերձ փեսային սղեցուցանել և խաչ դաւախ կապել կարմիր՝ յետոյ և աւալի, մանաւանդ զի յետ ընթերցմանն արունել և զայն բմբել առ զինն հարսինն և զինն փեսային...:

1 Հեղինակը սույն կտոր ևս Թ-րդ է նշանակել, որ զըջական սխալ է: Մենք այն դարձնելով ասաներոց, նամագրաստախանորեն փոփոխեցինք հանրոց բոլոր կետերէ կամ տրոսերէ: 2 Ընց պատեղ է, որ երևում է անհանգաման նուագույն ձևի վերադարձը՝ երկ-սովորութեան ձևերից մեկը 1870 թ. նկարագրել է զանեցի Ա. Կ. Պեյլերյանն իր «Գինգ-կական հարսանիք և Հայաստան» գրքակիւմ, ուր նա ամբողջ հարձուգ զիտում է իբրև կողմերի մեծամտաւ — նախաստաքաւ: Հարսնատի մասնակից զինված, կեզմ պատեքազմ են մզում աստուրցներ փայտեբով, սրերով ու վասննեքով զինված, կեզմ պատեքազմ են մզում սպղկա կոզմի (զյուզի) հարսանեղծների զեմ (էջ 31—40)»:

Երկու զեզմուն էլ անհանգաման կամ կնի աշխատագիր ձեռք բերելու նախնական սովորութիւն փոքրերն հանդես են գային արդեն իբրտեանական ընտ.թ ասացած խաչ-զվարտութիւնները:

Իսկ վիշապաճեցրո՞ղ. Զի սուր է զարշեալ յաջմէ և յահեկէ ի հանկի յեկեղեցոյն...:

Իսկ երբևեակաճեցրո՞ղ. Զի նստին յաստիճան եկեղեցոյն և ամենեքեան պտր տակալ երկրպագեն՝ թաղաւոր զնա կարգալով...:

Իսկ ուրբաճաճեցրո՞ղ. Մոգորութիւն է ալ ոչ գասնալ ի տուն հ[ար]սին, ալ կրթան ի առ[ւ]ն չօրն փեսային...:

Իճեկաճաճեցրո՞ղ. Մոգորութիւն է տեղի յարձը նստել փեսային, որ ակնելու... տեսնին... բմեկ՝ թ մինչև յերկրոյ, իսկ երեկոյն առաջի իբրոցն ուտել սակաւ ինչ... սպա ուրեմն անմտութիւն է փեսային առաջի ժողովրդեանն ուտել ինչ:

Քասեցրո՞ղ. Զի ելաւ թիւն [օ՞րն] հարսան[ե]անց, որչափ նստի փեսայն յաստագասն՝ մանկունք նստատիւն տան հարսնքուերն...:

Քասեմկեցրո՞ղ. Զի յետ ետեմն աւուր... առնի պահն և ապա հրամայէ մեկ ըմբուրութեան յութեցրո՞ղ աւուրն...:

Իսկ զի մանապարհին կամ յալ զիգոյ կամ ի միտտունն հալածեն, և կայնուն զիկերն մանապարհաց, և խնդրեն ինչս և ոչ թողուն մինչև անուն...²:

106ր

1. ԽՈՉԻԿԱՆ

ՄԱՏԹԵՆԱ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Հայ միջնադարյան մատենագրութեան պատմութեանը նվիրված ձեռնարկներում և բաժնախրատիկան աշխատութեանը ձեռնարկում զեռնս շատ կան թատցիկի նշանակությամբ այնպիսի գործիչների անուններ, որոնք ճանաչված ու անվանի լինելով իրենց ապրած ժամանակներում, այժմ լիակատար մասնագրության են մատնված: Այդպիսի գործիչներից մի քանիսի ձեռագիր աշխատութեանը ուսումնասիրութեանը ստանալից ստացված աղբյուրները վկայում են այն մտային, որ մեր ժողովրդի պատմության նաև կապված մի շարք շուտաբանված ու կրճատ հարցեր ներառված է պարզաբանել նեցայլ մտացված նեղիմանիների աշխատութեանների միջոցով:

Այդպիսի մի մատենագիր է ժի՛ր գարի վերջին և ժե՛ գարի առաջին տասնամյակներում ապրած ու սակզագործած Մատթեոս Զուգայեցին:

Միջնադարում Մատթեոս Զուգայեցին համարվել է նշանավոր հայ մեկնիչներից մեկը. նրա աշխատութեանը զգալի չափով բնագործակից է ու տարածվել են և՛ Հայաստանում, և՛ հայաստ գողթավայրերում:

Ժե՛ գարի նեղիմանի Վարդան Բաղիշեցին՝ ՌՈՒ ոք են արարեալ զյուժմանս և զբարուածոյս աստուածաշունչ գրոցց զուցակի մեջ, Գր. Տաթևացու և Առաքել Սյունեցու աշխատութեանների թվարկումից անմիջապես հետո, սեղ է հատկացնում Մատթեոս Զուգայեցուն և տալիս նրա կարևոր աշխատութեանների ցանկը, այսպես՝ «զ՛ուկասու զլիսոյ քաղուածուն և զճոհաննու զլիսոյ փաբր քաղուածուն. զՓորձոց քաղուածուն և Մ՛ քարոզ Մատթեոս Զուգայեցին է արարեալ՝ աշակերտ Փրիգորի Տաթևացոյն»¹:

1750 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում Մատթեոսի «Վասն քարգութեան բանի, սոսկոյ ի վարդապետութենէ՛ սուրբ հօրն Եւաղրեայ...» աշխատութեանը, հրատարակիչ Հովհաննես զպրի սեղզածմ՝ «Փրիք ութն խորհրդոց մեղաց, արարեալ սրբոյ հօրն Եւաղրեայ, և հուսաքեցեալ ի մի յոհնաջան երկամբ Մատթեոսի վարդապետի բանասիրէ՛ խորագրով:

Մտիկարյան հայագետները անուշադրութեամբ ու արհամարհանքով էին վերաբերվում միջնադարյան հայ մատենագրութեանը ըստ այն գործիչների նկատմամբ, որոնք քայքայում ու անհաշտ հարձակումներ էին գործել կաթողիկե եկեղեցու զագափարախոսութեան և Վատիկանի կողմից Արևելք ուղարկվող պրոպագանդիստների դեմ:

¹ Զեռնագրի այս թերթի ներքին մասում ու պատմված լինելով՝ որոշ բուսեր չեն վերանայում:

² Անկնարկված է այն սոփոքութեանը, երբ զյուզեզուր հարսնասի մամանակ, հարսին զյուզեց զուրբ բերելն, սեղաջի երեստաբզանքը խմբովն մի որևէ նպատագոր ճանապարհի վրա կանգնեցնում էին հարսնասի մամանակիցնեքին և խմբանք ու խորտիկներ էին պահանջում: Մերժում ստանալու դեպքում (իսկ զոս հասնա էր պատահում, որովհետև հակասակը թուլութեան և ոչ բաժնութեան նշան էր համարվում) սեղիս համայնքակիցները յարջ կռիվ էին սկսում, սրբ հնում երբեմն արյունահեղութեան էր հասնում:

* Զեկուցված է Մատենագրութեան VIII գլխական սեւեբային, 1956 թ. փետրվարի 9-ին:
¹ Մատենագրութեան, ձեռ. № 8444, էջ 182ա-182բ:

Հանրաձայն է, որ կախվածությունը և նաև ունիթոնների գեմ հատկապես ուժեղ պայքար ծավալվեց Հայաստանում ժՊ դարի երկրորդ հինամյակում, Տաթևի գյուղացի նիւնադերներ ու սիկապոլիտներ Հովհան Ռոտմեցու, Գրիգոր Տաթևացու և Նրանց բազմաթիվ աշակերտների կողմից։

Այդ աշակերտներից էր նաև Մատթևոս Զուգայեցին¹, որի մասին Վատթևոսի հայերեն գրքում թանձր է երկատարանոց բնագրքով աշխատության մեջ Վ. Զարբանյանն անդամակցա է համարել զրկ բնագրքի մի-երկու տող՝ Իսկ մի այլ միջիմարան՝ բանասեր Բ. Սարգսյանը, առանց լրջորեն ուսումնասիրելու նրա աշխատությունները, համարել է նրա լեզուն Վանից, մեկնարանությունները Վանից և հայտարարել, որ նա իբր, Տաթևի գյուղացի գույս սրբագրվելով բնվարդներ ունեցած պիտի չլրջան՝

Վ. Զարբանյանի աշխատության առաջին տպագրությունից (1878 թ.) անցել է շուրջ 80 տարի, բայց, ցավոք, շատ անհշան բան է արված Մատթևոսի կենսագրության և նրա ֆորմա ձևադրական հարուստ մասնագրության ուսումնասիրման ուղղությամբ։

Միակ ուշագրության արժանի աշխատանքն այս բնագրքում անկասկած է համարել հանգուցյալ մեծանուն ու բազմալատակ հայագետ Լ. Աճառյանի Վեյսոց անձնանունների բառարանի- 3-րդ հատրում Մատթևոսի մասին գրված նոգովածը Այստեղ հայերեն ձևադրերի նրատարակված ցուցակներից համարված են նրա աշխատությունների վերնագրերը, մի երկու խոսք է ստված նրա կենսագրության մասին, ինչպես նաև նշված են հայագրական բոլոր այն փոքրաթիվ ուսումնասիրությունները, որոնցում, այս կամ այն տարիով, ներառված է Մատթևոսի անունը։

Մեր առչն համառոտ հարորդամք փորձում ենք Մատթևոս Զուգայեցու մեզ հասած բոլոր աշխատությունների և նրա մասին առկա մասեկ-նադրական տվյալների օգտագործմամբ առաջին բային անել շատ կարեւոր ու առարկայական արժանի և նեղաբարձրամ այդ մասեկնորի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու ուղղությամբ։

Մատթևոսի ծննդյան թվականի մասին սկզբնաղբյուրները չեն պահպանել որևէ տվյալ։ Արպես ճանաչված մեկնել նա հրատարակ է իջել ժՊ դարի 90-ական թվականների սկզբներին, ուստի, կարելի է ենթադրել, որ ծնված պետք է լինի նույն դարի 50-ական թվականներին։

Բ. Սարգսյանը Եվազր Պոնտացու մասին գրած ուսումնասիրության մեջ, հարեանցիկն անդրադարձնելով Մատթևոսին, գոյություն ունեցող նրա ներկայացրած է համարում նրան²։

Մական մեզ հայտնի բոլոր աղբյուրները³ միասերան վկայում են այն մասին, որ Մատթևոսը Զուգայեցի է։

ԺՊ դարում հին Զուգան փոքրիկ մի դյուզաբաղաք էր։ Գտնվելով Արաքսի նշանավոր այն կամուրջի մաս, սրով անցնում էր միջազգային

¹ Մատթևոս փոքրգրական վեցերեսյ տարջութեան վրայ Մեկնութեան մը (ունի) յիսուն այլ և այլ Փորոզը, յորոց էրեք միայն հասած են առ մեզ, Աեւասարձաց և Գործոց համառոտ Մեկնութեանը, Եւազրի վրոց Փորոզում մը; (ՎՊատմ, հայերէն գրքութեան, Բ., էջ 219—220)։
² Սրոյն հօրն Եւազրի Պոնտացոյ փորք և մասեկնորութեանը, Վեւեակի, 1907, Աստղարան Բ. Սարգսյանի, էջ 28Ը—28Թ։
³ Նույն սեղում, էջ 28Թ։
⁴ Փոյժմա Մեծափեցի, էջ 30—31, Վ. Բազիլեցի, ձեռ. № 8444, էջ 182ա—182բ և այլք։

նշանակություն ունեցող կարտվանային ճանապարհներից մեկը⁴, պետք է ենթադրել, որ դեռևս այդ ժամանակ Զուգան, այս կամ այն շափով, վեր էր սովորել ստեղծական մի հանգրվանի, իսկ Զուգայեցիները, արպես առեկարաններ ու միջնորդներ մասնակցում էին այդ առևտրին։ Թերևս նաև գրանավ պետք է լացատրել այն հանդամանքը, որ Մատթևոսի աշխատությունները ին են առևտրի ու արհեստագործություն մասին ուշագրավ բազմաթիվ տվյալներով։

Մատթևոսի արարքեր աշխատությունների մեջ գրանցված են տվյալներ, որոնք նախադրություն են ապրիս երթուհանելու, թե մեր հեղինակը իր կյանքի առաջին շրջանում (մինչև Տաթևում հաստատվելը) շրջադասություններ ու ճամփորդություններ է կատարել Հայաստանում և հարևան երկրներում։

Ավելորդ չի լինի ծանոթանալ նրա աշխատությունների վերը ակնարկված տվյալների հետ։

Այսպես, Կաստանդնուպոլսում լինելու մասին Զուգայեցին խոսում է իր քաղաքներից մեկում, որը կրում է ՎՊարոզ սուրբ խաչի... խորագրեր Այստեղ նա պատմում է, թե ինչպես արարական արշավանքների մասնակի 4. Պոլսը փրկվել է կործանումից և աշխատում է համարել իր ունիթոլիքներին, որ այդ կատարվել է սուրբ խաչի զորությունով։ Այս կապակցությամբ ի միջի այլոց, նա սասում է նաև, որ Քիմ սկանտուս եղևալ սուրբ աղեկացն (4. Պոլսի) և համբուրեալ⁵։

Քիմ յաեետարանէն Յովհաննու աշխատության մեջ Մատթևոսն աշխատում է բացատրել թե՛ս ճայնադությունը, և հայտնում է, որ դա ըստ ինքյան բան չի նշանակում, զի բան է երկրէ, որպէս Սեբաստացիք կան սանն, և Կարնոյ քաղաքացիք աի, Արմիշեցիք՝ անն, իսկ Սյաթեցիք, որ է Բիդուսիք՝ օ սանն յամենայն բանի⁶։

Գծամք է պնդել, լայն ճայնակիան է ենթադրել, որ մեր հեղինակն անձամբ եղել է Սեբաստիա, Կարին, Արճեշ և Սյաթ քաղաքներում, և իբ այնչևած վայրերում ուսումնասիրել է մոզովրդի լեզուն, բանն ու բանը։

Նրա քննասեր ու խուզարկու բնավորության մասին ավելի ցայտուն վկայություն է պահպանված ՎՊնունի զործոց առաջելոց աշխատության մեջ։ Այստեղ առիթ է ներկայանում խոսելու գողի (բորսաություն) նիվանդություն մասին։ Մոխաց երկրում գողի ցավով աստաղդներ շատ սանելով և ձգտելով որոշիլ զրա հարուցիչները, Զուգայեցին ուշագրություն է դարձրել մոխացիներին սննդի վրա ն սարգելով, որ նրանց սննդի մեջ մեծ տեղ է բռնում ծանրամարս կորկիկ հացը, մեղրն ու ընկույզը՝ եկել է այն եզրակացություն, որ թայս (ցաւն) անկի ի սաք կերտիրոյ՝

¹ Այդ կամուրջի մասին 16-րդ դարի թուրք պատմիչ Շարաֆ-բեկը գրում է հետևյալը. «Կամուրջը նիւնած է առջած ժայռի վրայ անբախտ ամբարձրամբ, վերեր գործանալի և արթի բարերը միացած են այնպես կոնստանթնոյ և ամուր կերպով, որ անհասնողացն անորտարակնը պետք է գործանու։ Կամուրջն անբան բարբը ու երկայն են, որ նիմի հիմքերի սրտեքը 60, մյուսինը 50 պարսիկան բոցուկ է։ Կամարի ստորին մասումը չիսված է բարձրանալու, իսկ երկու ծայրումը զանք՝ գործանալի զեղեցիութամբ» (ՆԱ, 1609, էջ 65)։
² Ձեռ. № 2229, էջ 230ր։
³ Ձեռ. № 3571, էջ 34ա։

ի մեղքն և յընկազույն և ի կրեկէ հացոյ: Եւ այս է պատճառն Մովսէս երկրին, յորում ըստչումք զսոյիք լինին:»¹

Վերոհիշյալ «Բնութիւն գործոց անաքելոց» աշխատութեան մի այլ հատվածից, որի նաև առիթ կուենանք ծանօթանալու այլ կազմակերպումի, պարզում է նաև, որ մեր հեղինակը համարեն շրջագայն է նաև Մաշենի շրջաններում:

1393 թվականից մեկ կամ մի քանի տարի առաջ Մասիեսում եղել է նաև Աղթամարում², Նրա աշխատությունների ավելի մանրակրկիտ նետազոտության ճանապարհով, թերևս կարելի կլինի բնագրածակել մեր հեղինակի ճանապարհորդութունների շրջանակները: Մակայն մեջ բերված այգու-նենը էլ միանգամայն բաղադար էն այցոյց տալու համար, որ հանձնինս Մասիեսու Զուղայեցու մենք ունենք մի մասնագիր, որը բնավ չի բավարարվել վանական սահմանափակ սխեմատիկություններով, այլ շրջագայնով Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս: շփվել է աշխատավոր ժողովրդի նաև, ծանոթացել է նրա նիստ ու կացին և պտղումունքներին, ուսումնասիրել է սոցիալական կյանքն իր տարրեր կողմերով և, ննչպես կասենք սուրբ, իր աշխատությունների մեջ լայնորեն օգտագործել է իր միջբաժնի գիտելիքներն ու ուշագրավ դիտողությունները:

Որտեղ է ստացել Մասիեսու Զուղայեցին իր նախնական կրթությունը, չգիտենք: Պարզ է սակայն, որ նա իր երիտասարդական տարիներին ուսումնասիրել է ոչ միայն հայ մասնագրությունը, այլ նաև արաբական և արաբերեն գրավոր լեզվին, ծանոթացել է մասնագրականների կրոնական գրքերին այն աստիճան, որ անհրաժեշտության դեպքում կարողացել է քաղվածքներ անել նրանցից³ և տալ յուրովի մեկնաբանություններ:

Բարձրագույն կրթություն Մասիեսուը ստացել է Հովհան Որտանեցու և Գրիգոր Տաթևացու համալսարաններում, «Սշակերտ ական Յովհաննու Որտանեցոյն», «նուսաս և յետին աշակերտի ետամեծացն Յովհաննու և Գրիգորիչ, «նուսաս Մաթէոսի վարդապետի՝ աշակերտի ետամեծին Գրիգորիչ», «չաշխատութենէ վարժապետին իմս Գրիգորի մեծի» և նման այլ արտահայտություններով, որ հանդիպում են Մասիեսուի աշխատությունների վերնագրերում և հիշատակարանների մեջ, նա իր նաղանքն է մատուցում իր նշանավոր ուսուցիչներ՝ Հովհ. Որտանեցուն և Գր. Տաթևացուն:

1391 թվականին երնջակի Աղրախունյաց վանքում Զուղայեցին շարագրում է թվական ունեցող իր աշխատություններից անդրանիկը՝ «Մեկնութիւն Դուհասու աւետարանին»: Պարզ է ուրեմն, որ Գր. Տաթևացու մանկավարժական ինքնուրույն գործունեության սկզբից (1386 թ.) ընդամենը 4—5 տարի նետ, մեր հեղինակն արդեն դուրս էր եկել աշակերտական շրջանից և շարագրում էր մեկնագրական աշխատություններ:

¹ Ան., № 1402, էջ 131ա
² Ան., № 969, էջ 307բ:
³ Ենթադրում ենք, օրինակ, որ նա պետք է եղած լինի նաև Հոսոսու:
⁴ Այդպիսի քաղվածքներ գտնում ենք նրա «Վասն հարցմանց անօրինաց աշխատության մեջ» բերնի մեկ օրինակ. «Քայն որ ի մեր մասքն գրած է ի իւ (27) վարպն, թի Յիսու ասուլույսն և քայթթաթուհու...», և այլն (Ան., № 3854, էջ 298բ):

նույն այս տարիներին (1393-ից առաջ, հավանաբար 1392 թվականին) լինելով Ախթամարում, Մասիեսուը վեճի է բռնվել մասնագրական մի գանձմանի նաև և շարադրել է այդ վեճի բովանդակությունը ի խնդրո Նիրբան գյուղի սանուակր Արիստղոսի, «Վասն հարցման անօրինաց. դանադան պատասխանիք» խորագրով:

Վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, որ մեր հեղինակը մի քանի 90-ական թվականների նեց առաջին տարիներին, դուրս գալով ուսումնասիրան շրջանից, ճանաչված վարդապետ էր Մյունիքում և Վասուրաքանում:

Մանր տարիներ էին գրանք հայ ժողովրդի համար կանխ-թամուրի արյունաբերու գործերը ստացատակում էին Հայաստանի նախնայինն ու շրջանների, սպանում ու դերնվարում խաղաղ քնակչութանը, թայանում և ավերում գյուղերն ու քաղաքները:

Եի ժամանակի նեղութեան ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն նուրն հարափայն թամուր կոչեցեալս— գրում է այդ մասին Մ. Զուղայեցին 1395 թվականին, Տաթևի վանքում:

Թամուրի գործերը ամբողջ 13 տարի («ԵՊՄ ամէն մէնչէ ի ՊՅԼ ամ թուականին») պաշարման մեջ էին պանում Երնջակի անտոիկ բերդը, ուր գտնվում էր Ջևախրյան Անիդի որդի սուլթան Քանկը:

Ուշագրավ է, որ Երնջակի բերդում պաշարման մեջ էլ եղել նաև Մասիեսու Զուղայեցին Այնտեղ է շարադրել նա Հակոբ Մծրնա հայրապետին նվիրված մի գեղեցիկ տաղ, որտեղ ակնարկներ կան նաև հայ ժողովրդին հասած ծանր նաղամանների մասին.

«Մեծի հանդիսի ատուր
Աս քեզ պրպատիմ Յիսուս
Մուրբ բզլայրապետն Յակոբ
Աս քեզ բարեխուս քնկալ,
Աստանար վրտանի հանուլ,
Ով սուրբ հայրապետ քնարեալ,
Զորդիս քո գերի վարեալ,
Զուտն քո հանդիսի ցրրեալ...», և այլն⁴:

Երբ և որքան է Երնջակում պաշարման մեջ Մացել մեր հեղինակը՝ չենք կարող որոշել: Հայասնի է սակայն, որ 1393 թ. նա գտնվում էր Տանուսիսարտիս անապատում՝ Տաթևի վանքին դեմ աս գետ, ձորակի մյուս կողմը: Այստեղ «նուսակ լսիկ ի ասն» նա շարադրել է «Վասն քարոզութեան թանի» իր աշխատությունը:

1395 թ. նրան գտնում ենք Տաթևում, ինչպես ինքն է ասում՝ «պանդարտական կենօք» — մի արտահայտություն, որը վկայում է այն մասին, թե Մասիեսուը իրեն պատահական ու ժամանակավոր հյուր էր համարում այգուկը:

¹ «ԵՊՄ գրքի հայերեն Անապարիի հիշատակարաններ», կազմեց Լ. Խալիպան, Երևան, 1930, էջ 612:
² Ան., № 423, էջ 36բ—37բ:

Մեկայն, ըստ երեւոյթիւն, նենց այլ թվականին նա մշտապէս հաստատում է Տաթևում և Նշանակալից զեր է կատարում Տաթևի նամալարանի կանգնում: Շուտով նա այնպիսի փորձառութիւն է ձեռք բերում դասախոսական առարկայում, որ մի-քանի տարի անց Գր. Տաթևացին նրան է արժանալոր համարում լինել իրեն ժառանգորդը, և Մատթեոսը, աշակերանների խնդրանք և բոլորի հանութեամբ, նստում է շշաթոտ սելէտուկեանն¹, այսինքն՝ դառնում է Տաթևի նամալարանի ղեկավար վարդապետներից մեկը:

Այս մասին տվյալներ է հազարում շատ կողմերով նետաքերական իր հիշատակարանի մէջ Թուսա Սյունեցի գրիչը, Ծար գավառի Բարաթաւա գյուղում, 1402 թվականին:

Նա գրում է, որ Գրիգոր Տաթևացին տունկով որդի նորադատ և ժառանգ վարդապետութեան իւրոյ՝ զճարակալն ամենայն բարութեամբ և գորդարեան ամենալի շնորհիւ՝ վարդապետական խոնձութեամբ և փխխտութեամբ արհեստի՝ գախտանն ընդզէմ՝ ներձուածողաց՝ զվարդապետն Մատթեոս, զոր յայտ ամի (=1402 թ.), կամակցութեամբ սուր հողոյն, և ջանիւ վարդապետին Գրիգորի, և աղաչանալք զբոց աշակերտակ անձանց՝ նստաւ յաթոտ սելէտուկեան, զոր սուր աստուած վաշիւլ տացէ, և սյունեցէ գոտայ հայր որով բերկրեալ՝ պակի պարձանաց կաթողիկէ եկեղեցւոյն²:

1407 թվականի ինքնադիր մի հիշատակարանից պարզում է, որ Մատթեոսը միաժամանակ վարում էր Տաթևի վանքի վանահայրութեան պաշտոնը՝ եւր ի շար մասու եզէ քաղաքապետ եկեալ ի սուրբ սխաս Եւստաթիւն — գրում է նա³:

Ժամանակի քաղաքական անցուդարձերի արժեքավոր նկարագրութեամբ Մատթեոսը մի այլ հիշատակարան է շարացում նույն՝ 1407 թվականին, ոմն Մրճարաբաշահի պատվերով ընդօրինակած ավետարանի վերջում: Նա հայտնում է, որ ձեռագրի ընդօրինակութեամբ կատարվել է Քի գրան և ի նեց ժամանակիս, որում ազն նետողաց անշինջ կորաւ և վախճանորդ նորին իշխեց քաթոս Աստուածաբանի թորգածովն Չարա-Ուստաթ անուամբ. որ և մարտեաւ երկու անգամ և յազթանաբալ գոմն ի թոտանց շար գաղանիս թամուրին՝ շարաբարու, անպատեւել և շարաբար՝ անուամբ Արևուրթաբ: Եւ այն ևս ի վերին խնամոցն ամենապարտիւն աստուծայ, որ աղառեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ և դամենայն ազլ և դամենայն լեզու է ներքս նոցա հնազանդ և զերի կային, որում աղառեաց զմեզ փրկիչն Յիսուս Քրիստոս...⁴:

Մատթեոսը, ինչպէս և ոզ ճայ ժողովուրդը, որոշ նույնք էին կառուցում թմարայանների պարտութեան նեա Կարծում էին, թե Սպարթեմանում և Հայաստանում իշխանութեանը գրաժամ նոր արբարակները բարոյգրելու են ժողովրդի ծանր վիճակը: Մեկայն բոլորի նեա մեկտեղ, Մատթեոսը ևս

շատ շանցած համոզվեց, որ անհիմն ու սին էին բոլոր այն ապաստիքները, որ ակնկալում էին Կարա-Կոյունլուների հողթութեան աննշալթեամբ:

Քաղաքական խորին նուսխարութեան ու նպեկան ծանր վիճակ էր պարունակում 1410—1411 թվականներին Մատթեոս Զուգարիցին:

Մասյ գաւջներով է նկարագրում իր այրած օրերը մեր հեղինակը Գր. Տաթևացու թագման կաղակցութեամբ արտասանած զամբանականի մեջ, ինչպէս նաև իր զլուխ գործոցը կազմող Քինուութիւն գործոց ասաբիւց՝ արժեքավոր աշխատութեան ընդարձակ հիշատակարանում: Մեջ ենք բերում այդ հիշատակարանից մի ուշադրով հատված.

Քի սղաթնի ազլիս հայկազեան և ի վերջին զարուս ստուցեալ ողբատարածամ կորուսելոց՝ մեծի և փոքու, և ի ասորասուղիս դասուն քահատարական, և ի հաբեալ ժանեաց քանաբիւտին, յայտ թուականի Պի (1411), ի բունակաւութեան ազլին թորգածեան (իստ՝ թուրքմեն Կարա-Կոյունլուներին) ... որ և իշխել ետ զառաջին շարիս թամուր կոչեցեալ կալին և ի ճոյն վասնզի գոլով...: Յայս դասութեան ժամանակս ես՝ նուստ և խեղզաման ի մեղս Մատթեոս, յեանեալ իմաստից և ազէտս ի գիտնակասաց և մարմնակալանացեալս որբ ի յիմ հարաբարասացին նարանց՝ հողեկանաց և մարմնակալանաց, որ և յայտ ամի եզե զրաւ կենաց մեծ բարունոյն իմոյ Գրիգորի... որոյ սուզն պաշարեաց զիս և ես մոտանալ զստորեայ կենցաղա... և այլն⁵:

Մխիթարական ոչինչ չի տեսնում իր շրջապատում մեր հեղինակը ժողովրդի վիճակը ծանր է, հարկանանութեան անասնելի, հայ իշխանները միմյանց օժանդակելու և զորավիզ լինելու փոխարեն՝ կալում են իրար դեմ, նպեկարեանութեանը անբարոյականացած է և շահաներ, ամենուրեք արքում է բունութեան, ավաղակութեան, խաբարայութեան և անբարոյականութեան: Այս բոլորի մասին անշախտութեան մեջ Մատթեոսը, իսկ Գր. Տաթևացու թագման աթիվ արտասանած զամբանականում իր ժամանակի վիճակը նկարագրում է նետեալ նուստա տողերով. գլխենեղեան արագելն զմիմեանս, խաժատեն զմարմնս իրերաց, քամբասն գոտաջնորդս իւրենից, արանջան ի տանուսեանն իւրեանց. ի մարմինս մաշին, ի միտս անշինի, ի հարկանանաց ձանձրուանն, յանօրինաց աստաղին, զսխ լան, զգիշերն ողբան, բարիքն արժմին և շարացեալն ուրախանան: Եւ այս ամենայն վասն մեղաց մերոցն⁶:

Անձնական իր կյանքում ևս դասութեաններ է ձաշակում Մատթեոս Զուգարիցին, նա բողբոսում է իր աշակերտների ծուլութեանից և միաբանակից քուտ եղբայրներիս նյութած զավիրից: Ե՛լլ և անմեղադիր լինել ազլաշեմ, — գրում է նա իր վերջին հիշատակարանում. — զի դասութեան ժամանակիս և աշխատանք (կամ ժողովարանք) շար խորհրդոց շփոթեալ աղտեղաբոցին զնոյի և զմարմին իմ, մանաւանդ ծուլութիւն անզութ անհնազանդ աշակերտաց վիրաւորեցին զիս, և յաւէտ վիշաք ի սուտ եղբարաց, որք անհրամեշտ վատարութեամբ դանաացուցին զիս. վասն որոյ ի ոչ կարացի զբոմանդեանի մակզրել, այլ զապաւս ի բազմաց...⁷:

1 Հուն. ἡ οὐλομένη — կատարյալ բառից:
 2 Ե՛մե գարի հայերեն նետաքերի հիշատակարանները, մասն տաւշին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Նաչկելյան, Նրեան, 1953 թ., էջ 25:
 3 Նույն տեղում, էջ 27:
 4 Քի գրիքի հիշատակարաններ, էջ 26:

5 Քի գրիքի հիշատակարաններ, էջ 119:
 6 Նույն տեղում, էջ 120:
 7 Նույն տեղում:

1411 թվականից հետո Մասիտու Զուգայեցու մասին որևէ հիշատակություն չենք գտնում: Այդ ժամանակ նա արդեն այնքան ձեր կամ հիվանդ է եղել, որ իբրև համարել է կանգնած էի գերեզմանի դրան¹: Երբ են բացվել նրա առաջ այդ գտնները չգիտեմք, ուստի և ծննդյան տարեթիվը նա մեկտեղ առայժմ տնայա է հնում նաև Մասիտուի մահվան տարեթիվը:

Մասիտու Զուգայեցին ապրեց ստեղծագործական կարճատև կյանք: Տարեթիվ կրող նրա աշխատություններից անդրանիկը, ինչպես արդեն ասացել ենք, շարադրված է 1391, իսկ վերջինից՝ 1411 թվականին: Աշխատված մեր հեղինակը ստեղծագործել է ընդամենը 20 տարի: Սակայն այդ երկու եզրան ու գծարը տասնամյակներում նա շարադրել է պատկանելի քանակություն մեջ աշխատություններ, որոնց տարողական քանակը, Հայաստանի նազարեթի, ապիտ հեք ստորև, հնարավորության գեղարտ նշելով նաև յուրաքանչյուրի գրություն տարեթիվը և շարադրման վայրը:

1. «Ե զլիտյն Դուկասու հստարամն բանից և հուլով քարոզք ի մեկնութենէ Իգնատիոսի հայոց վարդապետի, ժողովեալ աշխատութեամբ Մարտիակ աշակերտի Գրիգորի»²

Շարադրել է Երնջուկի Ապրակունյաց վանքում, 1391 թվականին³:

2. «Յովհաննու Որոմանեցոյ աիկեքերալոյ քարուհապետի արարեալ բան յաւետարանէն Յովհաննու, որ ասէ՝ Ի սկզբանէ էր բոցն և բանն էր առ աստուած»

Չնայած վերնագրում սրպես հեղինակի գրված է Հովհան Որոմանեցու անունը, բայց աշխատությունը, ինչպես պարզվում է հիշատակարանից⁴, հիմնականում շարադրել է Մասիտու Զուգայեցին:

Հնդհանրապես Մասիտուը սիրում է իր աշխատությունների վերնագրերում նշել այն հեղինակների անունները, որոնցից այս կամ այն չափով օգտվել է այս կամ այն աշխատությունը շարադրելիս:

Մասին աշխատության գրության թվականը որոշ չէ, սակայն կարծում ենք, որ շարադրված պետք է լինի վերահիշյալ՝ «Ե զլիտյն Դուկասու հստարուհն բանից» աշխատությունից անմիջապես հետո, որովհետև հիշատակարանում հեղինակը նայտնում է, «որ և այս տեսութեան բանի ընդ նախասացեալ մեկնութեանն, որ քառ Դուկասու աւետարանին է՝ դիցի»⁵:

¹ Ժն գրքի հիշատակարաններ, էջ 121:
² Օգտագործել ենք № 5322 ձեռագրում ընդգրկման (էջ 58ա—154ա) ընդգրքը: № 1345 ձեռագրի մեջ աշխատության վերնագրը փոքր ինչ տարբեր է. և չնայած այդ նկատարին ընդգրկման է ուշ շրջանում (1607 թ.)՝ նրա հիերարք մասը այնչև նույնական է թվում. «Ե զլիտյն Դուկասու աւետարանին, ի մեկնութենէ Իգնատիոսի արքայ վարդապետին Հայոց, որը յիտյն ես՝ Մասիտու վարդապետս, աշակերտ սեանն Յովհաննու Որոմանեցոյն ժողովեալ հուսաբեցի և արաբի գոյս քաղուած գիրքս առ ի յոյտս ուսումնասիրաց անձանց» (էջ 6ա):
³ Ժն գրքի հիշատակարաններ, էջ 591—592:
⁴ Ժն գրքի հիշատակարաններ, էջ 121:
⁵ Տես լրբով՝ Ժն գրքի հիշատակարաններ, էջ 121:

3. «Մարտիակի վարդապետի, վասն հարցմանց անօրինաց զամազան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտն Արիստղոմ մեծ ամունուէրն Շիրիխայն»

Աշխատությունը շարադրել է «ի գրան սրբոյ խաչին ի կղզջն Ախմամարայ, ընդ խոսելն մեր ընդ ֆատալիկալը և պիղծ գտնիշմանին Այի կոչեցելոյն, որ և յետոյ նա սպան գիտնողիկոսն Ախմամարայ գտէր Զաքարիան»¹:

Ախմամարի Զաքարիա Բ. կաթողիկոսը նահատակվել է 1393 թվականին, ուստի աշխատությունը գրված պետք է լինի 1393-ից առաջ:

4. Կանձեր ու սաղեթ
ա) «Տաղ ազնիւ (Յակոբայ Մծրնայ հայրապետին) ի Մարէնս վարդապետէ»
սկ. «Մեծի նունգիբն աւուրս...»

Շարադրել է Երնջուկում, պաշարված լինելով Քամուրի զորքերի կողմից. ուստի՝ 1388—1399 թթ. ընթացքում, թերևս մինչև 1391 թվականը: Տաղը ձայնագրված է բարդ ու բազմաբանակ խաղերով²:

բ) «Կանոն երևման խաչին»
սկ. «Բօհակից սրգի շար քս չըգաւրի...»

Տների սկզբնատուերով նաղվում են հետևյալ բաները՝ «Ե Մաթէոսէ, խնդրեաց Գրիգորն (Մերկնց)»:
Գանձն ունի սաղ ու հարգարակ. որունք նույնպես ձայնագրված են երաժշտական ճօն խաղերով³:

դ) «Կանոն մեծանայ կիրակիի»:
սկ. «Միակից անուար Տէր և զարուար...»

Աղբուստերոս՝ «Մաթէոսի է. խնդրեաց Գրիգոր»⁴:

դ) «Գանձ մեծի երկուշարարին»
սկ. «Ի սկզբան էին Արարեալ գերկին...»

Աղբուստիքոս՝ «Ե Մաթէոսէ, խնդրեաց Գրիգոր»⁵:

¹ Ձեռ. № 960, էջ 107—112բ:
² Ձեռ. 1և4. № 429, էջ 46բ—47բ:
³ Ձեռ. № 429, էջ 255ա—258բ:
⁴ Նույն սեղան, էջ 261ա—262բ:
⁵ Ձեռ. № 474, էջ 152ա—157ա:

և) «Մեկեդի անոյշ (սրբոյ հայրապետաց զ. ժողովոցն) ի Մարէնս վարդապետն»

սկ. «Միայն բանին հար իմաստանջ Մասայ վախճուչք արժանիք պատուոյ...

Ակրտոնքոս՝ «Մաթէոսի է երգս այս, նոր է դրեալ»¹ Այս գանձերի ու տաղերի մի մասը, ինչպես ասացինք, ձայնագրված են երաժշտական ձևի խաղերով, մի նունգամանք, որ իրավունք է ստիւն հարձելու, թե Մասթէոս Զուգայեցին եղև է ոչ միայն բանաստեղծ, այլ նաև երաժիշտ-կամպոզիտոր:

5. «Մատթէոսի վարդապետի աշխատասիրեալ վասն քարոզութեան բանի, ի վարդապետութենէն սուրբ հորն եւազրեայ, որ միաք անպատուի կալի և ի հորին վարուցն ճեռուղէ սրբոյն Նեղոսէ, որ ցտն և ցիբ զայր ի բանն ճոցա՝ հաւարեալ ի մի ի պէտս բանատէր անձանց»

Շարագրել է Տանձափարտի անպատում, 1393 թվականին²:

6. «Նուստա Մարէնս վարդապետի՝ աշակերտի եւամեծիմ Գրիգորի աշխատասիրեալ տա ի հուարումն բանից, որ հայի առ 9 (6) աւոր գործս աւտուռոյ, ի խնցրոյ Սարգիս կրեմաւորի, ի բանն Սողոմոնի, որ ապ՝ Ամենեցուն հարապարպեանն ուսոյ ինն իմաստուրիւն»

Շարագրել է 1395 թվականին, Տաթևի վանքում³:

7. «Վասն ծամանակաց զիւնելոյ զբրբանն»

Սիւքրանիկ փոքր աղյուսակ է, որով որոշվում են եկեղեցական ու քաղաքական կարեւոր ճանաչված իրադարձութիւնների թվականները՝ ջր-հեղեղից և այլ զեղբերից հաշված:

Շարագրել է 1402 թվականին, համարաբար Տաթևում:

Ձեռագրերում (օրինակ № 3554, էջ 293բ—295ա) բնագործնակված է Մատթէոսի աշխատութիւնների շարքում, բայց հեղինակի անունը վեր-նադրում չի նշված:

8. «Ետրին Մատթէոսի վարդապետի ներբողեան ողբերգարս, ոգեալ ի բաղումն երջանիկ քարանպետին Գրիգորի: Ընդ նմին յիշատակեալ զողջ լալեաց կոտորածին, որ ի Վրացումն՝ ի Փայտակարան քաղաքի, բանգի պատկեր աւուրց ի մի զիպկեալ, մանուսանց ի Ռաշապղ կարապետ՝ եղարայ իւր»

Գրիգոր Տաթևացին մասնացել է 1409 թ. զեկտեմբերի 27-ին, և թաղվել է 1410 թ. հունվարի սկզբներին, սուտի Մատթէոսն իր դամբանականը շարագրած ու արտասանած պետք է լինի 1410 թ. սկզբներին, Տաթևում⁴:

1 Ձեռ. № 474, էջ 100բ—108բ:

2 ԺԻ գրքի հիշատակարաններ, էջ 606:

3 ԺԻ գրքի հիշատակարաններ, էջ 613:

4 Ամենայն հայրենականութեամբ Մատթէոսին է պատկանում նաև Գրիգոր Տաթևացու կյանքի և կենսագրութեանն ուսումնասիրութեան համար կարեւոր նշանակութեան ունեցող զոգ կարգադրական սյուն զբովանդակ, որը պատկանում է մեր Մատենադարանի № 6007 ձեռագրի 5ա—6ա էջերում, որ ամեն աւարի ի զիւնեմբերի ին (27) նշչումն և հանդիսա-կրթիս կրթեալ զայլ բարեմաստեղիս Գրիգորի, աշակերտի Յովաննու Ռոսանեցոյ իտա-ղոսի: (Յով. ԺԻ գրքի հիշատակարաններ, էջ 102—104):

9. «Մատթէոսի նուստա և յետին աշակերտի եւամեծացն Յովնանու և Գրիգորի, աշխատասիրեալ ի քննութիւն գործոց աւարկոց, ի մկեղեցինէ սուրբ հարցն Յովնանու Ոսկերեանի և Նիքիւնի, ի խնցրոյ հարապա-կերտ վերոյ Յակոբ վարդապետի՝ մականունն Ովանանց կոչեցեալ»

Մատթէոսի ամենաբնորոշակ ու կարեւոր աշխատութիւնն է, շարա-գրել է 1411 թվականին, համարաբար Տաթևում⁵:

10. Քարոզներ

Մենք արդեն տեսանք, որ «Ով ոք են արարեալ զլուծումն և բղ-բագումնս Աստուածաշունչ գրոց» ցանկի հեղինակը Մատթէոսին է վե-րագրում նաև «Ծ. (50) քարոզ»⁶:

Նրա քարոզներն բնագործնակված են մեր Մատենադարանի №№ 662, 969, 1357, 2114, 2157, 2229 և այլ ձեռագրերում, բայց դրանց քանակը 50-ի չի հասնում⁷:

Քարոզները գրված են, ինչպես բնորոշված էր, Աստվածաշնչից քաղ-ված բնաբաններով: Որպես բնաբան ընտրված են «Մի սպանանք, «Մի սուտ վկայէր», «Մի շնար», «Մի զոգանար», «Մի քանակ կացէ յամենայն ժամ», «Մարեցան սուս մարդարէք», «Են եմ հովիւ քաջ» և այլ բազմաթիվ աստվածաշնչային խոսքեր:

Մատթէոսի այս քարոզները լի են պատմական, անուստագիտական, կենցաղագիտական, գրականագիտական նշանաբաններով, ներկայացնող բազմաթիվ ուշագրով ասույթներով և ձանձուղական մեծ արժեք են ներ-կայացնում:

Քարոզների շարագրման թվականը որոշ չէ: 1391 թվականին շարա-գրված «Մի զլիսոյն Ղուկասու հուաքումն բանից» աշխատութիւնը նույնպես պարունակում է քարոզներ և զբովանդեցնում ի նպատակ քարոզչութեան, հա-կանառութեան և բեմբասացութեան (ե՛լ պիտանացութիւն սորա ի քարոզս բանի և ի կազ զբուսաց, և ի բեմբասացութիւնս): Արդ, Մատթէոսի քա-րոզների և այլ աշխատութեան որոշ հատվածներ բառացի են ընկնում են միմյանց: Նկատի ունենալով այդ հանգամանքը, հակված ենք կարծելու, որ իր քարոզները նույնպես Մատթէոսը շարագրել է ԺԻ գրքի 99-ական թվա-կաններին «Մի զլիսոյն Ղուկասու հուաքումն բանից» աշխատութիւնից (գրված 1391 թ.) հետո:

Սրանով ավարտվում է Մատթէոս Զուգայեցու մեզ հայտնի աշխա-տութիւնների դանկը:

Ջուզյաչեցին, սակայն, զբաղվել է նաև ձեռագրերի բնագործնակման աշ-խատանքով, նրա բազմադրած ձեռագրերից մեկ հայտնի են նաևեւայ երեքը:

1. Գրիգոր Ներսիսեցու «Մատենա ողբերգութեան» աշխատութիւնը, բնագործնակված շուրջ 1397 թ. Ատոմ արեղայի խնդրանքով⁸:

2. Ավետարան, բնագործնակված 1407 թ. Տաթևում, Յովնի քահանայի խնդրանքով⁹:

5 ԺԻ գրքի հիշատակարաններ, էջ 118—121:

6 Ձեռ. № 844, էջ 182ա-բ:

7 № 2229 ձեռագրում, օրինակ բնագործնակված ենք գտնում բնագրերի 50 քարոզ:

8 ԺԻ գրքի հիշատակարաններ, էջ 615:

9 ԺԻ գրքի հիշատակարաններ, էջ 76—77:

3. Մի այլ ավետարան, ընդօրինակված նույն թվականին, սնն Մրմարաքաջանի պատվերով:

Անասարակույց, մեզ հասած կամ մեզ հայտնի այս երեք ձևագրերը Մատթեոս ընդօրինակությունների միայն մի չնչին մասն են կազմում:

Այսպիսով, Մատթեոս Զուգարեցին ներկայանում է մեզ, որպես Տաթևի նշանավոր համալսարանի անվանի դասախոսներից մեկը, որն իր ստեղծագործածն ոչ երկարատև կյանքի ընթացքում շարադրել է մի շարք ծավալուն աշխատություններ, զբաղվել է քարոզչական գործունեությամբ և ընդօրինակել է բազմաթիվ ձևագրեր:

Մեր սույն համատու հազարամյան հիմնական նպատակն է պարզել, թե ինչ արժեք են ներկայացնում մեր հեղինակի աշխատությունները ԺԴ—ԺԵ դարերի Հայաստանի ոսցիալ-տնտեսական կյանքի պատմությունը ուսումնասիրելու համար:

Մենք արդեն տեսանք, որ Մատթեոս Զուգարեցու աշխատությունների մեծագույն մասը կրոնական բովանդակություն ունենւ նրանք կամ մեկնություններ են, կամ քարոզներ, կամ էլ աստվածաբանական գրականություն այլ ժանրերին պատկանող ստեղծագործություններ:

Նման իր ժամանակի բոլոր եկեղեցական գործիչներին, նա իր աշխատություններով ձգտել է քարոզել և ուսուցանել հայ եկեղեցու դադափարական գրույթները, փորձել է բարձրացնել եկեղեցականության հեղինակությունը, նպաստել եկեղեցու տնտեսական դիրքերի ամրապնդմանը:

Իր բազմաթիվ քարոզներում Մատթեոսը խոսում է այն ժամին, որ օտարազգի տերերի բնություններին ու հրաձուձանքի դեմ, ինչքան էլ դրանք ծանր լինեն, ժողովուրդը չպետք է ընդդիմ ու պայքարի, և իր փրկություն հույսը պետք է դնի միայն երկնային դատավորի վրա. «Փրկասցուք մեք, քրիստոնյաքս:— գրում է իր աշխատություններից մեկում Մ. Զուգարեցին.— թէ Քրիստոս է մեզ դատաւոր, սպտ պարտ է ի նա ընկնուլ դատաստանն շարձարողացն մերոց և նաչձարողացն, և մեզ ուրախութեամբ տանել զյիկանան և մի մեղէն վրէժխնդիր լինել մեզ, զի ՎՊՄ է վրէժխնդրութիւնս, սաէ տէրք, և այլն»:

Մական սխալ կյիւնք միջնադարյան որեէ եկեղեցական հեղինակի դատաստել, Էլնկոյով միայն նրա նաւարակական ու սոցիալական հարցերնրից:

Իր աշխատությունների մեծագույն մասը Մատթեոս Զուգարեցին շարադրել է Վլասն քարոզութեան բանին, այսինքն՝ նկատի ունենալով ունկրնդիւնների յայն աուգիտորիա՝ արեւատարներին, առեւտրականներին, շինականներին և, ընդհանրապէս, աշխատավոր մարդկանց:

Նա շատ լավ տեղյակ է եղել, որ Վրաստանք ի յոել քարոզութեանն բամբասուն, թէ սպիտակ կուտեայ է կամ կու յասբէ, կամ թէ յերկար կու տաէ, և կամ ձանձրանան ի բազմութիւննէն, և կամ այլ իճն բան խօսին՝ ոչ ունկն գնկոյով քարոզութեանննք:

Իսկ որպիսիք ժողովուրդը չբամբասի քարոզիչին, ունկն զնի նրա քարոզութեանը և քարոզը հասնի իր նպատակին, այդ բոլորի համար անձրա-

մեշտ էր խոսել ժողովրդի լեզվով, կանգ առնել նրան հուզող սոցիալական ու տնտեսական հարցերի վրա, պարզ ու պատկերավոր օրինակները բնութեւրով ժողովրդի սասորջա կյանքից ու կենցաղից՝ դրանց միջոցով դուրսամարս գործնել զոգտափարական բարգ խնդիրները և այլն և այլն:

Հենց այդպես էլ վարվել է Մատթեոս Զուգարեցին: Եվ դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթեոսի աշխատությունները ի նա ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ժողովրդի վիճակի, կենցաղի, զբաղմունքի և բազմաթիվ այլ հարցերի մասին հսկայական թվով այնպիսի տվյալներով ու աուլայիններով, որոնք մեծապէս բարձրացնում են նրանք ձանաչական արժեք և իրավունք են տալիս մեր հեղինակին պատվավոր տեղ գրավելու ԺԴ—ԺԵ դարի հայ մատնագիրներին շարքում:

Աշխատենք Մատթեոս Զուգարեցու աշխատությունների մեջ ցրված կարևոր այդ տվյալները ու աուլայինները օգտագործմամբ փոքր ինչ ծանոթանայ նրա ապրած ժամանակաշրջանի հետ:

Ինչպես արդեն տեսանք, Մատթեոսը որպես մատնագիր հրապարակ իջով ԺԴ դարի վերջերին, երբ Լանկ-Քամուրի գորքերն ասպատակում էին Հայաստանը. ՎՊՄ ժամանակի նեղութեան, ուր առեւտրային թակեաց զաշխարհս առնեալն հուր հարուային՝ Քամուր կոչեցեալս — գրում էր այդ մասին Զուգարեցին:

Քամուրի մտմանից և նրա ժառանգների պարտությունից հետո Ազրբեջանում և Հայաստանում իշխանութեան գլուխ անցավ Կարա-Կոյունլու քուզարական ընդերի առաջնորդ Կարա-Յուսուֆը:

Մական երկար տարիներ պետք էին համոզվելու համար, որ Կարա-Կոյունլուների նոր դինաստիայի հաղթանակով հայ ժողովրդի վիճակի մեջ ոչ մի փոփոխություն չպետք է տեղի ունենար: 1411 թ. գրած իր ՎՊՄ-ից զրոծոց առաքելոց աշխատութեան հիշատակարանում Մ. Զուգարեցին, տեսանք, որ հայտնում էր, թե նոր տիրապետողների բռնակալութեանը հիշել է տալիս զպտաջին շարիսն Քամուր կոչեցեալ կազինս և այլն:

Այս ընդհանուր ձևով արված հայտարարությունները կոնկրետ ու իմաստալից բովանդակություն են ստանում Զուգարեցու տարբեր աշխատությունների մեջ, ուր նա, այլ և այլ առիթներով անդրադառնում է հայ ժողովրդի կրած ստատպանքներին:

Իր Վլասն քարոզութեան բանին աշխատություն մեջ, օրինակ, ալլազգի բռնագործների մասին մեր հեղինակը գրում է հետևյալ ուշադրով տողերը. «Քարձեալ, գրացիք են մեզ շար բնուտորք և ալլազգիք, զի ի մին հողոյ և նոյն ծնողաց եմք, և զնոյն պատկերս մարդոյ ունին, և միտք և բան և ամենայն՝ հաւասարք են, և սբրտ զազանի ունին, և յանխնայ կեղեղեն և տանջեն զմեզ. ոչ միայն ի մարմինս, այլ և ի հողս վնասուց. զինչս յարիշտակին, զմարմինս շարարեն, և ի մեզս ձգեն, և ի հաւատոց զվկեն, նախատեն և նալածեն, և սպանանելով զմեզ՝ համարին պաշտօն մատուցանել ստուտոյս»:

¹ Այս մասին հետաքրքրական տվյալ է պահպանված միջնադարյան մի քարոզի մեջ, որովք սպված է. «Սոփորութիւն է Կանոնալոց և իմաստոց յորժամ սպիտոց և խոմարոց զմեծամեծոց և քրքրեքացունից և գունայտ իբաց զնոսս բանն կամին յառաջ թերել՝ զբնանի և զբժան աւրիտիաց բուսն հարկանել, այսինքն ի տեսնոց կամ ի յանոց յարացուցիչ գաճուեթն յանդման կացուցանել իմացուածս (ձեռ. № 1098, էջ 13բ):»
² Ձեռ. № 6607, էջ 229բ:

¹ Փե գարի հիշատակարաններ, էջ 75—76:
² Քրան յաւետարանն Յովհաննուս, ձեռ. № 3671, էջ 26բ:
³ Նույն տեղում, էջ 19ա:

Մեջ բերված հատվածի վերջին միաբեր ավելի պարզորոշ շարագրված է Զուղայեցու քարոզներից մեկում այսպես՝ «Արդ, սահն գոթա (մուսուլմանք), կնի՞ ոք զքրիստոնեայ կրողսպե կամ սպանան՞ աքցայութիւն նաւ» է¹:

Այլ կապուցութեամբ նա հայտնում է, որ տիրող բռնավորները եղարխներս աղքատաց ծծեն և անկրաւ գտանն², կամ բարգում անգամ... սպանանեն վասն ազանութեան և կամ վասն նախանձուք³, կամ որեւէ մեկի մահվանից նետս նրա ինչպիսի գուշից հարուստ բամբին շատնայաւ զնկղում⁴՝ սգրիկն զրաւակն, մանաւանդ զի սրովանգակն տանին⁵ և այլն, և այլն:

Մատթեոս Զուղայեցին հայ մոզովրդի համար ստեղծված ծանր իրավասան ու անտեսական վիճակի պատճառները բացատրում է միջնադարյան սեփեղ և հատուցումն սկզբունքով: Աստվածային կամբող հայերը, իբր, պատվում են իրենց մեղքերի համար: Նույնիսկ Քառուրդ բնարված է եղել տիրող կողմից պատուհասելու համար հայերին ի զիմաց իրենց գործած մեղքերի⁶:

Վասն մեղաց մերոց սկզբունքով է բացատրում Զուղայեցին նաև բնական ու հասարակական բոլոր արժավորքները: «Սոյնպես և ոչմամ մի գնեա միոյ շեջին երբեմն մաս ասարժամ՝ առնասարակ կոտորեն, երբեմն շարժ, երբեմն գայո, երբեմն մարտի, թրթուր, ջորակի, ժանկ, երբեմն կարկուտ, սոյ, սրածուխին, նեղեկ և այլքն: Սոքա յաշխարհն ոչ բանին վասն մեղաց, այլ միշտ ի սասանութիւն պանեն զմարդիկն — գրում է նա «Անու մեղատուրք կարիցինն բնարանով քարոզում»:

Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ Զուղայեցու աշխատությունների մեջ մեղավոր են համարվում հասարակության ոչ բոլոր խավերի ներկայացուցիչները հավասարապես:

Զուղայեցու կարծիքով հիմնական մեղավորները հայ իշխաններն են: Ժողովրդի պատուիրության ու բարեկեցության, նույնիսկ նրանց հովատի պատվանության հիմնական պատասխանատուսն աշխարհական իշխանության ներկայացուցիչներն են: «Առանց Տրդատայ ոչ կարաց սուրբն Գրիգոր ի Հայոց մին կին ի հուսառ բերելո՞ւ սրամտորեն նկատում է Զուղայեցին իր քարոզներից մեկում⁷, և հայ մոզովրդի համար ստեղծված ծանր կացության հիմնական մեղքը պատմ է հայ անմխարան, վավաչտ ու անգութ իշխանների վրա:

«...Իսկ զքրիստոնեայ իշխանն,— գրում է նա,— պանեխիս և վաւաչտոս և մասնոգա և սպանոգա, յորմէ յաճախեալ մեղոցն բարկացուցին գանդարկանայի բնութիւնն. և ես գմեզ ի կիտան անօրինաց, և գերեցաք յամենայն ազգս, և վա՛յ է իննա՞»:

¹ Ձեւ. № 2229, էջ 188բ
² Բնան յաւեսարանէն Յովհաննուք, ձեւ. № 5871, էջ 46բ
³ «Քարոզի քանն՝ Մի սուտ վկայէք», ձեւ. № 3229, էջ 130ա
⁴ «Բնանութիւն գործոց առաքելոց», ձեւ. № 1402, էջ 233ա
⁵ Ձեւ «Բնանութիւն գործոց առաքելոց», ձեւ. № 1402, էջ 84բ, ուր ասված է «ի պատերազմն գանձրիկն ընտրեմք և անքն ի պատահանն՝ գանհուսան (քնորէ)», որպէս ալ չմ գծում որնն:
⁶ ձեւ. № 662, էջ 161ա
⁷ Ձեւ. № 2229, էջ 206բ
⁸ «Բնանութիւն գործոց առաքելոց», ձեւ. № 1402, էջ 258բ

Այս բոլորից նետ, զարմանում է Զուղայեցին, հայ ֆեոդալական աների վերջին սկոր ու անգոր ներկայացուցիչները մխարանելու և միմյանց զորավիզ լինելու փոխարեն, շարունակ կոչում են իրար դեմ. «Այժմ մնացեալ սուս իշխանքն հայոց զմիմեանց ջիւս հաստանեն և զարմանայի ես (է), զի բոլոր երկիրս աներ և վասն աներանմիս կուտին» — գրում է նա¹:

Մեղքերից անմասն չեն նաև հայ հոգևորականության ներկայացուցիչները, մեծատունները, առևտրականներն ու արհեստավորները, սակայն նրանց նկատմամբ Զուղայեցին համեմատաբար մեղմ արտահայտություններ է գործածում:

Մատթեոսի ստորած ժամանակները հայ ինքնապաշտի եկեղեցին միակ հաստատությունն էր, որն այս կամ այն չափով միավորում էր հայ ժողովրդի ցիրուցան արված զանգվածները և աշխատում, իր շահերից ելնելով և յուրովի, վաստ արձև ազգային դրամականության ու կուլտուրայի այն արդիւնքները, որոնք կարեւոր ու անհրաժեշտ էին դադարախախտում ու սոցիալ-անտեսական իր դիրքերը պաշտպանության ու ամբողջովյալ համար:

Այդ իսկ պատճառով, Մատթեոս Զուղայեցու գրական գործունեության մեջ կարեւոր տեղ է բռնում պայքարը մասնեղականության, այլ իրաքով՝ օտարազգի տիրապետողների պաշտպանականության դեմ: Ամբողջովյալ այդ ինչդրին է նվիրված վերոհիշյալ Վասն հարցմանց անօրինաց, զանազան պատասխաններք աշխատությունք, որը շարագրված է 1393-ից առաջ՝ Աբու Ալսաեդ արքայ ու զյուրբմբննի պատասխաններ են արված բոլոր այն հարցերին, որոնցով մասնեղական կրոնի պետերը դիմում էին հայերին՝ թրխտանություն դիրքերի խախտման ու նրանց հավատախոխ անելու մտադրութեամբ:

Նման հարցեր են շոշափված նաև Մատթեոսի «Յարեցան սուս մարգարէք բնարանով քարոզի մեջ», Ուշագրովն այն է, որ իր պատասխաններով Մատթեոսը բնավ չի վերափորում մասնեղականների կրոնական դրացմունքներն ու չի ցանկանում դիպչել նրանց համարմունքներին:

Նրա կարծիքով մասնեղականները պարտավոր են հնազանդվել իրենց մարգարէի պատվիրաններին, որովհետև Մանեզնն է նրանց կապազառությունից հավատքի բերել. «Եսայց Ձեզ արժան է նմա ննադանդի, զի զմեզ ի հուսառ երեւ և ի կտապաշտութեանէ յարձոյց» — գրում է նա²:

Այլ մեկ է թրխտանների խնդիրը. Մանեզը պատմական առաջերկ է իջել մի քանի հարյուր տարի այն բանից նետ, երբ հայերը նեխանությունը մերժելով ընդունեցին թրխտանություն, ուստի հայերը իրավասու են նրան չճանաչելու և չընդունելու: «Մանմասն անք,— գրում է նա,— մեզ ոչինչ երախտիք չունին, զի երկի՞ զմեզ ի հուսառ գտաւ, և մեք սատուսմապաշտ էաք երբ նա երեկ, և մեզ ոչինչ չէ ուսուցել և ի նմանէ հուսառ չենք անել, վասն այնորիկ և ոչ աննայնից գնա՞»:

Մեջ բերված հատվածը բավական է ցույց տալու համար, որ Մատթեոս Զուղայեցին ձգտում էր հաստատել այլախորն ժողովուրդների միջև

¹ «Բնանութիւն գործոց առաքելոց», ձեւ. № 1402, էջ 215բ
² Ձեւ. № 2229, էջ 185բ—190բ
³ Ձեւ. № 3854, էջ 202բ
⁴ Ձեւ. № 3854, էջ 302ա

համերաշխությունն և փոխադարձ հարգանք, միեւնույն ժամանակ զմտակա-
նապես դեմ դուրս գալով հայերին բռնի մահմեղականացման քաղաքակա-
նությունիցն դեմ:

Մեր հեղինակի ապրած ժամանակներում, օտար տիրապետության նե-
տեանքները զգացվում էին նաև ժողովրդի ասորյա կենցաղում և նիստ ու
կացի մեջ: Հայերը հրաժարվելով իրենց հեռուների ու վեցեցիկ անձնատուե-
ներից, իրենց երկխաներին տալիս էին մոնղոլական, թուրքական ու արա-
բական անձնատուներ¹ Ալամ-խաթուն, Յախշի-բեկ, Աղբուզայ, Արզլա,
Դամուր-բուզա և այլն, և այլն:

Մատթնո Ջուղայեցին փրատկար է համարում այդ սովորությունը
և գտնում է, որ պատժի են արժանի այն քահանաները, որոնք քրիստոնյա
մանուկներին անվանահոռում են օտար ու խորթ անուններով:

«Վասն որոյ,— գրում է նա,— պատժին քահանայք, յորժամ քրիս-
տոնեայ տղային Դուարագին գնեն կամ Չախրատինն և այլն²:

Մատթնո Ջուղայեցու աշխատությունները շատ ավելի կարեոր նյու-
թեր են պարունակում իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի ներքին
կյանքին, սոցիալ-տնտեսական հարաբերումներին և կուլտուրական երե-
վույթյունների ուսումնասիրության համար:

Նախ, համառոտակի ծանոթանանք նրա աշխատություններին մեջ ցըր-
ված այն տվյալների հետ, որոնք վերաբերում են գյուղական կյանքի տար-
բեր կողմերին:

Իր «Բննութիւն գործոց առաքելոց» աշխատության մեջ Ջուղայեցին
ֆեոդալական հասարակության դասային կառուցվածքը տալիս է հետևյալ
աստիճանավորմամբ³՝ «Թագաւոր, իշխան, ձեռնաւոր, ամնուտէր, շինական»⁴:

Բարձրագույն երկու աստիճանները Աուղայեցու ապրած ժամանա-
կաշրջանում գրավում էին, ըստ մեծի մասին, Հայաստանի օտարազգի տի-
րապետողները՝ քոչվորական ցեղերի ավազանիները և պետական պաշտո-
նյաները: Հայ նվաճված ժողովուրդը տեղ ունենր միայն (բացառություններն
ի նկատի չենք ստնում) հիերարխիկ սանդուղքի ստորին աստիճաններում
(«ձեռնաւոր, ամնուտէր, շինական»):

Ձեռնավորները ֆեոդալի կողմից նշանակվող այն պաշտոնյաներն էին,
որոնք հաշվառման էին ենթարկում հարկատու տվյալ օբյեկտից՝ գյուղից
կամ քաղաքից գանձվելիք հարկի չափը, քույրակազրում էին բոլոր աշխա-
տանակ չափահաս մարդկանց և հալաքում հարկերը:

Յուրաքանչյուր գյուղական համայնքի մեջ կային ազդեցիկ և ունեւոր
ընտանիքների ավագներ՝ ամնուտեերը, որոնք ներկայացնում էին գյուղա-
կան համայնքի պետության և ֆեոդալի անաջ ու պատասխանատու էին
հարկերի ժամանակին և ըստ որոշյալ չափի գանձման համար:

Վերոհիշյալ իր աշխատության մեջ Մ. Ջուղայեցին «անկարգ», այսինքն
հաստատված կարգից դուրս ու տարօրինակ գյուղերի շարքին է գտնում
այն գյուղերը, որոնք չունեն ձեռնավոր ու ամնուտեեր:

Ուշադրով այդ հատվածում, որի հետ արժև ծանոթանալ, Ջուղայեցին
պատասխան է տալիս այն հարցին, թե «Բննի են աւերակն» (այսինքն
ավերակների ինչ տեսակներ կան): Պատասխանը տալիս ենք սուտրև.

«Նախ, կոչի աւերակ անապատն, որ ոչ է քնու շինեալ... երկրորդ՝
անկարգ շինն, որ ոչ ունի ձեռնաւոր և ամնուտէր՝ աւեր կոչեմք, որպէս
խաչինեցեք (իմա՝ Յաչինեացիք)՝ երրորդ, աւէր կոչեմք, թէ իցէ ձեռնաւոր
և ամնուտէր, և ոչ սերմանեալ աւուն և գարունն, և ամեմք՝ աւերեցաւ:
Չարրորդ, աւեր կոչեմք յորժամ փախեալ լինին շինացիքն, և աղիքն դա-
տարրի: Հինգերորդ՝ կատարեալ աւերն, յորժամ զկեն բոլոր ջնջի մահուամբ
կամ սրով. և զի այլոցն գոչ հնար շինութեան, բայց յեանոյս՝ ոչ»⁵:

Այս և նախորդ մեջբերումից պարզ ու որոշակի կարելի է հետևցնել,
որ ձեռնավորները և ամնուտեերը, որպես գյուղական համայնքի ազդեցիկ
և ունեւոր անդամներ՝ շինականները նկատմամբ արտոնյալ մի գաս էին
կազմում:

Գյուղական համայնքը խորն շերտավորում էր ապրել: Գյուղական
բնակչության մի զգալի մասը ծանր հարկապահանջության նետեանքով
զրկվելով արտադրության միջոցներից, ցախպած էր կամ փախչել քաղաք,
կամ էլ համադրուպացի փարթաւանների բեռվանու. ասկա մտնելով՝ ենթարկվել
նրանց տնտեսապես և իրավապես:

Այս երևույթը նկատվել ու արձանագրվել է Ջուղայեցու կողմից «Ճէր»,
«Իրեկնի զվայելչութիւն ամն քո» քնարանով գրված քարտում: Այստեղ
հեղինակը խտուտ է նշագանդության և ենթակայության ձևերի մասին,
որոնցից է համարում նաև շատ կարեաց, այսինքն՝ կարեբից մղված
հնազանդությունը. «Որպէս աշակերտ,— գրում է նա,— վասն կարեան իւրոց
հնազանդութեան և նա տիրէ նմա իրև սեղական տէր... և աղ-
քատք մեծատանց, որպէս ի քաղաք և ի զիւզս է տեսանել: որք ընդ նս-
վանեալ փարթամացն բազմաք կան վասն կարեաց իւրեանց»⁶:

Կարեւոր են նաև Ջուղայեցու հայտնած տվյալները գյուղացիներից
գանձվող հարկերի մասին: Նա հանդանե հիշատակում է դալան հարկը, որը
գանձվում էր հպատակ ժողովուրդներից ի դիմաց գինւորական ծառայու-
թյան, կորը, որը տառապանք է համարում, ինչպես նաև տուուգանքները —
մի հավաքական տերմին, որի տակ պետք է հասկանալ մի շարք հարկեր
և այլն:

Այն աստիճանի ծանր են եղել այդ հարկերը այդ շինականության համար,
որ ունեւոր ստիպված դիմել են հավատարմություն: Ջուղայեցին ուղղակի
հայտնում է, որ մարդիկ ուրանում են իրենց սովառքը և ընդունում մահ-
մեղականություն նաև «վասն տաւախաց զայանի» և «վասն տոտապանաց,
զոր կոս ասեն»⁷: Պետք է կարծել, որ մահմեղականությունը ընդունածների
վիճակը փոքր ինչ բարվոքվել է, և այս ճանապարհով օտար տիրապետող-
ները երբեմն ձգտել են իրազօրծել ասիմիլյատորական իրենց քաղաքակա-
նությունը:

Ջուղայեցին ուշադրավ տվյալներ է հաղորդում նաև պարսիկալեզու
աղբյուրներում «երուսղան կոչվող այն հարկի մասին, որն արտահայտվում
էր թագավորական սուրհանդակներին, պետական պաշտոնյաներին, օտար-

¹ Յաչինի գյուղերում ձեռնավոր և ամնուտեեր չէին, մասին այս վկայությունը
մեծ հետաքրքրություն է ներկայացնում և արժանի է լուրջ ուշադրության:

² Ձեռն. № 1402, էջ 83բ:

³ Ձեռն. № 969, էջ 172բ:

⁴ «Բննութիւն գործոց առաքելոց», ձեռն. № 1402, էջ 140ա:

¹ «Բննութիւն գործոց առաքելոց», ձեռն. № 1402, էջ 193բ:

² Ձեռն. № 1402, էջ 83բ:

երկրյա զեռպաններին և նրանց ուղեկիցներին, ծառաներին ու ձիերին կերակրելու, ապաստան տալու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտավորությունը:

Մեր Նեղինակը Երնայլայից փոխարեն գործ է սծում շատ նաջող, բատ կրեուլթին ժողովրդական ծագում ունեցող Երնասիրք սերմինքը: Հայտնում է, որ Երնասիրքացն պիտոյանան ծախքը՝, իսկ մի այլ տեղ (ԵՃԷր, սիրեցի գվախելու թինն տան շոս բնարտնոյ քարտում) քացարում է, որ սերյ ու նարդանքը կարող են լինել և կամավոր, և անամա Ակամա է այն կեզո՞ւ Եսերք, որ մարդիկ ստիպված են լինում Երկնելույ ի նոցանէ՞ց ցույց տայ բնանայութեբին, շար թաղավորներին և իշխաններին՝ ծառայել նրանց Երնչս տալով և այլն¹:

Իր մի այլ քարտում Ջուղայեցի խոտում է կեկեղեցական տուրքի մասին, նայանելով, որ Ետուրքն, որ սո աստում չափով և նամարով է, այսինքն բատ ընչից իւրեանց, զի նամարով Ժ (10)-էն գմինն խնդրել:

Ջուղայեցու կողմից նշված նարկերից բացի հայ գյուղացիությունը նրա աղբամանահարկաբեղանում դեռությունն ու ֆեոդալային վնասում էր բազմաթիվ այլ նարկեր ևս, որանց մեր Նեղինակը իր աշխատություններում առիթ էր ունեցել անդրադառնալու:

Այդ նարկերի մեծ մասը դանձվում էր նարկային պաշտանների կողմից՝ գյուղղովի Յուրաքանչյուր գյուղական նամայք, իր սանուտներին և ձեռնավորի միջոցով պարտավոր էր նավաքել տվյալ գյուղի վրա բատ նարկային քուցակները գրված ուղջ նարկը և նանձնել պետական պաշտանայաներին: Եվ սնա աշտակը բացվում էր շարաշահության մեծ աղտուրից գյուղի սանուտներին ու ձեռնավորներին նամար: Մրանք, ուղտաբործելով իրենց գլխքն ու սնուտական կշիւրը, գյուղական նամայնքից պահանջվող նարկերի իրենց վրա գրված բաժինը ևս բարբում էին չուանոր ու աղքատ իրենց նամալյուղացիներին վրա:

Այս մասին ևս իր քարտիցներից մեկում շատ Նետաքքրական ավյալ է հաղորդում Մ. Ջուղայեցին: Նա գրում է. Եհուին ծածուկ ցոյ և ասնուտաէրք գեղոց և վերակացուք, որք յաղքատս գրիկն. և այնպէս կրեկեցուցանեն, թէ մեք աւելի տամք և յաղքատացն ասեալ տան, և զինչս իւրեանց պանեն²:

Ուշգրտով են նաև Ջուղայեցու հաղորդած ավյալները շինականներին փախուտի մասին զեղի այլ շրջաններ և Նեոավոր երկրներ, մի բան, որ հատկապես Ժ՛ի և ԺԵ գարեբում Հայաստանում մասսայական չափեր էր բնորոշեր:

Ջուղայեցին մի առիթով, բնություն Պտաների մասին խոսելիս, հայտնում է, որ Երշխանարքան գլխնութիւնն պակասեցուցանէ և յայտ է ի շինականացն, զի յործամ իշխանութեամբ շարժին իշխանքն՝ թողուն և փազլին: Իսկ յործամ բնկերանայ՝ նոքա վարեն և առակալացուցանեն թղջինութիւնն³:

Գյուղացիություն փախուտի ասալն աննելու հոյատակով, զեռես իլխանություն ժամանակ, մշակելի էին մի շարք միջոցառումներ: Սաշխարհ-ագ-դին հայտնում է, որ իրենց գրանցված վալրերից այլ շրջաններ փախած գյուղացիների վերապարձման նամար հատուկ պաշտանյաներ էին ուղարկվում:

Ջուղայեցու նույն Երնությունից հարձոց տաքելոց՝ աշխատության մի նստավից կարելի է նեակցնել, որ փախած գյուղացիների վերադարձման ու ավերակ մնացած շրջանների վերաբնակեցման նամար քաղաքանագիր էին կատարում: Ճիշտ է, այդ նստվածում մեր Նեղինակը աշխատում է քացարել: Օղբատու կայսեր ժամանակ տեղի ունեցած աշխարհադրի ինչ լինելը, քայց նրա աված քացարությունը, անսարակույս, բխել է իրերի ժամանակակից վիճակից: Նա գրում է. ԵՁԷ աշխարհագիրն այն էր, որ զինչ տեղք որ շատ էին բնակչք՝ անախ ասեալ տանէր յաւերական և շինէր, և զինչ տեղոյ շինական, որ կայր ի յայլ տեղիս՝ զայն ի յուր բնական նայրենիքն տանէր⁴:

Բազմաթիվ ավյալներ ու ակնարկներ են ցրված Ջուղայեցու աշխատություններում նաև գյուղատնտեսական աշխատանքների, աղբով այգիները պարարտացնելու պրակտիկայի, և այլ նարակից նարքերի մասին, ներշատակված են նաև երկրաբործական մի քանի գործիքների անուններ, և այլն, և այլն: Ասանց վարանումի կարելի է տեսլ, որ մեր Նեղինակը մեկնողական ու ստավածարանական բովանդակությամբ աշխատություններն ու քարտիքերը շատ ավելի նյութեր են պարունակում աշխատավոր մասուների կյանքի ու կենցաղի պայմաններն ուսումնասիրելու նամար, յան մեր նշանավոր պատմիչներից շատերի աշխատությունները:

Այս բանն ավելի ցայտուն կդառնա քաղաքային կյանքի ու կենցաղի մասին Ջուղայեցու գրանցած ավյալների հետ ծանոթանալուց հետո:

Ե՛վ գլխոյն Դուկասու հուաքումն րանից՝ աշխատության մեկ մեր Նեղինակը հայտնում է, որ Դուկաս ավետարանիչը մարդկային բնությունը, իբր, նմանեցրել է քաղաքի նաև, և այդ կազակցությունք քաղաքների արտաքինն մասին հաղորդում է հիշատակության արժանի ավյալներ: Քաղվածաբար մեկ նեք բերում աշխատության այդ մասից մի քանի նամամա՝ Բաղաքն ամբայեալ է պարսպք և պուրջոց...: Քաղաքն են տունք, բաժանեալք ի միեկանց...: Յիւրաքանչիւր տուն գործն ուրիշ գործ...: Բարեբարքն պանն ի քաղաքի, իսկ գլխութարո՝ արտաքս նանն...: Սպասուորք կարգեալ են ի քաղաքի քերել նմա դամննայն ինչ...: Բազում գլբութենք են քաղաքին...», և այլն⁵:

Իսկ Երնությունից հարձոց տաքելոց՝ իր ամենակարեւոր աշխատության մեկ մեր Նեղինակը առիթ է ունենում պատասխան տալու այն հարցին, թե քաղաքային բնակչությունը աշխատանքի բնույթով ինչ յաղբերից է բաղկացած: Քաղաքի բնակիչներին Ջուղայեցու կարծիքով կարելի է բաժանել 10 խմբի, նեակալ կերպ.

Ե՛նախ, այնտեղի, որ վայրապար շրջին, զի ոչ ունին գործ ի յայտ անուն քաղաք, և զնան:

¹ Երնությունից հարձոց տաքելոց, ձև. № 1402, էջ 30բ:

² Ձև. № 2229, էջ 143:

³ Երնայց ի բանն՝ մի գոգանաք, ձև. № 2229, էջ 133ա:

⁴ Երնությունից հարձոց տաքելոց, ձև. № 1402, էջ 76ա:

¹ Ձև. № 1402, էջ 80ա:

² Ձև. № 1245, էջ 63ա—63բ:

երկրորդ, որ պատանմամբ կան, որպէս մտորողքն, որ թէ պատահի՝ ուտեն, և թէ ոչ՝ մնան (անօթի):

Երրորդ, որ աշխատանօք ապրին, որպէս մշակք:

Չորրորդ, որք հնարօք սողրին, որպէս արուեստուորք:

Հինգերորդ, բանասացութեամբ, որպէս զլաւք (*) և գեապանք:

Վեցերորդ, հարամութեամբ և զողութեամբ:

Երեքերորդ, շատատանտ և խառամք, որպէս զատուորք:

Ութերորդ, իմաստութեամբ և հանճարով, որպէս գիտունք, որք են ուսուցանողք:

Իններորդ, աղօթիւք և պահօք, որպէս ճշմարտք:

Տասներորդ, իշխանութեամբ, որպէս հոգեւոր և մարմնուոր թագաւորք¹:

Ձի կարելի ստել, թե այս բաժանումը մեծ ճարտարությամբ է կատարված: Ակնբայտ է քաղաքաբանականներին անպատճառ 10 խմբի բաժանելու ցանկությունը (սլանով պետք է բացատրել, անշուշտ, գեոպոլիտիկական ու գաղթիկոսների համար հատուկ խումբ սահմանելը): Միևնույն ժամանակ չի կարելի շարժման առևտրականների մասին հիշատակություն չունենալու կապակցությունը:

Բերված ցանկի վերոհիշյալ թվությունները, սակայն, մասնակի են և այն, ամբողջովին վերցրած, զգալի հետաքրքրություն է ներկայացնում՝ լրացնելով մեր գիտելիքները միջնադարյան հայկական քաղաքների բնակչության գաղերի մասին:

Հատկապես կարևոր պետք է համարել քաղաքներում մշակների գոյություն մասին Մասիեսոի հաղորդած տեղեկությունը, որը լրացվում է նրա մյուս աշխատությունների մեջ գրանցված տվյալներով:

Պարզվում է, որ ՄՀակն ի վարձու ամենայն ոք վասն գործոյ կալնու... Ըստ կամայց տեսան անէ գործն... Մի օրն մին դանկեան լինի մին մշակի վարձն... Մշակ ոք ոչ կարէ ազնիւ նելթ գործել կամ կարել... ՄՀակն ոչ կարէ ինչս յետս ձեղել վասն վաղուսնն, զի հաղի զաւուրն հանէ պայենի...: Ծարակով մտնէ ի տունն...: Չարչարեալ է մարմին մշակին՝ աղաոտեալ և սեպեալ և նոյնպէս ննջէ, և այլն:

Այս նտովածները քաղված են Զուղայեցու Քանացարուք մտանել րնդ գուռն նեղք քնարանով քարոզից² և նույնը կրկնված ենք գտնում նաև ՔՔննութիւն գործոց առաքելոց³ աշխատության մեջ⁴:

Այդպիսով, Զուղայեցին ներառությունը են ասելու մեղ պարզելու, որ մշակները վարձվում էին քաղաքներում մասնագիտական պատրաստություն չպահանջող ամեն կարգի ու աշխատանքների, հատկապես՝ բեռնակրութեան համար: Նրանց ստացած աշխատավարձը հազիվ բավարարել է օրվա աղքատիկ պարենը (սխիչս ոչ կարէ յետս ձեղել վասն վաղուսնն, զի հաղի դաւուրն հանէ պայենին):

Մրանով, սակայն, չեն սպասվում մշակների մասին Զուղայեցու աշխատություններում ցրված տվյալները: Նա հայանում է նաև, որ մշակներ կային նաև գյուղերում: ՔՔննի կերպի մարդ սանու ինչ ի մարդոյս հար-

1 Ձեռ. № 1402, էջ 155ա—155բ:
2 Ձեռ. № 2157, էջ 41ա—41բ:
3 Հժժ, ձեռ. № 1402, էջ 102ա—102բ:

ցին մի տեղ նա պատասխանում է՝ Տչորս կերպիւն, և կերպերից մեկը հասարում է վարձկանութունը. Եզի,— շարունակում է նա.— լինի մշակ և հողի և այլ ինչ. և ասուն համարով աւուց զվարձս⁵. մի այլ տեղ սակարկ ունի կրկնադարձական աշխատանքների ժամանակ վարձվող մշակների մասին, Եր յանդի և ի հրապարակն ասնեն (գործ) ստանց պատկասանաք⁶:

Մշակները պարտավոր են աշխատել մինչև ուշ երեկո, Եայլ թէ հիւանդանա ի կէտքն՝ ոչ ասնու զվարձս⁷, կամ՝ որ տոչ տրտացի զգործն կամայ վարձողին՝ ոչ ասնու վարձս⁸, և այլն:

Դուրսերից քաղաք վախճած ոչ բոլոր զարիպներին էր հաջողվում մշական կամ ժամանակավոր գործ ձարել այնտեղ. այս մասին կարևոր մի տվյալ կա հայկական միջնադարյան առակներից մեկում⁹: Հասկանալի է ուրեմն, որ մշակական աշխատանք և աղքատի սրևէ այլ միջոց չունեցող քաղաքացիական սոցիալական այդ շերտը, այսօր վարձկան լինելով, վաղը կամ մյուս օրն ստիպված պետք է լինել մուսոցիկանություն ձևոք կարիսանկ և կամ, նույնիսկ, գիմել զողության: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Զուղայեցին քաղաքի բնակչության շերտերի իր բաժանման մեջ հատուկ տեղ է տալիս «ժուրդներին» ու «հարամիներին» և գոյերեւոն: Եվ ուշագրավն այն է, որ մեր նեղիմակն արգարացնում է զողերին, որովհետև նրանք աղքատի այլ միջոց չունենալու պատճառով էին գիմել այդ ժայռանեղ միջոցին:

Այս մասին Զուղայեցու մոտ կարգում ենք. «Գիտելի է զի զանաղաւնել արժան է զղողին դէման և զընչից տերսն: Գանդի են, ար աղքատք են ասնենին և ասնեն զողութիւն, և զայս անձարակութիւնն ասնէ, այսպիսեացս ներելի է զողութիւնն, զի հարկաւ ար պիտոյք քնութեանս հարկեաց ասնել զգործն զայնս¹⁰: Միևնույն ժամանակ պտտի արժանի են համարվում բոլոր այն զաղտնի ու հալոնի զողերը, որանք զրկում են ուրիշներին, թաղանում ու հափշտակում ոչ թե կարիքից զրգված, այլ իրենց ունեցվածքը կրկնապատկելու, շտայություն ու զեխություն մեջ ապրելու, համար: Դրանց շարքին է դասում Զուղայեցին կառատառ իշխաններին, վանքերի քնչաքաղց ստանդուրդներին, զիվանդակներին, որոնք խարդախում են փաստաթղթերը, ծուռ գառավարներին, գյուղերի տանուտերներին, սրանք հարկերի ծանրությունը թարգրում են աղքատ համազրույցայեցիներին վրա, խարկերս առևտրականներին, խարդախ արևեստավարներին և նմաններին:

Այլ առիթով մենք արգեն ասացինք, որ Զուղայեցու աշխատությունների մեջ հատկապես մեծ տեղ են բռնում արհեստագործություն ու առևտրի վերաբերյալ այս կամ այն առիթով գրանցված տվյալները: Դրանք կառաված չեն թողնում այն մասին, ար մեր նեղիմակը կրկնաբար ժամանակ սպրել է

1 ՔՔննութիւն գործոց առաքելոց, ձեռ. № 1402, էջ 118բ:
2 ՔՔարտք վասն արարքնութեանն, ձեռ. № 2220, էջ 180բ:
3 Ձեռ. № 6607, էջ 170բ:
4 Ձեռ. № 662, էջ 149ա:
5 Տե՛ս Կ. Գ. Մարր, Сборники притч Вардана, часть II, Тексты, СПб., 1894: էջ 147:
6 ՔՔարտք ի բանն՝ մի զղանաք, ձեռ. № 2220, էջ 155բ:

հայկական քաղաքներում և ի մտառ ծանոթ է մի շարք արհեստների արտադրական պրոցեսներին ու անտարականների գործունեության մի շարք կողմերին:

Նրա աշխատությունների մեջ հիշատակված են դարձուկայինը, սակերչությունը, արծաթագործությունը, սղջնագործությունը, հյուսնությունը, սատանյանկությունը, կերպասագործությունը, ակեղործությունը, պարանագործությունը, ներկարտությունը, դանկարտությունը, անձուկագործությունը և այլ արհեստներ: Իսկ որոշ գեղարվեստ, նա ոչ միայն թուռցիկ հիշատակություն է անում արհեստագործության այս կամ այն էությունը մասին, այլ սալյա է արտադրական պրոցեսի ամբողջական նկարագրություն, թվարկում է արհեստավորի գործիքները, մի խոսքով, մատակարարում է նա յնչնայալը արհեստագործության ուսումնասիրողներին անգնատակի նյութեր:

Ծանոթանանք այդ կարգի տվյալներին մի քանիսի նեա, որոնք հատկապես շատ յուրեն կրված են Զուգալիցու ԲՆՆՈՒԹԻՐԵՆ գործոց ատաքերոց աշխատության մեջ:

Այս սատանյանկի աշխատանքի պրոցեսի և դադարի ուղաղրավ նկարագրությունը. Ե... Ոստանանկ, յորժամ ոստան հենե, նախ չափ գմի թեյն և աղա հենե. և ի գործին՝ սախըն և ձեռք գմարե. և զինչ գործը՝ ծրարե ի վերայ սալմին, ոչ գրեակով, թէ զինչ գործնաց՝ մինչև վճարե. և ի վճարին հատանե, և սոյա դարձեալ յեա տա ի սալմեն, և կրկին չափե, և տեսանե զգործն. թէ քարի է՝ փառուորի ի տեսանելն զմա, և թէ դարձ է՝ արամի. և ի ծախն կրկին փատուորի՝ զգինս առնելով աշխատանաց իւրոցն¹:

Սրանից պակաս հետաքրքիր չէ ձոնի աշխատանքի նկարագրությունը, դարձյալ նույն աշխատությունից. Եժոնն հանե զայլ կենդանեաց մորթ և աղ և չորացուցանե, և դարձեալ լուսնայ և հանե զմին և զնե յաղոց՝ գարե ալբեր և խմորով, և հանեալ դարձեալ չորացուցանե, և սոյա գործէ և կակղէ, և յետոյ ներկէ, և ի բաղում մորթոյ մի հանդերձ կարե՞²:

Այս նկարագրությունը ուղաղրավ է հատկապես այն տեսակետից, որ հնարավորություն է տալիս պարզելու աշխատանքի բաժանման ոչ խոր ստանդանի կաշեգործություն մի քննարկման — մուշակագործություն մեջ, Ինչպես պարզվում է, աշխատանքի բոլոր պրոցեսները, սկսած կենդանու կաշին քերթելուց՝ մինչև մուշակի կարելը կատարվել է միևնույն արհեստավորի (ձոնի) կողմից:

Իրձե ծանոթանալ նաև քիմիա կամ նաչիձ կոչվող թանկարժեք գործվածքի պատրաստման ուղաղրավ նկարագրություն հետ: Զուգալիցին հայաշուտ է, որ այդ արհեստը պատկանում է ծանր ու զմիայ արհեստների թվին, և բազալարում է ալալիս. Եզի զվարտոլ ոսկին ի վերայ մորթոյ կոցնին և մանր թել կտրեն, և աչնպէս հնարեն ի գործին, որ այն բարակ թելին սակին երեսն ի վեր լինի. և վասն այտորիկ դուռար է այս գործ քան զամենայն ինչ...³:

Նույն տեղում՝ Եզինչ է պիտոյ կարդացուցանա Նարդին Զուգալիցու տված պատասխանի մեջ, մեկ առ մեկ թվարկվում են դարձի բոլոր գործիքներն ու պարագաները. ԵՄոնն և սլլէշտին, բուրան և կրակն, փուքան, օրարկին, զազն, և կանաւորքն, երկաթն և յեա ամենեցուն ջուրն, որով մխէ և ամբիւ՞⁴:

Կարելի էր մեջ բերել նաև ակեղործության, պարանագործության, ներկարտության և այլ արհեստների մասին Մատթևուի նադրված տվյալներինց բաղվածքներ, բայց բավականա՞ստ արժանի և անցնենք սակարի ու շուկայական հատատությունների մասին մեր հեղինակի նադրված տվյալներին:

Հայտնի է, որ մոնղոլական ծանր ակրպետությունը ընթացում է այստանի ու հարևան երկրների քաղաքներին ծանր հարված հասցվեց: Համաշխարհային սակարի մեջ նշանակալից դեր կատարող մի շարք բողմամարդ քաղաքներ, մոնղոլական ակրպետությունների զինաստիչ հարկային քաղաքականությունը հետևանքով, ստախճանարար անկման դիմացին: Քաղաքների մի մասն էլ շարունակում էր իր գոյությունը, սակայն շատ ավելի համեստ մասշտաբներով էր մասնակցում տարանցիկ սակարին: Այնուամենայնիվ սրալ կիրներ կաթնով, թե Մատթևու Զուգալիցու սարած մամանկաընթացում Հայաստանի քաղաքներն ամբողջովին կորցրել էին իրենց նշանակությունը, որպես միջնադարյան տարանցիկ սակարի կարևոր նաղրվաններ:

Թավրիզից զեպի Աև ու Մեջերիական ձովերի նշանավոր նավանգրասները տանող երբեմնի բանուկ ձանապարհների վրա, որոնք իրենց մի մասով անցնում էին Հայաստանի վրայով գետն շարունակում էին իրենց գոյությունը մի շարք քաղաքներ (Նրդնիկա, Սրաթ, Արճնչ և այլն): Հայ սակարականները կարևոր դեր էին կատարում նաև հարևան երկրների սակարի ու արհեստագործության նշանավոր կենտրոններում՝ Թավրիզում, Սուրբաբում, Գանձակում, Թիֆլիսում, Սմիլգում, Հալեպում և այլ մարդաշատ քաղաքներում:

Հայ խոշոր սակարականները, որոնք այս ըրձանում խոջա կոչվումով են հանգես գալիս սղբյուրներում և շարժվումն ու անշարժ սեղանական կալվածքների տեր դասնալով կոչվում են նաև մեծատուններ, բայցի սակարական զործանեությունից զբաղվում էին նաև վաշխատություն, հարկերի կադալաություն, իսկ համախ հաև կատարում էին երբրի ակերի հանձնարարությունները, որպես գլխանաղեկներ ու պեսպաններ:

Մատթևու Զուգալիցու աշխատություններում ուղաղրված այս արձանի վկայություններ կան նաև սակարականների ու վաշխատունների գործունեության մասին:

Այսպես, իր քարոզներին մեկում Զուգալիցին հայտնում է, որ ալալիցները Եւջ կարեն յամենայն ժամ աւազակութիւն անել և ոչ յամենայն տեղիս, իսկ վաշխատունները, ընդհակառակը Եվաշխ անուն յամենայն ժամ՝ զյոյսոց և զցերեկի, և յամենայն տեղիս՝ ի մէջ մարդկան և ի մէջ չրպատարակի, և զամենայն թաղաւոր, դէշխան, զազգաստ և զամենայն ոք՞⁵:

¹ Զեռ. № 1402, էջ 62ա;
² Նույն տեղում, էջ 189բ—190ա;
³ Նույն տեղում, էջ 10ա:

⁴ Զեռ. № 1402, էջ 19բ—19բ;
⁵ Եբարոց գտն է մտու չափ մեղացր, Աեռ. № 2114, էջ 273բ:

Միանգամայն ճիշտ տվյալ է նադորգում մեր նեղինակը, վաշխատու-
ներն իրենց շուշափուկները տարածել էին անստուգելի միջոցով բնագավա-
նեում, և նրանցից կախման մեջ էին գտնվում նույնիսկ տիրապետող
դասակարգի ազնվեցիկ ներկայացուցիչներինը շատերը:

Երկրի տիրապետողները, շահագրգռված լինելով, մասնորգում էին
սակերտական ճանապարհները ապահով գործնելու խնդրով, այնուամենայ-
նիսկ հարստե ու արյունալի պատերազմային բախումների, ֆեոդալական
ու միջ-դինամախական կոնֆլիկտի պայմաններում, որպես է, որ սակերտկան-
ները ստիպված պետք է լինեին ինքնապաշտպանության դիմելու: Ծանա-
պարհների ապահով չլին նաև գողերին ու ավազակներին: Ենթա են գողը,—
գրում է Ջուղայեցին,— որք ի ճանապարհի և յանդուս և ի կիրճն ինրանց
նետուղ պղտհոզան յայտնապէս յափշտակեն, որոց և զեղջուկն հարամի
ստենն¹: Ասակերտական կարողաններն այդ պայմաններում շարժվում էին
միայն զինված զուկանների բնկերակցութեամբ: ԵՋի զէնք և հեծեալս առ-
նուն ընդ չինքեանց (ճանապարհորդք), զի թէ՛նամիքն յաղթեալ՝ ստաակե-
ցին զնոսա՝ — նայանում է Ջուղայեցին²:

Փաղաքների շուկաներում ու փողոցներում կատարվող առևտրի ետ
ու զեռի մասին Ջուղայեցին առիթ է ունենում օգտակար տվյալներ հա-
րորդելու ԲՆՆԱՍԹԻԼԻՆ գործոց առաքելոց աշխատութեան մի հատվածում³,
որտեղ ստուգարանում է ԲՈՒՂՈՅՅ թուղթ ևս կելում է Տաթևի համայնա-
բանի միջավայրում քաղաքացուկություն ստացած այն սկզբունքից, ըստ
որի առարկաների անուաները գրված են նրանց հասկանալիություններին հա-
մադաստանախան: Նրա կարծիքով փողոց բուր կապ ունի ԲՈՒՂ (դրամ),
ԲՈՒՂ (չնչափող) և ԲՈՒՂ (ստեղծ, որովհետև փողոցում) ԲՈՒՂՈՎ են
ամենայն արուեստք, որ ի նմա կատարի, զի առանց փողի ոչ առնուն և
ոչ ստեն, կամ Եայս ինչ սան և զայսն փոխեն, որոյէս դարձութն տուեալ
և ի նորին տեղիսն առնուն հաց կամ այլ ինչ, նաև այն պատճառով, որ
Եզամենայն ինչ ի նմա իրրե փողի: Գոչէ, թէ ստա եմ, մանուսեղ տեաքք
բնչիցն ձայնեն՝ այս ինչ է առ իոս:

Հետաքրքիր է նաև շարունակությունը, ԵՋուղայն (դրամի) յայտանն,
զի ամենայն որ զն է և վաճառե ի միտս իւր թիրութիւն, էրբ թէ զվաճա-
սակիցս իմ խարեցից... Այլ ստուգարանութեամբ և, զի այն տեղիքն ոչ է
այնպէս, զի գրնակիչս իւր յախտեանս պատէ, այլ այսօր այս անուն խո-
ճայ, ի վաղիւն՝ վաղիս միտս ի տեղի նորա⁴:

Այս պահան հետաքրքրություն է ներկայացնում նույն աշխատության
մի այլ հատված, որը նվիրված է կրթության, գողթակի, խանութի, փուսկի և
պանդոկի բուսերի ստուգարանությունը: Ջուղայեցու կարծիքով այդ բոլոր
տերմիները միևնույն իմաստն ունեն՝ Եամենքեան սոքա զմ իր նշանա-
կեն, որ այժմ այլ չեզու քարուսանարան կոչեն: Հայտնի է, որ պանդոկը,
նման եկեղեցու, բաժանված է լինում երեք բաժինների՝ Եերես ապագայս,
ի ներքոյ անտանանքն, և ի միջին՝ մարդիկն և փոքր աղյուսն, իսկ վեր-
ջինն՝ դաստական ապրլմեղէնք, սովիղէնք և սկուսնք պատուականք⁵:

Մ. Ջուղայեցու և նրա մասնակալից այլ նեղինակների աշխատու-
թյուններում նմանօրինակ տվյալներ շատ կան, և հասկանալի է, որ այդ
տվյալները հավաքման ու ի մի բերման միջոցով միայն մենք հնարա-
փորձելու կունենանք լրացնելու այն խոշոր բացը, որ սկզբնաղյուսների
պահանջային նետանքով գոյություն ունի միջնադարյան հայկական քա-
ղաքների ուսումնասիրության ընթացքում:

Այս պահան արժեքավոր տվյալներ է նադորգում մեր նեղինակը նաև
քաղաքային կայստության, քաղաքներում տեղի ունեցող թատերական ներ-
կայացումների, երթուսարգ քաղաքացիները հավաքությունների ու զվարճու-
թյունների մասին:

Իր քարոզչության մեկում, օրինակ, ի նկատի ունենալով, ամենայն հա-
վանակա՛նութեամբ քաղաքի արհեստագործական ու սակերտական շերտերն,
նա գրում է. Եանեկիիզք և պակասամիտք ելեալ ի թատերո նաան անա-
ճօթացեալք, և ի գիւտով տեսարանէն աներեսոյթ նետով վերաւորին, և
թէպէս ոչ մարմնով, սակայն զոգիս պղծեալ ապականին⁶:

Հայացիտությունը զուտև ստույգ տվյալներ չունի իր արժանագրություն
տակ միջնադարյան թատերական ներկայացումների բովանդակությունը
որպեսզի համար Յադոք, այլ կարգի տվյալներ չեն գտնվում նաև Մաս-
նու Ջուղայեցու աշխատություններում: Այնուամենայնիվ, այլ աղբյուր-
ների նկատմամբ հարցի քննարկման մասնակալ ուղարկություն են դրա-
վելու նաև մեր նեղինակի կողմից գրանցված նետալ կերպ տվյալներ,
Ե՛մբշտարք յորժամ ի թէ՛տարոնն ընթանան մեծամեծք և փոքունք յա-
րուցեալ մի զմիմեամբք տնցանեն, զի տեսանիցեն զբաժութիւնս նոցա⁷:

Որ թատերաներում տեղի էին ունենում նաև ըմբշտարտություններ,
այլ նայուն է նաև այլ աղբյուրներին:

Հաջորդ մեջբերումը քաղում ենք Ջուղայեցու ԵՀուսքումն բունից,
որ հայի առ Ջ տուր գործս աստուծոյ՝ աշխատությունից.

Ե՛թագատուք,— զրված է այնտեղ,— նետալ ի վերայ աղարանից իւր-
եանց՝ տեսանիցէ զխաղ թէ՛տարանի և ծաղր անէ զնոսա⁸:

Յանկալի էր այտեղ ակնարկված ներկայացման բովանդակության
մասին ավելի շատ բան լսել, սակայն եղածն էլ բավական է համաստիչ
համար, որ տեղի են ունեցել նաև ծիծաղալար բովանդակությամբ ներ-
կայացումներ:

Միջնադարյան քաղաքներում բանթոզից նետո երխատարք արհես-
տագործներն ու սակերտականները հաճախ հավաքվում էին խնճոցի ու
գինարարների: Այդտեղ էին մեր գուսանները երգում իրենց սիրո ու զվար-
ճության երգերը, զեղեցիկուհի վարձակների՝ պարում երաժշտական գործիք-
ների նվագակցությամբ տակ: Հնչում էին աշխարհիկ բովանդակությամբ
սաղերն ու հայրենները: Եկեղեցական մատենադիրներինը շատերն են պա-
շարիկ այդպիսի հավաքություններ զեմ. գրանցից է նաև մեր նեղինակը:

Այդ երխատարչների Ջուղայեցին Ելիտի ու Եայնդուզն է համա-
րում, իսկ նրանց մեջլիսներում կատարվածը՝ Եաղեղություն: Նա գրում

¹ Ե՛թարոց ի բանն՝ մի գողանարք, ԱՆ. Ձ 2229, էջ 132ա:
² Ե՛թարոց մանու, ԱՆ. Ձ 2229, էջ 160բ:
³ Ե՛մնութիւն գործոց առաքելոց, ԱՆ. Ձ 1402, էջ 182ա:
⁴ Հույն սեղան, էջ 266ա—266բ:

⁵ Ե՛թարոց ցամաք, ի բանն տէր ստատած մեր, տուր մեղ... ԱՆ. Ձ 2229,
էջ 251բ:
⁶ Ե՛մնութիւն գործոց առաքելոց, ԱՆ. Ձ 1402, էջ 173ա:
⁷ ՀՆ. Ձ 774, էջ 310ա

է «Եսամենայն աուր լիտիքն ու յանդգունքն ի քաղաքի ժողովին և ազգի ազգի ազատելովին առնեն, որ յերեկոյի ժամուն աայրան առնեն»¹,

Մեջ բերած ամլյաներով, հարկավ, չեն սպառում Մատթևոս Զուղաշեցու հարգարած ամլյաները միջնադարյան կուլտուրայի ու գրականության տարբեր ընդգծակաների վերաբերյալ:

Մի տեղ, օրինակ, նա աշխատում է բացատրել, թե ձանձրություն զեր մարդկանց ինչ որոգայթներին մեջ կարող է նետել: Թվարկված որոգայթներինց առաջինն այդպես է որոշված. «ասուլ տա դուստմն և ասլ՝ զինչ է ալլ ամենայն, ս կարէ ուսանել, և ազգի տղրի է. այս շարական է և միւսն խաղտեալ, և կցորդ, և Մոզմոն: Մին փոս նարեկացի լաւ է, քան դամենայն սագմոս Գութի»²:

Այլ և այլ ամբիւններով իր աշխատության մեջ Զուղաշեցին մեջ է բերում նաև ժողովրդական առածներ, որ բեղիջուկն առնեն. դրանցից է՝ «արտին սէնն ի տուր ձեռին երեկ» և «սուտ վկային հուրն է բամին»:

Մի հօդվածի մեջ սպատիչ խոսք ասել Զուղաշեցու աշխատություններում, իր ժամանակի սցիտլ-անտեսական հարաբերություններին, կուլտուրական երևույթներին, ժողովրդի կյանքի ու կենցաղի հարցերին վերաբերող աստուորեն ցրված բոլոր նյութերի մասին՝ անհնար է:

Մեր հեղինակը շատ կարեւոր ասույթներ ունի նաև միջնադարյան հերձվածողների մասին, որոնք զգայալ աշխարհի գուտեն և բժգլեն և ըզհեշտուկինն քարոզեն, բազմամիով տեղեկություններ է հարցորում անձաների իրավական ու անտեսական վիճակի մասին, անգրագետներ է վանական անտեսությունը և որոշում վանքի գործավորների պարտավորությունները, գործ է անում սցիտլական, ազմինխտարաթիվ, հարկային ու իրավական բազմամիով սակավադուտ տերմիններ (օրինակ՝ հողք, տոնյուս, բասխալ, ցաղալայ, ճորտ) և այլն, և այլն:

Այս բոլորից նեա տարակուսել չի կարելի այն բանում, որ Մատթևոս Զուղաշեցին զրավելու է իր վրա միջնադարյան պատմության այլ և այլ ընդգծականներն ուսումնասիրող պատմաբանների սեկուն ուշադրությունը:

Բայց նրա կողքով ստանադորուն չպետք է անցնեն նաև միջնադարյան հայ հասարակական մտքի ու գիտությունների պատմության հարցերով զրավող մասնագետները: Նրանց ուշադրությանը ներկայացնենք մի քանի ուշադրավ փաստեր:

Մեր կարծիքով Զուղաշեցին առաջին հայ հեղինակն է, որ փորձել է որոշել, թե որոնք են ընտության մեջ ի սկզբանե ստեղծված նյութերը: Նրա կարծիքով այդ նյութերն են՝ ոսկին, արծաթը, պղինձը, անագը, կաղաքը, երկաթը, լամվարը, ինչպիսի, ծծումբը և դանազան թանկարժեք քարերը³: Նա ձգտել է սալ նաև վերստիշայ սկրիպական նյութերի հատկությունները և տարբերությունները միմյանց նկատմամբ: Պղնձի հատկություններն, օրինակ, նա բնորոշում է նետելու կերպ. «Բոկ պղինձն ունի բազում հասկություն. նախ՝ զի մանդ ունի բնական և դառն է, և առանց կապարի ոչ հալի: Երկրորդ՝ զի մաշէ գգործունեայ իւր: Երրորդ՝ զի վնասակար ոչ

¹ Բնութագրի գործոց ատերկոց, ձև. № 1402, էջ 232ա
² Վասն քարոզութեան բանի, ձև. № 6007, էջ 52:
³ Տես զՎասար.Տե բանից, որ նայի տա Զ տուր գործ աստուոր: ձև. № 774, էջ 331բ-332ա:

ունի... Զորրորդ՝ զի որակ կարծիր ունի: Հինգերորդ՝ զի աղականիչ է սուկն և արծաթայ, Վեցերորդ՝ զի միայնակ ինքն ոչ ունի զեղեցելովին և ոչ յանօթ պիտոյանա: Եւթներորդ՝ զի շեռտցանէ զհուրն: Թւերորդ՝ զի ազգույն տա ի կերակուրն փութով: Իններորդ՝ զի ջերմություն հուրն թափանցի ի նա իսկոյն, յորժամ հասանէ ի նա: Տասներորդ՝ զի նա է միաւորիչ երկաթի: Նման ձեով նա որոշում է նաև մյուս նյութերի հատկությունները:

Պարզ է, որ Զուղաշեցու այս աշխատությունն արժանի է մեր քննիչ հոսերի ուշադիր ըննությամբ:

Շատ ավելի էմ ճեռաբերություն են ներկայացնում, մեր կարծիքով Մատթևոսի ընդգծական հայացքները: Իր քարոզելից մեկուս նա արտահայտում է այն միտքը, որ մարդիկ ևս սկրքից եղել են չորտոտանի, նեա միայն, անհրաժեշտությունից զրգված նրանք կանգնել են հեռակ ստեղծի վրա, իսկ առաջին կերտը ուղղելով՝ դարձրել են իրենց նամար գործիք: Անասունների և մարդկանց տարբերությունը Զուղաշեցու կարծիքով հենց կայանում է նրանում, որ անասունները զուրկ են մասնելու անկույթությունից, ուստի և չըքտաման ին մնացել:

Բնագիտության մասնագետներին թողնելով այս շատ ուշադրավ մտքի արժեքներում, անհրաժեշտ էր համարում առանց կրճատման մեջ բերել նշված քարոզի մեղ հեռաբերող հատվածն ամբողջությամբ, նախաժոր կանխածների ստաջն անելու համար:

«Զի մարգո,— գրում է Զուղաշեցին,— կրկին գործ ունի ասնել. մին՝ զի սոսքն ընթանայ, և միւսն՝ զի ասնէ արուեստ և գործէ զերկիք ձեոք: Արգ, զի անասունք ոչ ունին միտք որով արուեստ առնեն, վասն որոյ ոչ պիտոյանայ նոցա ձեոք, իսկ մարգո ունի իմաստութիւն և զխոսութիւն և արուեստ և բան, որոց կարտոտանն ձեոք, վասն որոյ ի հարկէ ի վերայ երկուց ոտից կանգնեցու և զերկուսն ուղղեալ գործի շինեաց բնութիւն բանին և արուեստին»⁴:

Իր կյանքի վերջին տարիներում, ինչպես արդեն նշել ենք, Մատթևոս Զուղաշեցին վիրավորանքներ է կրել իր թանգութ և անհնազանդ աշակերտներից և զառն վշառել է ասուտ եղբայրների՝ հայածանքների, նա ոչ ինչ չի հայանում այդ վիրավորանքների ու հայածանքների պատճառների մասին. մենք էլ վազմած ենք համարում որոշակի որեէ բան ասել: Բայց չի կարելի, արդոք, մասնել այն մասին, որ Զուղաշեցու հայտնի ու վշառքի են հենց նրա արտահայտում ուշադրավ զղագիտություն համար:

Իր վերջին աշխատության հիշատակարանում մեր հեղինակը վշառով արձանագրում է այն փաստը, որ նախըր օտարումը են, խոնարհվում են այլազան հեղինակությունների ստջն և, ընդհակառակը, արձամարտում են սեփական գիտականներին, նա յնտի այն զեպտում, երբ օտարների նկատմամբ նրանք ունեն սկնատու աստվելություններ: «Այլ և սովորութիւն է թնական մերոյ աղինո,— գրում է նա,— ի յօտար սղգոց իմաստից բանին ցանկալ և որոնել, թէ և կարի յեանոց է արարեալ և զնոյն ընթեանուլ, և զիրոյ հօր, թէ և կարի մեծալ և աշխատեալ՝ ոչ ընդունելու. վասն որոյ

⁴ Ձև. 774, էջ 333ա:
⁵ «Քարոզ ի բանն՝ Մարց պատուի էր և ոչ իմացու»: ձև. № 3209, էջ 109ու:

ազգանք մի դանմտութիւնս զայս ի գործ ածել, այլ ընդ օտարացն և զքոյնս սիրել և մեծարելն¹։

Ճշմարտացի քննադատութեան այս խոսքը ավելորդ չի լինի կրկնել նաև մեր ժամանակներում, թեկուզ և այն պատճառով, որ մենք մոռացութեան ենք մատնել Մատթեոս Զուգայեցու նման մի խոշոր գործչի ու գիտնականի։

* * *

Մատթեոս Զուգայեցին միակը չէ միջնադարյան մոռացված կամ պատշաճ ուշադրութեան չզրտված հեղինակներից։ Այս կամ այն չափով նրան են նմանվում Մարգիս Շնորհալին, Վարդան Այդեկցին, Վարդան Արևելցին, Հակոբ Կյայեցին, Բարսեղ Մաշկեարը, Առաքել Սյունեցին և քաղմաթիվ այլ, իրենց ժամանակ մեծ դեր կատարած մատենագիրներ ու գիտնականներ։ Նրանց մեծագույն մասը թողել է մեզ միայն աստվածաբանական աշխատութեաններ, կրոնական մեկնութեաններ և բարոյագիտական քարոզներ։ Դրանց մեջ, ճիշտ այնպես ինչպես Մատթեոս Զուգայեցու աշխատութեաններում, հսկայական օգտակար նյութ կա գրանցյալում։

Կարծում ենք, որ հասունացել է միջնադարյան մեր մտենագիրներին այդ կարգի աշխատութեաններից՝ ըստ թեմաների կամ ըստ հեղինակների կազմված քաղվածք ժողովածուներ հրատարակելու ժամանակը։ Այդ ճանապարհով միայն նմարավոր կլինի մասամբ լրացնել սկզբնադարյանների այն խորը պահասը, որ զգում է յուրաքանչյուր պատմաբան իր աշխատանքի հենց առաջին քայլափոխին, երբ փորձում է ձեռնարկել միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի և օտարալ-տնտեսական հարաբերութեաններ։

¹ Ժժ գարի հիշատակարաններ, էջ 120—121։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ՄԻՆԻՍՏՐԱՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԶԵՆՈՒԹԱՏՈՒՆ		
(ՄԱՏՆԱԿՐԱՆ)		
Բ Ա Ն Բ Ե Ր Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի		
Ե Բ Ե Վ Ա Ն	№ 3	1 9 5 6

2. ՓԱՓԱՋԱՆ

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԱՍԻՄԻԼՅԱՏՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒԻՐՁՂՂ

Ծանր է եղել հայ ժողովրդի վիճակը 16—18-րդ դարերի պարսից տիրապետության շրջանում։ Հայ աշխատավորությունը ոչ միայն ենթարկվում էր տնտեսական և օտարալական տնավոր ճնշման ու հարստանուման, այլև նրա նկատմամբ կիրառվում էր դաժան ազդային և կրոնական հալածանքների հետեզդեպի քաղաքականություն։

Այդ հալածանքների գլխավոր նպատակն էր րոնի կերպով հավատափոխ անել, ձուլել և ի վերջո վերջնականապես ասիմիլյացիայի ենթարկել բոլոր ազգային փոքրամասնություններին և հատկապես քրիստոնյա աշխատական ժողովուրդներին։

Հայտնի է, որ հայերի, ղրպցիների և մյուս աշխատական ժողովուրդների ասիմիլյացիան 16—18-րդ դարերում տեղի էր ունենում հավատափոխության եզրանկով, և դա միանգամայն հասկանալի էր։ Ֆեոդալական հասարակարգում, ինչպես և այդ մասին գրում է Էնգելսը, ժեկզեղու զոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմներ էին, իսկ աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակի մնում էր աստվածաբանության խնամակալության տակ։ Մտավոր գործունեության բոլոր քննադատներին վրատարածվող աստվածաբանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ կիկղեցիներ զոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում²։

Հատկանալի է, որ Էնգելսի այս դրույթը հավասարապես վերաբերում է նաև խոլամական աշխարհին, որտեղ պետական-քաղաքական վարքագիծը խոտորեն ենթարկվում էր Գուրանի ղոգմաներին և շարիաթի օրենքներին։ Սեֆյան Իրանում կրոնական անանդուրժողականութեան ձևով արտահայտվող ասիմիլյացիայի քաղաքականությունը վարվում էր շիիզմի գրոշի տակ, որի գլխավոր ուղեշնչողները ըստ բարձրաստիճան հոգևորականներ էին։ Պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Ջափարիա Մարկավազի, Գրիգոր Դարանացու և ուրիշների երկերում բազմաթիվ հիշատակություններ կան րոնի հավատափոխության և այդ պատճառով տեղի ունեցած նահատակության փաստերի մասին։ Հանուն հավատի կոտորվող նահատակության

¹ Զեկույցված է Մատենադարանի VII գիտական սեսիային, 1954 թ. դեկտեմբերի 30-ին։

² Փ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 40։

բազմաթիվ այլ փաստեր ջրված են նաև այլ և այլ ձևադիր մատյանները հիշատակարաններում, «Յայտմաւուրքներում» և այլուր: Մակաչն շնորհիվ այն բանի, որ բուն ասիմիլյացիայի ջաղագրականութունը վերանշարժ պատմական երկերում իր արտացոլումն է գտել սոսկ առանձին նախնանքերի նկատմամբ գործարվող բունության և զրա նեոեանջով առաջացած նախաակության փաստերի արձանագրության միջոցով, այդ սղբուրները ամլայնեցրով ննարավոր չէ լրել և ճշգրիտ պատկերացում կազմել մեր ժողովրդի ոչ-նեոավոր անցյալի պատմության կարևոր նարցերից մեկի մասին: Բանն այն է, որ բուն հայաստափոխության նման հարկադրական ձևը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ նախաակության փաստերը, այնքան էլ ցանկալի արդուներ չէր տալիս, այլ ընդհակառակը՝ սովորաբար վերջապետով դիմադրող անձնավորության սպանությամբ, գառնում էր քրիստոնեությունը պրոպագանդայի մի նոր աղբյուր: Թեև պետք է նշել, որ նայ պատմիչներին ու ժամանակագիրներին կողմից ավելի շատ արձանագրված և ընդգրկված են նախապես այն դեպքերը, երբ հայաստափոխության հարկադրանքը առիթ է ափել նոր վկայություն, սայց և այնպես, նեց նույն սկզբունագրյունքներում քիչ չեն նաև հիշատակություններ տարբեր ժամանակներում մասնագիտացված ընդունած հայերի մասին:

Սեֆյան արքայազնության շրջանում, իրանական կառավարող շրջանների ասիմիլյացիոնական քաղաքականության ուսումնասիրության համար շատ ավելի կոնկրետ և հարուստ նյութ են պարունակում Մատենադարանի պարսկերեն բազմաթիվ վավերագրերը, հատկապես մուսուլմանական շարիաթական փաստաթղթերն ու զանազան վեճերի կապակցությամբ հրատարակված «Ֆեթվաները» (فتوی):

«Ֆեթվա» բառացի նշանակում է «վճիռ», «որոշում»: Ֆեթվաներ տրվում էին ինչպես կենտրոնական «Դիվան-ալ-սադարաթին» (մայրաքաղաք իրանական ատյանի), այնպես նաև տեղական (Թավրիզի, Նախիջևանի, Երեվանի) «Եմալի» ատյանների կողմից այն դեպքերում, երբ քաղաքացիական կամ «Ռեբիհ» դատարաններում նստող հաբեմները դժվարանում էին որևէ հարց վճեն և դիմում էին մուֆթիին կամ շեյխ-ուլ-իսլամին, իսկ վերջիններս ելնելով մուսուլմանական շարիաթական սկզբունքներից, առաջ էին իրենց վճիռը, որը ջանի կողմից վավերացվելուց և համապատասխան մատյաններում արձանագրվելուց ու կնքվելուց հետո՝ օրենքի ուժ էր ստանում: Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող 50-ի չափ ֆեթվաները հիմնականում վերաբերում են «զիմմեի» ուսյաթների (հայեր) քաղաքացիական իրավունքների, Ֆիդայի վճարման որոշ մանրամասնությունների և հատկապես հայոց եկեղեցու իրավասությունների ճշտման հարցերին և շափարզանց կարևոր են հայ ժողովրդի սոցիալ-իրավական վիճակի ուսումնասիրության տեսակետից: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հատկապես 17-րդ դարի այն ֆեթվաները, որոնք վերաբերում են մասնազուխյան հարցերին և որոնց մեջ վախճանց պարզորոշ կերպով իրենց իրավական ձևակերպումն են գտել իրանական կառավարող շրջանների և հատկապես տեղական դատական օրգանների ասիմիլյացիոնական ձգտումներն ու նպատակները:

Համաձայն շարիաթական օրենքի՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, օրոնք վճարում էին հատուկ գլխահարկ, կամ ջիզյա-

իրավունք ունեին ազատորեն իրենց կրոնը դափնելու: Այդպիսի ժողովուրդներն ու նամանքները կազմում էին «Ջիզյե գոգար» — جزیه («Ջիզյա նստուցող»), կամ «զիմմեի» (պարտադրանք) ժողովուրդներ կամ նամանքներ: 16—18-րդ դարերում հրատարակված գերագույն «Դիվան-ալ-սադարաթին» ինչպես նաև շեյխ-ուլ-իսլամների ու մուֆթիների ֆեթվաներում, որոնք մեծ մասամբ հաստատված են մասնակի շահերի կողմից արված ֆեթվաներով, բազմիցս շեղաված է, որ «կանոնավոր կերպով ջիզյա հասուցող հայերին ոչ ոք իրավունք չուներ ստիպելու, որ քրիստոնեական հավատքը թողնեն և մասնագիտացված ընդունեն»:

Հայ ուսյաթներից զանազան գլխահարկ և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադիր գումարներն ու տոկոսները («Ֆախաթաթան և Վեֆար» — فتح و تصرف) բավական խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետության ֆինանսների մեջ: Շատ հաճախ որոշ գյուղերից ստացվող գլխահարկը կազմում էր նույն գյուղից զանազան հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին:

Առաջին իսկ հայացքից թվում է, թե ղլխահարկի ծանրությունը ինքնին պիտի պատճառ դառնար մեծ թվով հատկապես շրջավայր հայերի, հաստատափոխության, սակայն պետք է ասել, որ հայ աշխատավոր ժողովուրդը նյութական խոշոր գոհողություններից զնույն ամենուրեք, համարենք դեմադրում էր և հաստատակամորեն մերժում բազմիցս կատարվող հավաստափոխության առաջարկները: Հայանի է, որ 17-րդ դարում կոտորածի սպառնալիքը սակ մասսայական հավատափոխության զեպքեր տեղի ունեցան Իրանի խոքերը բռնած հայ արքայազնության խիստ մեծուսացած մի քանի բեկերներին նու հատկապես Ֆարսի և Մազանդարանի նահանգներում, իսկ հայ ժողովրդի հիմնական մասան, ինչպես մայր հայրենիքում, այնպես նաև Սպահանում և Նոր Զուղայում, վճարվող ջիզյան՝ վճախանորեն պայքարում էր ասիմիլյացիայի դիմադրության:

Պարզ է ուրեմն, որ այդ կեղծում, երբ համաձայն գոյություն ունեցող շարիաթական օրենքների, հայերը ծանր հարկատուության զնով շարունակում էին պահպանել իրենց հավատքը, հայ աշխատավորական բուն ասիմիլյացիայի գործը հավաղությամբ չէր կարող սղակվել: Մի կողմ թողնելով, որ այն փաստը, որ հայ արքայազնազնության ասիմիլյացիան օրյակ-սովորին չէր բխում պետության շահերից, որովհետև այդպիսով պետությունը զրկվում էր բայական շրջափելի եկամուտի աղբյուրից: Մակայն շնորհիվ այն բանի, որ պետության օրենսդրական ֆուրկիցները գումովում էին այդ հարցում անմիջապես շահադրված մուսուլման բարձրաստիճան նոդկորականության ձեռքում, վերջիններին հավաղվում էր իրենց կողմից հրատարակվող ֆեթվաներով անցկացնել մի շարք օրենսդրական միջոցառումներ և հայ արքայազնության որոշ խտրի մեջ գալուի հունձ կատարել, կանգնեցնելով նրանց հավատափոխության ուղու վրա:

Շիաների մտա վազուց գոյություն ուներ, այսպես կոչված Իմամ-Ջաֆարի օրենքը, բոս օրի զիմմեի ուսյաթների մուսուլման գարձած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեց-

1 Մատենադարանի պարսկերեն վավերագրեր (ՄՊՎ) Թղթագրանակ 1ք, 4մվ-ՁՄ 132ա, 132բ, 132գ, 145 և այլն:

վածքը ամբողջապես դրավելու և նրանց իսպառ զրկելու ժառանգություն իրավունքից:

16—18-րդ դդ. մեզ հասած բազմաթիվ կալվածազերերում հանդես եկող օտարող կամ գնող կողմերի անվան հիշատակմանը հաճախ նախորդում է «նոր մասնակցական» (ժողովրդ.-ուլ.-խոսված բ.الجدد الجاهل) տերմինը, որից երե- վում է, որ տվյալ անձնավորությունը նոր է մասնակցականությունը բնդունել: Այդ պարզ երևում է հատկապես այն վավերագրերից, որոնց մեջ նոր մաս- նակցականությունը բնդունած կողմը ժառանգական վեճերով հանդես է գալիս իր այն հարազատներին դեմ, որոնք դեռևս պահպանում էին քրիստոնեական հավատը:

Այս առթիվ տրված բազմաթիվ բողոքազերերի և դատական պրոցես- ների բավական ասօր գործեր կան պահպանված: Այդ գործերի սուսումնա- սիրությունից պարզվում է, որ, մասնակի բացառություններով, ժառան- գություն խնդրում միշտ էլ առաջնությունը տրվում էր մասնակցակա- նությունը ընդունած ժառանգներին: Բնորոշ է, որ կենտրոնական Դիվան- ուլ-սադարաթի կողմից տրված ֆեթվաներում, որոնք առանց բացառության բոլորն էլ հաստատված են շահական ֆերմաններով, այդ առաջնության հարցը այնքան էլ սուր կերպով չի զբաղվում: Մասնավաճ, որ պահպանված վավերագրերը մեծ մասամբ վերաբերում են ոչ անմիջական մասնակցների միջև տառաջացած վեճերին: Այնինչ, Երևանի, Նախիվեանի և այլ վայրերի շարխաթական առյուծների ֆեթվաներում, որոնց մեջ քննարկված են նաև անմիջական ժառանգների միջև տառաջացած վեճերը, մուսուլման ժառանգ- ներին արվող առաջնությունը մոռենալը ասանձնապես շեղաված է:

16—17-րդ դդ. հայկական ազդեցիկներում ևս կան որոշակի վկայու- թյուններ այն մասին, որ շատ հաճախ որևէ մասնակցական գիծում էր Շարիհ և մի քանի կեղծ վկաներով բազմադուռում, որ ինքը այսինչ հայի ազգական է և այդպիսով դավթում նրա ամբողջ ունեցվածքը, կամ նրա մի մասը: Այսպես, օրինակ, Զաքարիա սարխավազը իր «Պատմագրության» Ա. հատորի 42-րդ զիլում պատմում է, թե ինչպես քանաքեղքի ոմն Մի- քայել կայսիպոսի դեմ մի պարսիկ վեճ է սկսում և զիլներով Շարիհ պըն- դում է, որ ինքը ազգական է նրան, ուստի պետք է նրա հարստությունը վերցվի նրանից և արվի իրեն:

Սկզբում Երևանի Շեյխ-ուլ-խուվաբ բավարար ապացույցներ չգտնե- լով մերժում է նրա պահանջը և բազմաթիվ վկաների սուրբազրույթյամբ կազմում է մի արձանագրություն, որով կերթվում է նրանց ազգականու- թյունը: Մակաչ Նևառ պարսիկին հաղողվում է կաշառել Շեյխ-ուլ-խուվա- մին, որը երկրորդ դրությունը իրավունք է տալիս նրան սեփականացնել Միքայել կայսիպոսի այգին: Իսկ երբ վերջինս նորից բողոքում է շեյխին, նա պատասխանում է, թե «Ես ոչ էի հշտախուրթեամբ վերահասու եղել իրաջն և այժմ հուսատիես ծանեալ.դի ազգական քո է նա, և ըստ օրինաց մերոց դամեանայ ինչքն քո նմա պատկանի»:

Թեև ի վերջս Միքայել կայսիպոսը կուսաչքի մելիք Դավութի միջո- ցով կարողանում է իր բողոքը սեղ հասցնել և Երևանի Թանազկուլի խանը տեղեկանալով այն մասին, որ Շեյխը կաշառել է վերջրել ու փոխել իր վիճար:

նրամայում է նեսացնել նրան այդ պաշտոնից և խայտառակել հասարակու- թյան առաջ, սակայն կապիտից դուրս է: որ ազգակցությունը ապացուց- վելու: ղեկավարմ օրենքը իրավուք էր տալիս վերցնելու զիմի ուսարթի ու- նեցվածքը և ամբողջությունը սուպու: նրա մասնակցական ազգականին: Շեյխ- ուլ-խուվաբը պատժվում է ոչ թե նրա համար, որ այդպիսի որոշում էր քն- գուտել, այլ նրա համար, որ կեղծել էր իրականությունը, և ոտքը մարդուն հայտարարել որպես հիշյալ կայսիպոսի ազգականը:

Մասնակցականությունը բնդունող հայերի ժառանգական իրավունքները ամբողջաբար սեռականից չափազանց հատկանշական է 17-րդ դարի 20-ա- կան թվականներին, համանաբար Երևանի Շարի կողմից հրապարակված ֆեթվան, որտեղ չորս ատանձին ներշնչումների՝ Շարի որոշակի պատասխան- ներ է տալիս: Մանսթանանք այլ նաբեղի է ունենում մեկ որդի ծանապար անունով: Առաջին հարց. Եթե մասուն կրոնավորներն ու շիա զավանանքի գի- տունները, — որոնց խոսքը թող հավիտյանս ապրի աշխարհում, — ինչ են հրամայում հետևյալ հարցի մասին. կթե Մեհդիկուլի անունով նոր մու- սուլման գարձած մեկը մասնա և ունենա մեկ որդի ծանապար անունով: նույնպես մուսուլման, ինչպես նաև Զաքարիա անունով, մուսուլման որ- րուց երկու թուներ՝ Մարխում և Ֆաթմա անուններով, այս զեպում են հեա- վելով այն սկզբունքի վրա, որ քարոզ մերձավորները արգելում են նեա- վորներին, հիշյալ Մեհդիկուլի թոզած ժառանգությունը, անհրաժեշտ բո- ր մասնանունները կատարելուց հետո, արդյուք ամբողջությունը պատկա- նում է վերոհիշյալ Շանազարին, թե ոչ: Պարզեցեք:

Շեյխ-ուլ-խուվաբը պատասխանում է՝ «Այո, պատկանում է Շանազա- րին» և կնքում:

Երկրորդ հարց. Եթե մասուն մարդիկ, — որոնց խոսքը թող հավիտյանս ապրի աշխարհում շըքանում, — նմանապես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հարցի մասին. կթե Բարա անունով մի զիմի վախճան- լի և ունենա երկու մուսուլման կերոք ժառանգությունը, և մի անհայտ կերայր և կերոք որդիներ, այս զեպում աննամայունները զրկվում են զիմիի մա- սանգությունից, թե ոչ: Պարզեցեք:

Շեյխ-ուլ-խուվաբը պատասխանում է՝ «Այո, երբ կա մուսուլման մա- սանգ, աննամայոք ժառանգությունից զրկվում է» (կնիք):

Երրորդ հարց. Ենույնպես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հարցի մասին. կթե նախ քան հիշյալ զիմիի ժառանգությունը նրա մուսուլման կերոք որդիներին միջև բաժանվելը, վերոհիշյալ զիմի կերայրը, որը նա- իսպես զիմի էր, մուսուլման գառն և քանի որ որպես ժառանգարը նա ալիկի մերձավոր է քան մյուս կերոք որդիները, այս զեպում արդյուք եզ- րոք որդիները զրկվում են ժառանգությունից և ժառանգությունը ամբող- ջապես պատկանում է միակ կերոքը, թե ոչ: Պարզեցեք:

Շեյխ-ուլ-խուվաբը պատասխանում է՝ «Այո, այդպես է լինում և ժա- ժանգությունը պատկանում է ամենամերձավոր ժառանգորդին» (կնիք):

Չորրորդ հարց. Ենույնպես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հար- ցի մասին. կթե կերոք հիշյալ կերայրը, որ իր զիմի կերոք միակ մա- սանգորդն է, վախճանվի և ունենա մեկ որդի, որը վերոհիշյալ Շանազարն է, և հիշյալ թուները, և այս զեպում, երբ Շանազարը, որ այսուխով միակ ժառանգորդն էր գարձել և իրավունք ուներ ամբողջ ժառանգությունը

1 Զաքարիա Սարխավազ, հ. Ա. էջ 72:



17-րդ դ. 20-ական թվականներին Երևանի Շեյխ-ուլ-Իսլամի կողմից նրա պարտավորված ֆեթվան՝ Բաքայի թողած հարստությունը նրա մասնեղական ժառանգներին առյու, և բրիտանյա ժառանգներին մասնազուրկությանը պատկանող ֆեթվա:

վերցնելու, վերոնշյալ գիտմի որդին ևս մուսուլման գառնա և այդպիսով ինքը գառնա միակ ժառանգորդը, կորսյալներից այժպը լինելով հանցերծ, ազիև ուշ մուսուլման դարձած կարծի է ազիևի վաղ մուսուլման դարձած կորսրից խել ժառանգության իրավունքը, թև ոչ: Պարզեցեք՝:

Շեյխ-ուլ-Իսլամը այս հարցին ժխտական պատասխան է առիև և կնքում Այսպիսով ստացվում է նևևայ պատկերը: Վախճանվել է Բարս անուհուով մի հայ: Սերունդներ չունենալու պատճառով նրա ունեցվածքը մասնազուրկ էն կորսյալները: Բարսն ունեցել է երկու կորսյալ, որոնցից մեկը մասնեղականություն էր ընդունել և վախճանվել էր թողնելով երկու որդիներ, իսկ մյուս կորսյալը, որը նույնպես երկու որդիներ ուներ, շարունակում էր Մնուլ քրիստոնյա: Բայց որովհետև այս դեպքում, համաձայն Շարի ֆեթվայի ժառանգությունը հասնում էր մուսուլման կորսյալ որդիներին և ոչ թև գիտմի կորսր, ուստի վերջինս շատցում է մասնեղականություն ընդունել, որից նևու, որպես ազիևի մերձավոր ժառանգորդ իրավունք է ստանում մասնեղելու կորսր ունեցվածքը:

Պարզվում է ուրևն, որ գիտմի ժառանգորդները, որքան էլ որ նրանք մերձավոր չլինեն, զրկվում էին ժառանգությունից, եթև կային մուսուլման ժառանգորդներ: Իսկ այս վերջիններս որքան էլ որ նրանք ազգակցություն ազիևի նևու լինեին, այնուհանդերձ ժառանգության իրավունքը նրանց էր վերապահվում:

Այնուհետև մեք տեսնում ենք, որ նոր մասնեղականություն ընդունած կորսյալը, որ սկսում է անվանվել Մեհրիկուլի, նախքան մասնեղականություն ընդունելը արդեն ուներ երկու որդի՝ Շահնապար և Ջաքարիս անուններով, որոնցից Ջաքարիսն, որը կորսյալներից այժպն էր, գիտմի էր Մնացել, իսկ Շահնապարը նույնպես մասնեղականություն էր ընդունել: Դրա համար էլ համաձայն ֆեթվայի, իր հոր՝ Մեհրիկուլի ունեցվածքը, որն իր ներթին ժառանգել էր իր կորսյալ Բաքայից, նրա մասնազուրկ նևու ամբողջությամբ անցնում է իր փոքր որդուն Շահնապարին, իսկ մեք որդի գիտմի լինելու պատճառով զրկվում է ժառանգության իրավունքից և նևուպայում մասնեղականություն ընդունելով էլ նույնիսկ չէր կարող վերականգնել իր ժառանգական իրավունքները:

Ինչպես տեսանք, նախատախտությունը ազիևի նևուսի ժառանգորդներին հնարավորություն էր առիև ազիևի մերձավոր ժառանգների ձևից խելու բոլոր իրավունքները և նրանց լիովին զրկելու ժառանգությունից: Շարի ֆեթվաներում բավական պարզ ապված է, որ լեթև կա մուսուլման ժառանգ, անհավասանը ժառանգությունից զրկվում էն:

Պատմական խոշոր նշանակութայն ունեցող այդ իրադարձութայնը հայ ժողովուրդը որոշ հնարավորութայններ ձեռք բերեց զարգացնելու իր կուլտուրան և երկրի քայքայված տնտեսութայնը: 19-րդ դարի կեսերին Հայաստանում կատարվեցին ուշագրավ որոշ փորձեր արդյունաբերական նոր հաստատութայններ հիմնելու և գյուղատնտեսական նոր կուլտուրաներ մշակելու ուղղութայնը:

Վերսիիշյալ հարցերի մասին ղեռես ուսումնասիրութայններ չեն կատարված, նույնիսկ չեն հրատարակված արխիվային համապատասխան փաստաթղթեր, որոնք կարող են օգտակար լինել նեւտղա ուսումնասիրողներին:

Սույն հաղորդումով մասնագետների ուշադրութայն ենք հրավիրում Մատենադարանի Արխիվային քամնում պահվող 8 փաստաթղթերի վրա, որոնք վերաբերում են 1850-ական թվականներին էջմիածնում շաքարի գործարան կառուցելու ուղղութայնը ներսես Աշտարակեցու ձեռնարկած միջոցառումներին և այդ գործի անհնազ ավարտին:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի կենտրոնական մասում շաքարի գործարաններ սկսեցին հիմնադրվել 19-րդ դարի 20-ական թվականներէջ: Դարի կեսերին այդպիսի գործարաններ էին կառուցվել Ուկրաինայում և Ռուսաստանի այլ նահանգներում:

Ներսես կաթողիկոս Աշտարակեցին, որ հայտնի է իր ձեռնեղբայրութայնը, 1840-ական թթ. վերջերին մտադրվում է այդպիսի մի գործարան կառուցել նաև էջմիածնում, շաքարի ճակնղեղի հումքը մշակելով էջմիածնապետական կալվածքներում: Իր մտադրութայնն իրագործելու համար նա սկսում է բանակցել Ռուսաստանում բնակվող հայ գիտակ մտղղակաց հետ, և նրանց խորհրդով աշակերտներ է ուղարկում Ռուսաստան՝ շաքարի արդյունահանման գործին հմուտ մասնագետներ պատրաստելու նպատակով, պատվիրում է անհրաժեշտ մեքենաներ ու գործիքներ և այլն:

Հրատարակվող առաջին փաստաթուղթը վաճառական Աղաթոն Ալիմովի 1850 թ. մարտի 13-ին Պետերբուրգից ներսես Աշտարակեցուն զբաժնատակն է: Նամակագիրը հաղորդում է, որ ինքը բանակցել է առասկան կատավարութայն հետ, և կատավարութայնը ավել է իր համաձայնութայնը Հայաստանից երկու երիտասարդ տղաների Ռուսաստան դնալու և շաքար

դատարանելու արհեստը սովորելու մասին: Ակիմովը խորհուրդ է ապրիս Աշտարակեցուն շտապ կերպով Մոսկվա ուղարկել երկու հայ աղաներ: Նրա կարծիքով աշակերտները պետք է լինեն 17—18 տարեկան, իմանան հայերեն գրել-կարդալու և ունենան փոքր ինչ սուսերեն գրագիտություն: Հաս Ակիմովի տեղեկության, աշակերտներն այդ արհեստը սովորելու են 3—4 տարվա մասնակալմով շրջում, որից հետո՝ վերագտնալով հայերենի՝ իրենց գիտելիքներով նրանք մեծ օգուտ կարող են բերել:

1850 թ. Մանանիկի զպրցիցի երկու աշակերտներին՝ Մովսես Տեր-Հակոբյանին և Պողոս Սահակյանին, Ն. Աշտարակեցին ուղարկում է Մոսկվա՝ Ազատյան Ակիմովի խնամքով՝ շաքար պատրաստելու արհեստը սովորելու: Նրանք հինգ տարի մնում են այնտեղ և հետանում այդ արհեստի մեջ:

Հրատարակվող երրորդ փաստաթղթից պարզվում է, որ վերոհիշյալ աշակերտները, բացի Մոսկվայից, եղել են նաև Պոլտավայի շաքարի գործարանում ու ճակնդեղի դաշտերում, և իրենց փորձնական աշխատանքի մեծ մասը անց են կացրել Ուկրաինայում, վայելելով Ն. Աշտարակեցու վաղեմի ծանոթ՝ Պոլտավայի կալվածատերերից մեկի՝ գեներալ Մ. Պ. Պոզնիի խնամքն ու հոգատրությունը:

Գեներալ Մ. Պ. Պոզները, 1855 թ. մարտի 3-ին Պոլտավայից Ն. Աշտարակեցուն գրած նամակում հայտնում է, որ իր հույսացուության տակ գտնվող երկու հայ աղաները ուշիմ և խելոք մարդիկ են դուրս եկել: Նրանք շաքար պատրաստելու գործը լավ տիրել են և կարող են ինքնուրույն աշխատել նամակի շարունակության մեջ Մ. Պ. Պոզները հայտնում է, որ հայ աշակերտներն իրենց լավագույն աշխատանքների համար իրենց միշտ պարզեցներ են ստացել, իսկ աշակերտական շրջանն ավարտելուց հետո, նրանցից յուրաքանչյուրին 50 ուսրլի ճանապարհածախս է տրվել: Նամակի վերջում նույն Մ. Պ. Պոզները հայտնում է, որ շաքարի գործարանի համար անհրաժեշտ այն գործիքները, որոնց մասին գրել է Ն. Աշտարակեցին, Պոլտավայում չի կարելի ձեռք բերել, այլ պետք է պատվիրել Մոսկվայի մեխանիկական արհեստանոցներից մեկին:

Գործարանի համար մեքենաներ և գործիքներ Ռուսաստանից ձեռք բերելու և էջմիածին ուղարկելու գործում Ն. Աշտարակեցուն օգնում են Ռուսաստանում գտնվող հայ վաճառականները և մտավորականները: 1856 թ. հունվարի 31-ին Մոսկվայից Հովհաննես Հոսնայանը Ն. Աշտարակեցուն գրում է, որ շաքար արտադրելու համար պահանջվող գործիքները (նաև սպաղարական մամուլները) հանձն է առել պատրաստել Մոսկվայի արհեստանոցներից մեկը:

1856 թ. հունիսի 20-ին Մոսկվայից Մսեր և Զարմայր Մաերյանները Ն. Աշտարակեցուն գրում են, որ Հոսնայանը խնդրել է իրենց հասցրողել, որ Թիֆլիս է ուղարկել պապարության մեքենայի չորրորդ մասուլը և շաքարի գործարանի զանազան գործիքները:

Շաքարի գործարանը շահագործելու համար սակայն բավական չէին վարպետներ, մեքենաներ և գործիքներ: Գործարանն աշխատեցնելու համար անհրաժեշտ էր նաև հումք՝ ճակնդեղ, որի հայթայթումը դրված էր էջմիածնի վանական կառավարչության վրա: Մեզ հասած վավերագրերից երևում է, որ էջմիածնի վանական կառավարչությունը աշխատել է լավ

սերմ ձեռք բերել և ցանել այն էջմիածնի կալվածքներում: Այդ տեսակետից արժեքավոր է 1857 թ. հունվարի 18-ի էջմիածնի վանական կառավարչության մի գրությունը Անպրատակյանի հոգևոր ատաֆորզ Սահակ Մազուկյանին: Վանական կառավարչությունը նրան հազորգում է շաքարի գործարան հիմնելու նախաձեռնության, Մոսկվա ուղարկված երկու աղաների վերադարձի, նրանց փորձնական աշխատանքի արդյունքով երեք փիթի չափ շաքար ստանալու և 1856 թ. գարնանը շաքարի արտադրությունը սկսելու մտադրության մասին և այլն: Վանական կառավարչությունը միտամամտակ հայտնում է, որ ինքը մտադիր է առաջիկա գարնանը վանքի կալվածքներում ճակնդեղ ցանել, օւստի և խնդրում է Պարսկաստանում գնել ճակնդեղի լավ սերմ և ուղարկել էջմիածին:

Վարպետներ գաղձած Պողոս Սահակյանը և Մովսես Տեր-Հակոբյանը էջմիածնի շաքարի գործարանն աշխատեցնելու համար մեծ ջանքեր են թափում: Երկու տարվա ընթացքում նրանց հաջողվում է հաղթանակել այն բոլոր դժվարությունները, որոնք կապված էին գործարանի գործիքների, հումքի և այլ պարագաների պակասության հետ և մի կերպ աշխատեցնել գործարանը:

Սակայն Ն. Աշտարակեցու մահից հետո (1857 թ.) էջմիածնի հողերականները գործարանը թողնում են անուշադրության: Այդ մասին է վկայում էջմիածնի Մինոսի 1857 թ. մայիսի 13-ի որոշումը, որի մեջ հաստատ շարադրված է էջմիածնի շաքարի գործարանի հիմնադրման պատճառները, սակայն նշված է, որ գործարանի գործիքների և այլ նյութերի պակասության պատճառով նպատակահարմար են գտնում փակել գործարանը: Ստորև հրատարակում ենք էջմիածնի շաքարի գործարանի մասին Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող վերոհիշյալ փաստաթղթերը:

1. ԱՀԱԹՈՆ ԱԿԻՄՈՎԻ ՆԱՍԿԵ ԵՐԲԵՍ ԵՏՏԱՐԱԿԵՑՈՒՆ ԿԱՐԵՐ ԱՐՏԱԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾ ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԿԱՐԵՐ ԵՐԿՈՒ ԵՍԿԵՐՏ ՍՈՍԿԱ ՌՈՒՍԿԵԼՈՒ ԱՆԻՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍՍԱՐԸ: 1850 Ք. ՍԱՐԹ 13, ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ձերին բարձր վեհափառություն Տեր ներսես՝ սրբազնատրք կարողիկոս ամենայն հայոց

Յորժամ ես ի մօտ բարձր վեհափառութեան Ձեր պատիւ համարեցայ խօսել ի մասին երկու աղայոց յոդարկելոց ի տերութիւնն Ռուսաց, վասն ուսման զբաղուկ հաւաքելն և զշաքար յօրինելն, յորտմ գուք ես համաձայն եղաք: Այժմ ես խօսած եմ, միմիայն նոքա լինիցին ի ձեր կեկեցեցական եղաք: Այժմ ես խօսած եմ քոք՝ ուսուցց յեղաց, քանզի հարկաւոր է նոցա ի զբոսթիւնս հայոց և փոքր՝ ուսուցց յեղաց, քանզի հարկաւոր է նոցա ի մամ գրելոց գնաչիւս յայնմ ուսման տեղի: Վասն այսորիկ խոնարհաբար ինդրեմ զհարգազորութիւն Ձերին բարձր վեհափառութեան, հրամայեցաւք ինդրեմ զհարգազորութիւն Ձերին բարձր վեհափառութեան, զի ես յոյս ունիմ յատուծոյ իսկ հարկաւոր համարելով բաղիվայնմ զայս, զի ես յոյս ունիմ յատուծոյ իմ զայս բարեխօսութիւն կախեալ յայնդիսի մարդոյ, զոր նոքա ուսանին իմ հին 3 կամ 4 ամս, բոտ որոյ և սուննն զպաշտօրս իւրեանց: Համար-

ձակիմ ասել, զի յետ սովորելոյ իւրանց ըրեցցին զզոյուս միևս յայդմ կողմի, որ և դարձք այլ ամենայն անձինք սովորին և յուսուտըրին:

Յարուս և Յամ Նուսառ ծառայ ձեր
Ա. Արիմով՝

Ի 13 մարտի 1850 ամի
Ի Ս. Բեռլինուց

2. Ն. ՏԱՆՏԵՍՆԻ ՆԱՍՍԵ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ՝ ԷՍԵՐԻՍ ԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵ
ՌՈՒՄՆԱՍՏԱԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՌՈՎՆԻՐՎԱՍ ՍԵԱԿԵՐՏԵՐԻ ՌՈՒՄՆԵՍԱՆ ՀԱՅՁԸ
ՎԱՍՏԻ ԵՎ ԱՊԱՏԻՎԵՑՈՒՄ ՆՐԱՆ ԷՍԵՐԱՄԵՐ ՌՈՎՆԻՐՎԵԼՈՒ ՍՄԱՆ՝
1855 թ. ՓԵՏՆՎԱՐԻ 30, ՊԵՏԵՐՐՈՒԳ

Վենափառ կարողիկոս և եպիսկոպոսապետ
ամենայն հայոց, ամենաողորմած տր

...Ձեր զինափառութիւն բարեհաճեցաք սուրհանդակով տառքել տա իս զհինգ հարիւր ուսւրի արծաթ թղթաղբամ վասն երկրպոլցն շափանաս աշակերտացն Սանահնոյ ուսումնարանին, Մովսիսի Տէր-Յակոբեան և Պողոսի Սանակեան, տուելոցն հողացողութեամբ հանդուցեալ Ակաթոնի Ալիմեանց քի գործատուն շաքարաշինութեան, վասն ուսման այնը արուեստի: Երկուսասարգոս այստակ յայժ տուջացեալ են յարուեստի իւրանց, սակ որոյ տուցեալ գտանելն լիակատար գովառանութիւն ի նորին զերագանդութիւն Միքայէլ Պաւլովիչ Պողեմէն: որ զրեալ է յաղագս նոցա առ պատուէլի Յովհաննէս Ստեփաննան Օնանեանց: Ի միջի անցեալ ամառ, յառջ քան գտանալն իմ զգրութիւնս Ձեր, խօսեցառ յաղագս տառքելոյ նոցին առ զինափառութիւնս Ձեր ի ներկայութեան իմում և Յովհաննէս Օնանեանց, որ նա ինքն մեծառ յօտարութեամբ յանձն էառ զհոգատարութիւն տառքման նոցին, որոց աղագաւ արդէն ծանուցեալ զնա, սպասեմ այժմոյս պատասխանոյն ի նմանէ:

Շնորհէք ինձ թողութիւն հաւաստի ասնել զզինափառութիւն Ձեր, թէ զՁեր բարձր յանձնարարութիւն կատարեցից միակերպ սիրով և մտերմութեամբ և գլխապայէ նմանապէս ոչ կասկեցից սալ զզարտ ու պաշտած ծանօթութիւն Մեծիք զինափառութեան...²

Ի ս. Պետերբուրգ
յամի ազգական 1304
Ֆիլիպան 1835—ի 10 փետրվարի
Նիկողայոս Սամոյելեան Զանդիանի՝

3. ԳԵՆԵՐԱՄ Ս. Պ. ՊՈՋԵՆԻ ՆԱՍՍԵ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ, ՈՐՈՎ ԳՈՎՈՒՄ Է
ՍԵԱԿԵՐՏԵՐԻ ՍՈՎԱՍԻՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՏՆՈՒՄ, ՈՐ ՆՐԱՆՑ ԳԱՐՑԻ
ՃԱՆԱԳԱՐՀԱՍԽԱՍԸ ԿՆՈՂԱ ԻՆԷՐ՝ 1855 թ. ՄԱՐՏԻ 3, ՊՈՒՍՏԱՎ՝

На почтеннейшее письмо Вашего Святейшества от 28 января сего года спешу иметь честь ответить, что я до сих пор не полу-

1 ՀՊՄՍ Պետ. Մասննագրան, Արխիվային բաժին, Ա. Երիջյանի արխիվ, թղթ. № 152, վավ. № 969.
2 Վավերագրեր տղաբուս և նր հրատարակելով:
3 ՀՊՄՍ Պետ. Մասննագրան, Արխիվային բաժին, Ա. Երիջյանի արխիվ, թղթ. № 152, վավ. № 103:
4 Նամակի սկզբում Ն. Աշտարակեցին ստացման կողակցությամբ արդև է հետևյալ նշումը: շնորհով զերկայնցս, թեան տեսան Միխայիլ Պաւլովիչ Պողեմ, 14 ասրելիք ընկալայա:

чал от Г. Шанишева ни письма ни денег, а если получу, то буду иметь честь немедленно возвратить их к Вам. С самого начала поступления ко мне двух учеников из Армян они получали от меня содержание безденежно: по временам я давал им небольшие денежные подарки за их труды и прилежание и перед отъездом выдавал каждому в награду по 50 руб. сер. Покойный Агафон Давидович Акимов передавал мне сих молодых людей от имени Вашего Святейшества и после Вы сами соблюдали писать мне о них. Сохраняя к Вашему Святейшеству глубокое уважение я поставил себя за удовольствие исполнить Ваше желание и бог благословил труды наши. Молодые люди вышли прекрасные и дело свое знают.

Что касается до вещей, которые Ваше Святейшество желает иметь, то вблизи моего имения они теперь не делаются, а их всего удобнее выписать из Москвы от содержателей механического заведения братьев Бутенон. Терку нужно выписать вместе с приводом и назначить сколько берковцев свеклы она должна переработывать в сутки.

Поручая себя молитвам Вашим, честь имею быть с глубоким уважением и совершенною преданностью Святейший Патрварх, Милостивый Государь Вашего Святейшества покорнейшим слугою,

М. Позен

Полтава, 3 марта 1855

4. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՍՆԱՅԻՆ ՆԱՍՍԵ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ ՏՈՒՐԱԿԱՆ ՍՄՈՒՆԵՐԻ
ԵՎ ԷՍԵՐԻՍ ԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՍԱՎԻՐՎԱՍ ԱՆՀՐԱՔԵՏ ԳՈՐԾԵՐԵՐԻ՝ ՄՈՏ
ԱՊԱՏՎՈՒՄ ԱՊԱՏԵԼՈՒ ՍՄԱՆ: 1856 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 31, ՍՄՈՎԱՎ՝

Ձերոյն վենափառութիւն, հասարակայնամ Տէր

Ձերեան ամենայարգ գրութիւնս Ձերոյն զինափառութեան տղեալս յանցելում ամի, ի 16 յուլիսի՝ համարաւ 170, յՑ սկզտեմբերի՝ համարաւ 241, և ի 22 հոկտեմբերի՝ համարաւ 317, ընկալեալ եմ ի վաղուց, մի զհետ միոյ: Այլ զի առ պատասխանագրութիւն նոցին չեմ ձեռնահաս եղեալ մինչև ջարդ յորոց և իցէ պատճառաց, ես ինձն զիս արժանի մեղադրանաց գատելով ի մասինս յայժմիկ փութամ նախ առաջին ի սկզբան նամակիս դայարագութն Ձեր հայցել զներողամտութիւն, և չեմ իսկ անյոյս լինողունելոյ գնայցուածս իմ:

Մի մամուլ աղագրութեան համակ երկաթեայք, բոս տառքնոյն օրինակի, և գործիքն շաքարաշինութեան նշանակեալք ի ջուցակին տառքելոյ առ իս ի Ձերմէ զինափառութեմէ ի մօտ աւուրս ունին պատրաստել բոս խոտասանայոյ արուեստարիւն, որ յանձն ասեալ է շինել գայնս: Եւ ես յետ պատրաստելոյն ամենայն մասամբք՝ ոչ զանդազեցայց ու գեղերէլ զամենայն ի միասին ուղղակի ի Տիբիսի զէթ յառաջիկա ամսան փետրվարի:

1 Մասննագրան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական գիման, թղթ. № 170, վավ. № 37:
2 Ն. Աշտարակեցին նամակի վրա մակագրել է՝ շնորհակցան Ստեփաննան Յաննանց: 23 փետրուարի ընկալայա:

Ի յայտնեն իմ ազնուականին Եկիղայանի Սամուէլեան Շանշեանց զկամա բարեկուս Տեանոց յազգաս հասուցանելոյ առ իս զհինգ հարիւր մանէթան առաքելայ ի Ձէնջ առ ինքն, վասն մատուցանելոյ Միխայել Պաւլովիչի զհենքալ Պողինի, զայս և եթ ընկալայ ի նաման պատասխան, թէ զնախոյշխատակալ զումարն զբամոց զարձուցեալ է անդրէն նորին ազնուականութեանն առ Ձերզ վեհափառութիւն:

Նորին վերեզանցութիւն Մ. Պ. Պողեն, որում զէպ եղև ինձ հանգիպել ոչ ի վաղուց, խնդրեաց յիննն մատուցանել յիւրմէ կողմանէ Ձերում վեհափառութեան զողջոյն սիրոյ և զհամբոյր յարգանաց՝ յայանելով զիրն շերմեանցութիւնն առ աստուածապարտեհ հոտազկուց:

Ի նորումս ուրախական յեմք համբու յազգաս ցանկալի խաղաղութեան, որոյ և մերձ ընդ մերձ հաստատութեանն ակն ունեմք, մաղթելով յԱստուծոյ բարձրելոյ զմեծ սղորմութիւն նորա ի վերա մեր և ի վերա սանենցուն ըստ օրհնութեան մեծի քահանայապետիդ, որում եմս և եղց հանաղազ սաննաշերմեանցն սրաէ սաննախոնարհ ծառայ՝

Յովակնէա Յոնանեան՝

ի 31 յունվարի 1856 ամի
ի Մոսկվա

5. Մ. ՄԵՐՅԱՆԻ ՆԱՍԿԸ Ե. ԱՇՏԱՐԱՎԵՅՈՒՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ԵՄԱՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԹԵՇ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍԼՆԵՆՈՒ ԵՎ ՍՈՏ ՍՊԱԳՅՅՈՒՄ ՈՒՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ: 1856 Ք., ՍՈՍԿԿԱՅ

Ազնուական Յովաննէա Ստեփանեան Յոնանեանց ի 31 յունվարի ուղարկեցաւ աստի շագիկառօզ զէպ ի Պետերբուրգ վասն կարեոր գործոյ ուրոց. յետ իւր 20 աւուրց ունի վերադառնալ: Ձերք հաս մամուլը ապագրութեան համակ երկաթիս առաքելայ է նա հետզհետէ ի զանազան ժամանակս յանցելում ամի ի Տփլիս, առ ի հասուցանել առ Ձերզ վեհափառութիւն, և զչորրորդն ես՝ նայնպէս համակ երկաթի, որ այժմս պատրաստակ լինի, ունի առաքել յետ գարձին ի Պետերբուրգայ, հանդերձ այլովք ես զործեօք շաբաթաշինութեան, զորս խնդրեալ էիք ի նմանէ: Չայս հակիրճ տեղեկութիւն ընկալեալ ի նոյն ազնուական յարեկամէ մերմէ ի շտապ ժամու ոչ աւելորդ համարիմ հաղորդել և Ձերում վեհափառութեան:

Մ. Մսերեանց՝

6. ՄՍԵՐ ԵՎ ՉՐԱՐԱՐ ՄԵՐՅԱՆՅԵՆԵՐԻ ՆԱՍԿԸ Ե. ԱՇՏԱՐԱՎԵՅՈՒՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՎ ԵՄԱՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՔԻՇԼՍ ՈՒՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ: 1856 Ք. ՇՈՒՆՍԻ 20, ՍՈՍԿԿԱՅ

Ձերոյն վեհափառ տէրութիւն, մեծ խնամակալ եկեղեցւոյ Հայաստանեայց

...Յամոյս 16, զերազնիւ բարեկամ Տեանոց և հաստատրինն որոյ Լիկեղեցւոյ մերոյ Իւան Ստեփանիչ Յոնանեանց, յետ զրել տալոյ զպատաս-

1 ՀՄՍՒ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական զիվան, ԲլզՔ. № 181, գլմզ. № 42ա:
2 Ա. Աշտարակցիին նամակի գրա մակագրել լ' ՇՄսեր Մաղխոր. 2 մայիսի ընկալայն:
3 ՀՄՍՒ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական զիվան, ԲլզՔ. № 181, գլմզ. № 42բ:
4 Ա. Աշտարակցիին նամակի գրա մակագրել լ' ՇՄսիդար. Մսեր Գրքիցարեան, 18 օգոստոսի ընկալայ, 10 սեպտեմբերի պատասխանեցաւ, համարելու՝ 303ա:

խանի գրութեան Ձեր առ ինքն յԶ-էն ամոյս՝ համարով 200, խնդրեաց յիննն ծանուցանել Ձերում վեհափառութեան, թէ առաքելայ է ի Տփլիս զչորրորդ մամուլն ապագրութեան և զայլ գործիս շաբաթաշինութեան, որպէս նշանակեալ կան յասանձին թերթի, զոր գասնէք ի սին...¹

Ձերոյն վեհափառ տէրութեան նուաստադոյն ծառայ

ի 20 յունվար 1856 ամի
ի Մոսկվա

Մսեր Մսերեանց
Չարմայր Մսերեանց՝

7. ԷԶՄԻՍԵՐԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՅՈՒՆԸ ԱՏՐԱՍԿԱՆԻ ՍՈՍՆՈՐԻ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՈՐՈՎ ՀԱՆՁՆԱՐԱՎՈՒՄ Ե ԶԵՌՔ ԲԵՐԵԼ ԼՍԿՈՐԱԿ ԶԱԿՆԴԵՂ ՍԵՐ՝ ԷԶՄԻՍԵՐԱՍԿԱՆ ԿԱՎԱՍԹԵՆԵՐՈՒ ՄԵՍԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԱՍԱՐ ԼՍԿՈՐԱԿ ԶԱԿՆԴԵՂ ՅԱՆԵՆՈՒ ՀԱՍԱՐ: 1857 Ք. ՇՈՒՆՎՍԻ 18, ԷԶՄԻՍԵՐ

Գերազատիւ առաջնորդին հայոց Առաջապահեցի Սանակ եպիսկոպոսի Սաղուեան

Համար 12
ի 18 յունվարի 1857

Աշակերտք շաբաթագործութեան, զորս առաքելայ էր նորին վեհափառութիւն ի Մոսկվա յազգաս ուսանելոյ ի գործարանին վերողբեալ արձեռտի, ի սկզբուն գարնան անցեալ ամի վերադարձեալ ի սուրբ Էջմիածին՝ ձեռնարկին պատրաստել զգործարան շաբաթաշինութեան և յանցեալ աշնան ի ձեռք բերեալ ընդ ձեռն վանքական կառավարութեանն զբաւանանափ ձակողեղ և նոթք փորձ փորձեալ արձեռտ իւրանց շինեցին յԱթոս այլր երեք փութք չափ սպիտակ և մարար շաբաթ: Ի փորձոյ անդի ընկեալ նորին վեհափառութիւնն ի Թիֆլիզ առաջադրէ վանքական կառավարութեանս ապլ բերել ի Պարսկաստանէ զսերմն բազուիչ յազգաս սերմանելոյ ի կաւածս վանիցն Էջմիածին յառաջիկայ գարնան, ուստի սանմանեցին խնդրել ի Ձերզ սրբազնութենէ հոգ յանձին կալեալ հրամայել որոց հարկն է գնել յայտ զչորս լիտր սերմն բազուիչ սերմանեցելոյ ի մէջ առ սևանոցոյ և ոչ բորակայնոյ և փութով անարատութեամբ հասուցանել ի վանքական կառավարութիւնս վասն վերողբեալ հարկաւորութեան, ստանալով ի սոյն Ասաննէ զդինն և զվարձ բերողաց շնորակալութեամբ²:

8. ԷԶՄԻՍԵՐԻ ՍԻՆՈՒԻ 1857 Ք. ՍԱՅՍԻ 13-Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄ ԵՄԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅԱՆ ՍԱՐԳՈՒԹՅՈՒՆՑ ԸՐԱՅԱՐՎԵԼՈՒ, ԶԵՌՔ ԲԵՐՎՍՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՈՐՈՒՄ ԱՇՏՎ ԷԶՄԻՍԵՐԻ ՍԵՆՍԱՐԱՐԱՆԵՐԻ ՀԱՆԱԵՆՈՒ ԵՎ ԵՄԱՐԱՐՈՒՄ ՎԱՐՊԵՆԵՐԻՆ ԱՋԱՏ ԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի 13-ն մայիսի յամի փրկական 1857 և սոզական ՌՅԶ ըստ հրամանի նորին Կայսերական Մեծաութեան ի Սինոդիս լուան նախ զինչորայի և երկրորդ յայտարարութիւն վարդեառաց շաբաթագործութեան Պողոտի Սա-

1 Կաթողիկոսական զիվանում զանգանվել է նաև այց տանձին թերթը, որի գրա գրված է. «Для Его святейшества патрарха Нерсеа отправлены из Москвы ниже-следующия вещи: Типографский станок, 4 мая 1856 г., машины и инструменты для сахарного завода, 13 июня 1856 г.» (Կաթող. զիվան, ԲլզՔ. № 184, գլմզ. 513):
2 ՀՄՍՒ Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական զիվան, ԲլզՔ. № 181, գլմզ. № 42բ:
3 ՀՄՍՒ Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական զիվան, ԲլզՔ. № 185, գլմզ. № 50:

հակեան և Մովսիսի Տէր-Յակոբեան ի 26 ապրիլի և 10 սոյն մայիսի ներկայ տի, յորոց առաջնոն յայտնեն թէ ի 1850 տի վեհափառ Հայրապետան ամենայն Հայոց Տէր ներսէս, առաքեաց զնոսս ի Ռուսաստան յաղագս ուսանելոյ զարուեստ շաքարաշինութեան և այն ի պէտս օշոթի Աթոռոյն, և նորս յընթաց հինգ ամաց, առանց իրիք ծախուց և ձեռնառուութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, ուսեալ անթերի զայն արուեստ քրանաջնէ և անձնանուէր աշխատանօք վերագարձան աստ, ուրանոր շարունակեալ յընթացս երկուց ամաց մեծաջան աշխատութեամբ ի կատար անեալ զփորձ շաքարի բոս պատկանելոյ՝ առաջի են արարեալ նորին սրբութեան, յորում թէ զորքան ճիգն ի գործ եղին ի սրտէ կարեն վկայել ճշմարտասէր միարանք Աթոռոյն, որք իսկապէս եղեալ են սկանատեք, մանաւանդ սրբազան Մակար եպիսկոպոսն, որոյ տեսչութեամբն է լիւս այն ամենայն գործն: Այլ որովհետև հոգելոյս հայրապետին թողեալ անկատար զայս գործ՝ կնքեաց զհետև իւր բոս սանձանեցելոյ վերին տեսչութեան, վասն որոյ խնդրեն ի Սինօզէս կամ հրամայել շարունակել վերստին զայս արուեստ, զի մի՛ ի դերև ելցէ տարժանաքիրտն նոցա վաստակ և ընդ նմին նշանակել վասն նոցա զարժանաւորն ոսձիկ և կամ հատուցանել զանցեկոց ամաց բազմաշխատ ծառայութեանց զարժանաւոր վարձս, ըստ որում զքեռուարին է նոցա ուսանիլ նոր արուեստ աշխարհօգոս մակաջութեանց և նոյաւ ապահովել զինչցազ իւրեանց: Եւ երկրորդում մատուցանեն զցուցակս գործարանապատկան գործիաց, պարագայից, սերմանց ճակղեղի, եղեգան շաքարի և ներկորէից, յարակցելով թէ յընծայելն ի լոյս զկատարեալ փորձ շաքարի զոյացեալ եղև վեց դուրս շաքար յորոց երեքն առաջի արարին նորին վեհափառութեան, զմինն մատուցին տեղակալ Ատենապետի Սինօզիտ, զմինն Մակար եպիսկոպոսին և միւսն մնայ առ նոսս ի ցոյց ցանկացողայ, և յայտնեն՝ թէ յընթացս այսքան երկարատև անխնջ աշխատութեանց նոցա, ոչ միայն չէր պարս ցուցանել զայսքան սակաւաքանակ շաքարս, այլ և ի լոյս ընծայել կարէին առուել քան զերեք հազար փութ, այս պակասութիւն էր ոչ ի նոցանէ, այլ ի պակասութենէ զործարանաց և պարագայից, որք ոչ գտան աստ բոս սանձանելն կարգի հասարակեալ գործարանաց պարագայից նոցին՝ եղևոց ի Ռուսաստան: Ի մատուցեալ ցուցակացն առաջնոյն երեկն զանազան գործիք և պարագայք գործարանին շաքարի Աթոռոյն են՝ ձեշտեղէն 11 յօդուածովք, երկաթեղէն 16 յօդ., պղնձեղէն 3 յօդ., գործիք ըերեալք ի Ռուսաստանէ 4 յօդ., ի գործարանէն Տփլիսայ 6 յօդ., փայտեղէնք 23 յօդ. և երկրորդէն՝ սերմորայք բազկի, եղեգան շաքարի և զանազան ներկորէից 8 յօդուածով: Իսկ ի մասնէն ծախուց հանդուցեալ կաթողիկոսի երեկցաւ, զի նորին վեհափառութիւն շնորհեալ է վերոյիշեալ Մովսիսի Տէր-Յակոբեան զերկու հարիւր ըութիս ի Տփլիսա քաղաքի, ի վարձ նոյնպիսի աշխատութեանց նորս ի վերա շաքարաշինութեան:

Հրամատակցին: Ի վարձ երկամեայ աշխատութեանց ի վերայ շաքարաշինութեան վերոյիշեալ վարպետացն Պօղոսի Սահակեան և Մովսիսի Տէր-Յակոբեան, ապ իւրաքանչիւրոցն ի նոցունց զչօրս չօրս հարիւր ըութիս արծաթոյ ի զանձարանէն Աթոռոյս ընդ նոցունց ստորագրութեամբք, ընկալանելով ի հաշիւ հասանելի մասին երկրորդին ի նոցունց՝ Տէր-Յակոբեանցի և զշնորհեալն ի հանդուցեալ Հայրապետէն զ200 ուրբիւն, և տո այս

վարձան առաքել հրաման զանձապետին սորին վասն պատշաճութեան կատարման վերոյիշեալոցն: Այլ որովհետև շարունակութիւն շաքարաշինութեան ի վասն Էջմիածնի բոս երկամեայ փորձառութեանն երեկցաւ անձեռնառու և անօգուտ, վասն որոյ զաղաքեցուցեալ զայն, ծանուցեալ նայն խնդրաւորքս զորձ վարպետացն պատուիրելով նոցա, զի զամենայն բոս տեսչութեամբ գործ վարպետացն պատուիրելով թէ պղնձեղէնս, և թէ փայտեղէնս ևս, և նոցին և եղև պարագայս, գործիս՝ թէ պղնձեղէնս, և թէ փայտեղէնս ևս, և սերմօրէս յանձնել ծախսարարացն Աթոռոյս՝ եղևադար և Սարգիս վարպետացն, որոց և հրամանադրել՝ զի զստացեալ զայնոսիկ իրեղէնս ի վարպետացն բոս ստաջարկեալ ի նոցանէ ցուցակին յանձնեցին զայնս գործաւարաց տնտեսական կատարութեան Աթոռոյս բոս իւրաքանչիւր տեսակացն և բոս անձնիւր պատշաճագործարացն, պատուիրելով վերջնոցն իւրանց զիմաց, զի զստանալի իրեղէնս գրեցէն ի մասս ի տուեալ ի Սինօզէս իւրաքանչիւրոցն նոցունց առ այս առարկայ մտպաւիճեալ մասեանս: Առ այս վարձան առաքել առ ծախսարարն զպատճեն ցուցակի պարագայից և այլոց մատուցելոց Սինօզիս ի շաքարագործ վարպետաց և այսու գործն բոս այսմ առարկայի ի Սինօզիտ համարել աւարտեալ վասն տալոյ յիւրումն ժամանակի յԱրխիւն ի պահեստ:

Տեղակալ տնտեսպետի՝ Գուկաս արքեպիսկոպոս
Անգամք Սինօզի՝ Արքեպիսկոպոս ճայոց Սարգիս
Երեւոյս վարպետ Տէր Կարապետեան
Գրիգոր վարպետ Յովրեանց.
Գեորգ վարպետ Մկրտչեան
Սարգիս վարպետ Տէր Գառպարեան
Ի պաշտաման տնտեսպետի (ստորագրութիւնն):

1 ՆԱԽԻ Գեա. Մատենադարան, Արխիվային բաժին, Սինօզի օրագրութիւններ
թղթ. № 41, վաղ. № 305:

Ակադեմիկոս Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՀԵՐՄԵԱՅ ԵՌԱՄԵԾԻ ԱՌ ԱՍԿՂԵՊԻՈՍ ՍԱՀՄԱՆՔ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1. Հերմես Եռամեծի կրոնական-փիլիսոփայական այս «Սահմանք» գրվածքի հայերեն թարգմանությունը, որ առաջին անգամ լույս է տեսնում մեր այս հրատարակությունը, արժանի է առանձին ուշադրության, որովհետև իր ուրույն ու արատափոր իմաստասիրական բովանդակության շնորհիվ սա հատուկ տեղ է զբաղեցրել թարգմանական հայ գրականության մեջ:

Ուշադրով է առանձնացնում նաև այս գրության հեղինակի խնդրը, որ կարոտ է հատուկ պարզարանման:

Ինչպես հայտնի է պատմագիտական ուսումնասիրություններից, Եգիպտոսի Ազիքսանդրիա քաղաքը զասել էր մակեդոնական-հունական և հռոմեական տիրապետության մասնակի համաշխարհային մեծ կենտրոն և այնտեղ տեղի էր ունենում, Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների բուռն և սերտ հաղորդակցության ու հարաբերությունների հետեանքով, կրոնների մասնավորապես Ազիքսանդրիան մեծ զեք էր կատարում այդ մասնակի նաև իրրև հունական ու արևելյան կուլտուրաների մերձեցման ու փոխադարձ ազդեցության րեզլմսավոր մի միջավայր:

Հունական փիլիսոփայությունը, զլիսավորապես պղատունականը՝ յուրահատուկ կերպով այստեղ զուգակցվեց կրոնական արևելյան միտաբանային ևս և Ազիքսանդրիայում շնորհիվ դրան առաջացան նոր փիլիսոփայական դպրոցներ՝ Երրայական-ազիքսանդրյանը, նորդիթագորականը և նորպղատունականը: Կրոնա-փիլիսոփայական նոր այս ուղղությունը նկատելի է, մասնավորապես, Փիլոն Երրայեցու (մ. շ. 50 մեր թվ. հ.) երկերում ու նաև ավելի ուշ շրջանի նորպղատունականների Պղոտինոսի (204—269), Յամբլիկոսի (մ. շ. 333 մեր թվ. հ.), Պրոկղոսի (410—485) և սրանց հետևորդների աշխատություններում:

Պետք է մատնանշել, որ նորպղատունականության վրա, որը կենտրոնացած էր Ազիքսանդրիայում, մեծ ազդեցություն էր գործել, հատկապես, նաև հրեական-քրիստոնեական գնաստիցիզմը, որը խստունուրդ էր արևելյան ազդեցություն տակ զանվոզ պղատունական ու նորդիթագորական մասնաշաղկապների և քրիստոնեական դավանության հավատասլիքների:

Հենց այս կրոնական-իմաստասիրական երկերի շարքին են պատկանում այսպես կոչված «Հերմեսյան գրվածքները», այսինքն՝ այն աստված-իմաստական բնույթի գրականությունը, որի հեղինակն էին համարում եգիպտական թոթ աստուհ: Այս վերջինին հույները համապատասխան էին

ընդունում էրինց չէրմես ասածուն, ուստի և նրան վերադրված էրկերը սրանք կոչում էին «Հերմեսյան»:

Ինչպես այժմ պարզված է, նրն եզրիդասցիներն իրենց բոլոր կույտու- բական նվաճումները, դրանց թվում նաև գիրն ու գրականությունը, ենթադրում էին իրեն երկնքի շնորհում և աստվածների հայտնագործություն: Նրանց կարծիքով, գրի նկարողը և գրականության ու գիտության հովանավորողը իրենց իմաստուն Քոթ աստվածն էր: Ենչպեցեպան հայր Կղմես Ազնաթանգրացին (մ. շ. 217), որը շատ լավ ճանաչում էր Ենիգրտսը և ծանոթ էր նրա նրն ավանդություններին՝ վկայում է, որ այնտեղ կային 42 «Հերմեսյան երկեր»: որոնցից 36-ը պարունակում էին եզրպատկան փխխտութայությունը, որ ստորում էին քուրմերը: Ավելի ուշ ժամանակներում ներաստավորում են հարյուրավոր և հազարավոր Քոթ-հերմեսյան գրվածքներ:

Բոլոր այդ գրվածքները ինչպես պարզված է այժմ, սերտ կապ ու առնչություն են ունեցել եզրպատկան ասանդակի նկատմամբ և նրանց սրբազան գրքերը և եղել են, անշուշտ, եզրպատկան քուրմերի երկասիրությունները: Աշագրավ է ասանձնապես, որ Քոթ-Հերմեսյան գրական-գիտական ստեղծագործությունների շարքին պատկանել են, բայց իմաստասիրական ու աստվածաբանական երկերից, նաև տիեզերագիտական, բնախոսական, բժշկական, քերականական և այլ երկասիրություններ: Սրանց բոլորի մասին մանրամասն տեղեկություններ է առիթս Ա. Պիշմանը Հերմես Ենամեծի անձնավորությունն ու երկերին նվիրված իր ուշագրավ ուսումնասիրության մեջ¹:

2. Կրոնա-իմաստասիրական և բժշկական մի քանի երկեր, որ վերագրված են «Հերմես Ենամեծ»-ին, այսինքն՝ նրն եզրպատկան Քոթ-Հերմես ասածուն, պահպանվել են ու մեր ձեռքն են հասել մասամբ հունարեն լեզվով, մասամբ էլ լատիներեն ու արաբերեն թարգմանությունքով²:

Հերմեսի վերագրված հունարեն երկերից ամենազյայտվածն է Պոյմանգերը, որ հասուկ գրվածք է բարի հովիվի մասին: Այս երկը ժողովածու է 14 փխխտական հրահանգների, որոնց միջոցով Հերմեսը իր Քոթ որդուն և Ասկլեպիոս աշակերտին սովորեցրել էր աստվածային գիտությունը³: Նման բնույթ ունեն Ասկլեպիոսի աված խրատներն Ամմոն թագավորին, Սոդրեսոսի ժողովածուի մեջ բերված քաղվածքները ու նաև լատիներեն լեզվով պահպանված Կեզ-Ապուլեյոսի թարգմանությունը «Ասկլեպիոս կամ Հերմես Ենամեծի արամաստությունը» (Asclepius sive dialogus Hermetis Trismegisti)⁴:

¹ Տես Турвен Б. А., Египетская литература, т. I, Москва, 1920, стр. 9.
² Dr. Richard Pietschmann, Hermes Trismegistos nach ägyptischen, griechischen und orientalischen Ueberlieferungen, Leipzig, 1875.
³ Տես W. Christ, Geschichte der griechischen Litteratur, dritte Auflage, München, 1898, стр. 836.
⁴ Զրատարական է 1854 թ. Քեդիոնում՝ Parthey, Hermès Trismegistè Poemander, Berl. 1854. Իրեն հավելված աղագրված են նաև «Ասկլեպիոս աված խրատներն Ամմոն թագավորին» (Paris, 1554). Տես Christ, Geschichte der griechischen Litteratur, 1898, էջ 836:
⁵ Հերմես Ենամեծի կրոնա-իմաստասիրական այս երկերը թարգմանել է Փրանսիեն Մենարը՝ L. Menard, Hermès Trismégiste, trad. compl. précédée d'une étude sur l'origine des livres hermétiques, Paris, 1866.

Վերոհիշյալ երկերը, ինչպես մասնանշում է Ցելլերը, գրված են, հավանորեն, երբորդ գարի վերջերում մեր թվականությունից հետո: Ցելլերը մասնանշում է, որ Հերմես Ենամեծի Պոյմանգեր գրվածքին ծանոթ է եղել եկեղեցական հայր Լակտանտիոսը (250—330):
Որ Հերմեսի վերագրված հունարեն երկերը, բրայեա, ուշ շրջանի գրվածքներ են՝ այդ մասնանշել է վերոհիշյալ իր աշխատության մեջ (էջ 33—34) նաև Պիշմանը:

«Այսպես կոչված Հերմեսյան գրվածքների հորինման ժամանակ, —ասում է Պիշմանը,— Քոթի նույնությունը Հերմեսի հետ արդեն այնքան մոտազրկել էր, որ հնարավոր էր համարվել ընդունել երկուսին իրեն տարբեր անձնավորություններ: Մեր ձեռքը հասած երկերում, ինչպես նշում է Պիշմանը, Հերմեսը համարվում է Քոթի հայրը և Ասկլեպիոսի ուսուցիչը: Բացի կրոնա-իմաստասիրական բովանդակություն ունեցող երկասիրություններից իրեն Հերմես Ենամեծի աշխատություն մեր ձեռքը հասել է նաև բժշկական մի գրվածք, որը աղագրված է Իդիլիքի հրատարակած «Physici et medici graeci» երկնատարակում⁵:

Բոլորովին նոր մի գրվածք է ներկա հրատարակությանը լույս տեսնող «Հերմայ Ենամեծի առ Ասկլեպիոս սահմանք»-ը: Այս հետաքրքիր համազրկ, որի հունարեն սկզբնաղբիւրը, ըստ երևույթին, մեզ չէ հասել իմբակից է, ինչպես երևում է նրա բովանդակությունից, վերոհիշյալ հունարեն գրված երկերի շարքին: Հայրեն թարգմանության կարևորությունը, անշուշտ, խիստ մեծ է, որովհետև սրա հունարեն սկզբնաղբիւրը, հավանորեն կրած է:

3. Հերմեսի «Ենամեծ» մականվանը նորագույն երկերում արվում է տարբեր մեկնություն: Ակադ. Փերեյի կարծիքով, Հերմեսը «Ենամեծ» է անվանվել տուրպես թագավոր, մարգարե և փիլիսոփա⁶, Ավիլի ճիշտ է ըստ այն կետերի կարծիք⁷, որը մասնանշել է, որ «Են»-ի հետ կազմված մակդիրները հունարենում ունեն ոչ թե երկրության, այլ գերադասանի իմաստ ուստի և «Ենամեծ» նշանակում է պարզապես, ինչպես ուղիղ մեկնել են նաև Հայկազյան բողոքքի կազմողները՝ «Երիցս մեծ, կարի մեծ, մեծանուն»: Լակտանտիոսի վկայությամբ՝ Հերմեսն արժանացել էր «Ենամեծ» անվան իր առաքինության և բազմաթիվ արվեստների գիտություն պատճառով⁸:

Հայոց մասնանշարության մեջ «Ենամեծ» մակդիրը հայտնի է գառուլ համանորեն, Հերմես Ենամեծի Մամանքը թարգմանվելուց հետո: Այնուհետև, բոս երևույթին, այդ թարգմանության աղղեցությունը համարվում էր նաև այլ հեղինակներ:

Հերմես Ենամեծը, ինչպես տեսնում ենք, գոյություն ունեցող մաս-

¹ Տես Ed. Zeller, Philosophie der Griechen, III, 2 p., էջ 224 հեռ:
² Տես J. L. Ideler, Physici et medici graeci, vol. I, Berlin, 1841, էջ 430—440:
³ Տես C. A. Жердецов, Рамская Империя, Петг. 1923, էջ 91:
⁴ Տես Letro ne Inscription grecque de Rosette, Paris, 1841, էջ 20:
⁵ Տես R. Pietschmann, Hermes Trismegistos, էջ 36: Համեմատել նաև Lactantius

ցածին նեղրնակ է, որին վերագրվել են եզրիդական-հունական ծագում ունեցող ստադիա-իմաստական և այլ դիտական երկեր: Հերմեսի երկերն ուսումնասիրողները նրա թեոսոփիական ուսման մեջ ցույց են տալիս երեք գլխավոր աղբյուր՝ եզրիդական բազմաստվածություն, հրեական-քրիստոսական միաստվածություն և հունական փիլիսոփայական իդեալիզմ¹: Ըստ այդ ուսման ստույգ տեղում (Voss) է, որ ծնունդ է տալիս Երանին (Λογος), ստացած Երանին միջոցով ծնունդ է տալիս նաև օտեղծարարական մտքին: Աստվածությունն ստանձնանառուի է ստեղծարարությունը երկնքում, իսկ մարդուն՝ երկրում, Հերմեսի փիլիսոփայությունը, ինչպես կարծում են, ըստ իր էության մաս է գնոստիցիզմին:

Հերմես Եսամեծի երկերի մասին վերջերս լույս են տեսել Կրոլի և Ռեյտցենշտեյնի աշխատությունները², որոնց մեջ նրանք հարից քննություն են անել այդ երկերի բովանդակությունը:

4. Հերմես Եսամեծի Մանանդի Մանանդի թարգմանության մասնակից կարելի է որոշել հիմնվելով լեզվաբանական այն դիտողությունների վրա, որ մանրամասն մեջ են բերված իմ «Հունարան զգրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մեջ (Վիեննա, 1928):

Կրոնա-իմաստասիրական այս երկը, ինչպես զգույց չէ համոզվել, թարգմանված է, հավանաբար, Պետրոյից-Փիլոնյան խմբի երկերից նույն և խմբակից է մեր մասնանշած հունարան թարգմանությունների երկրորդ խմբին, որին պատկանում են «Տիմոթեոսի կայսերական պալատի Ապոկալիպտիկ ձևաբանությունը» և Յամբլիխոսի խմբի արեստոսիայան երկերը³:

Մանանդի թարգմանության մեջ զործ է անված Պետրոյից-Փիլոնյան խմբի հատուկ բառապաշարը, որ չէ նանդիլում ոսկեզարյան անվանված Նինդերորդ զարի մասնանշարական երկերում: Այսպիսի ստանձնանառուի բառեր են.

1. «Անրեդուն» — ունեն նաև Փիլ. Ժ. Բան. Պիտ. 392. Փարզ. Բազմաբեղուն» Փիլ. լին. Գ. 44, էջ 216. Երեղնաւոր, անրեղնաւոր» Պիտ. 487, 459. Փիլ. Նախ. 45 կն:
2. «Անորակ» — ունեն նաև Փիլ. լին. Գ. 171, էջ 376. Փիլ. այլար. էջ 117. Յագ. Յառ. էջ 79. Էլիսա, էջ 93. Գ. Պարփ. 307 կն:
3. «Բազդատություն, բազդատեմ» — Թր. քեր. 15. Փիլ. լին. 68, 134, 215, 412 կն. Փիլ. տես. 6 Պիտ. 357, 386 կն. Իրեն. Հերմ. 13, 102, 165. Թէն 6, 16, 24 կն. Իրեն. Յոյցք 60. Գ. Ման. 130. Յամբլ. Մարթ. 87 կն:
4. «Բազդատություն, բազդատեմ» — Փիլ. լին. Բ. 55, էջ 136. Գ. 241, էջ 437. Փիլ. Յագ. Յառ. 4. տես 24. Թր. քեր. 8, Պիտ. 389. Տիմ. Կուզ 121,

¹ Shtu Жебелев, Римская Империя, էջ 93: Համեմատեմ Н. М. Карпинский, Жизнь Аполлония Тианского, журнал Министерства Нар. Просв., 1876, № 1, նաև Д. И. Писарев, Аполлоний Тианский, Русское Слово, 1861, № 6 8.
² Shtu F. Kroll, Die Lehren des Hermes Trismegistos Münster, 1914 R. Reitzenstein, Heid Ak. Sitzungsberichte, 1917, № 10. Նույնը, Iranische Erlösungsmysterien, Bonn, 1921.
³ Shtu իմ աշխատությունը — «Հունարան զգրոցը», Վիեննա, 1928, էջ 124—142:

- 276, 279, 313 կն. Իրեն. Հերմ. 9, 62. Ար. Մարթ. 383. Յամբ. Մարթ. 410, 422. Յամբ. Պերիարմ. 499. Ներ. Պարփ. 237. Գ. Ման. 193, 197 կն:
5. «Գերաշխարհիկ» — Պիտ. 371, 417. Եզրիդաշխարհականք» Տիմ. Կուզ. 26.
6. «Գոնյառություն» — Փիլ. տես. 7. Պիտ. 376. Իրեն. Հերմ. 29. Յոյցք 5. Տիմ. Կուզ. 13—15, 19—22 կն. Ար. Մարթ. 4. Յամբ. Մարթ. 410. Յամբլ. Պեր. 494. Ներ. Պարփ. 231 Գ. Պարփ. 313. Գ. Ման. 121 կն.
7. «Եզրանի, եզրանիլի, անդանիլի» — Փիլ. լին. Գ. 41. էջ 210. Տիմ. Կուզ 58, 100 կն. Իրեն. Յոյցք 4.
8. «Էնթալպա» — Փիլ. Այլար. 113—115 կն. Պիտ. 510. Տիմ. Կուզ. 24. 255, 339. Իրեն. Հերմ. 142, 201. Ար. Մարթ. 360 կն. Յամբ. Պեր. 496. Վեր. 571. Գ. Պարփ. 260. Էլ. Մարթ. 29 կն:
9. «Էնթալ» — Իրեն. Յոյցք. 3. Տիմ. Կուզ. 22, 26—28, 33. Ար. Մարթ. 360. Յամբ. Պեր. 493. Ներ. Պարփ. 232. Գ. Ման. 125. Գ. Պարփ. 265. Էլ. Մարթ. 39. Ար. Աշխ. 616 կն:
10. «Ընդունական» — Թր. քեր. 22, 26. Իրեն. Հերմ. 124.
11. «Ըստյնա» — Թր. քեր. 5, 9—12, 41. Փիլ. լին. Գ. 43, էջ 212. Ար. Աշխ. 617. Իրեն. Հերմ. 227.
12. «Միակ» — Փիլ. լին. Գ. 110, էջ 332 Ժ. Բան, էջ 229. Գ. Ման. 135 կն.
13. «Ներգործություն, ներգործեմ» — Թր. քեր. 22, 23, 45 կն. Փիլ. լին. Գ. 5, էջ 177. Գ. 21, էջ 261. Փիլ. Ման. 551 Իրեն. Հերմ. 49, 69, 76, 99, 110, 113. Իրեն. Յոյցք 26. Թէն 38, 46 կն. Տիմ. Կուզ 17, 22 կն. Ար. Պեր. 471. Յամբլ. Պեր. 502. Յամբլ. Մարթ. 448 կն.
14. «Շնաղկապ» — Թր. քեր. 12, 35. Փիլ. Յագ. Յառ. 83. Իրեն. Հերմ. 158 Արիստ. Պեր. 465. Յամբ. Պեր. 489. Թէն 94. Գ. Պարփ. Վեր. կն.
15. «Սերակ», «որակություն» — Փիլ. լին. Գ. 181, էջ 383. Փիլ. տես. 7. Պիտ. 464. Իրեն. Հերմ. 171. Տիմ. Կուզ 324. Թէն 170, 172. Ներած. Պարփ. 235, 246. Ար. Մարթ. 362. Յամբ. Մարթ. 410—430 կն.
16. «Պարունակեմ» — Թր. քեր. 2, 18. Փիլ. լին. 1, 119, 223. Պիտ. 354, 415. Իրեն. Հերմ. 14, 41, 64, 144, 226. Իրեն. Յոյցք 8. Տիմ. Կուզ 83, 270. Ներած. Պարփ. 228, 242. Յամբ. Մարթ. 413. Յամբ. Պեր. 495.
17. «Սերուն» — Փիլ. լին. Գ. 209, 412 Փիլ. այլար. կն. Եսամեծի Մանանդի լին. Բ. 81, էջ 165. Ժ. Բան կն.
18. «Տեսակ» — Փիլ. տես. 7. Յագ. Յառ. 80. Թր. քեր. 12, 17. Պիտ. 387. Տիմ. Կուզ 11, 15, 57 կն. Իրեն. Յոյցք 21. Ար. Մարթ. 361. Յամբ. Մարթ. 413. Ներ. Պարփ. 227. Վերլ. 558. Գ. Պարփ. 253. Գ. Ման. 168 կն. Էլ. Մարթ. 29 կն.
19. «Փոխարկեմ» — Տիմ. Կուզ 62. Նոննոս 74, 80. Էլ. Մարթ. 132.
20. «Քանակ, անքանակ» — Փիլ. լին. Գ. 181, էջ 383. Թր. քեր. 32. Ար. Մարթ. 372. Յամբ. Մարթ. 410. Վերլ. 573. Գ. Պարփ. 257. Գ. Ման. 125 կն:

Գտնվելով հունարան հնագույն թարգմանությունների բառապաշարի ու տերմինաբանության ազդեցության օտ Հերմես Եսամեծի Մանանդի հայերեն թարգմանությունն ունի նաև լեզվա-բարբառական այն կարևոր ստանձնանառուի բառերները, որ բնորոշ են հունարան թարգմանությունների առաջին և երկրորդ խմբերի համար: Այս տեսակետից ուշագրավ է, ամենից առաջ, որ այս թարգմանու-

Քյունը ևս զորք է անուս սէ, իդական գերանունը, որը հանդիպում է հունարան Պիտոյից-Փիլոնյան խմբի Քարգմանություններում ու նաև Տիմոթիոս Կուզի Հակաճառության մեջ, որը հունարան երկրորդ խմբի հնարգմանությունն է:

Հերմես Եռամեծ — Բհուսթիւն է հայերի ճշմարտութեան. սէ և անմարմնոցն է մարմին և աներևոյթիցն լոյս: սէ և նէ ունեն Փիլ. այլար. 156. Հես. 6. Պիտ. 375, 377, 380, 381, 383, 384. Իրեն. Հերմ. 85, 91, 140. Տիմ. Կուզ 26, 33, 35, 42, 194, 236 ևն:

Այն հանգամանքը, որ իդական սեռի արգիտտիկան ու շինծու սէ դերանունը, բացի վերոհիշյալ հնագույն Քարգմանություններից, զորք է անվամբ նաև Հերմես Եռամեծի Մանանթի մեջ՝ մի նշան է, անշուշտ, որ այս գրվածքի Քարգմանության ժամանակը մոտ եղած պիտի լինի Պիտոյից-Փիլոնյան խմբի և Տիմոթիոս Կուզի Հակաճառության Քարգմանությունների ժամանակաշրջանին:

Ուշադրով է նաև, որ Հերմեսի Մանանթի Քարգմանության մեջ ևս, ինչպես և հունարան տառիկն խմբի և Թեոնի Քարգմանություններում, ն նախդիրը զորք է անվամբ հունարենն օրո նախդրի նշանակությամբ: Այսպես,

Հերմես Եռամեծ — քանզի ցանկութիւն ոչ նիմեքն. համեմատե ճնողւոյս, ճնիմեքն, ճնողմէս, ճնիմոյս Թր. Քեր. 18, 19, 23, 29. Ենտապելէն և պատմութենէն Թէւն 14.

Մի որիքը պարզ նշան է Հերմեսի Մանանթի հայերեն Քարգմանության և վերոհիշյալ հին Քարգմանությունների սերտ առնչության նաև ճնիք թվական անվան փոխարեն ճնուս-ի զորածությունը: Օրինակ՝

Հերմես Եռամեծ — Եմու զեղեցիպատան բաղկացութիւնս, քրայց երկին մու և զոյգ ծովու և երկրիս, Եմու փրկութիւնս: Եմուս ունեն նաև Թր. Քեր. 8, 13, 25. Փիլ. Լին. Գ. 110, էջ 332. Պիտ. 398, 473, 501, 503: 527. Տիմ. Կուզ 65, 68, 176, 201, 260, 267, 274, 311. Ար. Պեր. 468, 476, 505 ևն:

Հերմես Եռամեծի Մանանթի հայերեն Քարգմանության ժամանակը որչափ ևս համար մեծ կարևորություն ունի նաև այն, որ նրա մեջ զորք է անվամբ աներկազ բառը, որը տառիկն անզամ հանդիպում է հունարան Քարգմանությունների երկրորդ խմբում: Այսպես՝

Հերմես Եռամեծ — Եհ ներհականս էակացս իմանայ, նորատեղծ ճնեհնակս այս բանս ունեն Տիմ. Կուզ 160. Թէւն 50, 62, 66 ևն: Արիստ. Ստոր. 368. Յամբ. Ստոր. 413, 416, 417. Արիստ. Պեր. 466, 475 ևն: Հունարան տառիկն խմբի Պիտոյից-Փիլոնյան երկիրը փոխանակ ճնեհնակս բառի ունեն թընդդիմակն:

Ինչովական բոլոր վերոհիշյալ դիտողություններն ի մի ամփոփելով, կարծում եմ, որ կարող ենք վստահորեն ենթադրել, որ Էլերմեսայ Եռամեծի

առ Ասիղեպիոս Մանանթի-ը Քարգմանված պիտի լինի հունարենից Պիտոյից-Փիլոնյան խմբի երկրորդ ճեռ, հավանաբար, վեցերորդ զարի երկրորդ կիսում կամ ամենավաղը՝ վեցերորդ զարի կեսերին, նույն այս ժամանակամիջոցում, 552—556 թվականներին, Քարգմանված էր, ինչպես պարզ ու որոշ ցույց է տրված իմ Էլուսարան զարոյցը և նրա թարգմանաշրջանները աշխատության մեջ (էջ 95—102), հունարան Քարգմանությունների երկրորդ խմբին պատկանող Տիմոթիոս Կուզի Հակաճառությունը¹:

5. Մեր ստացած այս եզրակացության դեմ միակ առարկությունը կարող է այն լինել, որ Էլերմեսայ Եռամեծի առ Ասիղեպիոս Մանանթի-ից կարող էլ է, ինչպես այդ իր Եղիշեի Արարածոց զբերի մեկնությունը դիտարկելու ժամանակ մեջ ենթադրել է Լ. Պաշիկյանը, Եվասն վարդանայ և Հայոց պատերազմի ժամանակ աշխատության հեղինակը: Պաշիկյանի կարծիքով, Հերմես Եռամեծից է անվամբ Եղիշեի հետևյալ հատվածը.

1. Եղիշե, վկանակի, 1864, էջ 25 (Երկրորդ լեզանակո՝)
 1. Որպէս և ասաց ոմն ի հունմն. Ման ոչ իմացեալ՝ մաս է, մաս իմացեալ անմասնութիւն է. Որ Եման ոչ զիտէ, երկնչի ի մանուանէ. Իսկ որ զիտէ Եման, ոչ երկնչի ի նմանէ:
 2. Համեմատե Հերմես Եռամեծ՝
 Եման իմացեալ՝ անմասնութիւն է, ոչ իմացեալ՝ մասն:

Մեզ րեղված համապատասխան վկայությունների համեմատությունից տեսնում ենք, որ Եղիշեի հատվածն այնչի ընդարձակ է, քան Հերմեսինը: Ուստի և դժվար է, իմ կարծիքով, անվերապաս կերպով պնդել, որ Եղիշեի Պատմությանը աղբյուր է ծառայել Հերմեսի Մանանթի-ից: Հայտնի է, որ նոր պատմական զարոյցի երկիրը իրենց մեջ հաճախ պարունակում էին հուն մտքեր և հման հատվածներ. ուստի և միանգամայն հնարավոր է, որ վերոհիշյալ հատվածը կարող էր Եղիշեի քաղաք լինել որևէ այլ աղբյուրից: Իսկ կրթ մեծը ենթադրելու լինենք, որ Եղիշեն, իրապես, օգտվել է Հերմեսի Եվա Ասիղեպիոս Մանանթի-ից, այդ դեպքում՝ մեծը հարկազրկված ենք լինելու նրա Պատմության գրության ժամանակը, որ դեռևս վերջական կերպով սրբված է՝ ինչպես և միևնույն վեցերորդ զարի երկրորդ կեսը: Այս կարևոր խնդիրը կարող է, անշուշտ, հատուկ քննության ասանձին հաղվածուի:

6. Առանձին ուշադրության արժանի է Հերմես իմաստասերի հիշատակությունը Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դար) Թղթերի հետևյալ հատվածներում:

1. Գրիգոր Մագիստրոս, Նրատ. Կ. Կոստանյանցի, 1910 թ., Բ., էջ 5:
 1. Գրիգոր սրյս ի ճար ինձ այժմ եկիսցէ ճեմականն Երկրպիգէս յիբում տախտակի, սակս սորբանականին Տրոբոնեայ ասելով. Ով Տրո-

¹ Գալուստ Տեր-Միքայելյանի և Արեգյանի կարծիքը, որ Տիմոթիոսի Հակաճառությունը Քարգմանված է հայերենի 480—484 թվականների ժամանակամիջոցում (սեպտեմբեր, 1908, էջ 364—369, Երկրպիգէս, 1913, էջ 154—163 և Արեգյան, Հայոց հին գրականության պատմություն, I, Երևան 1944, էջ 613—618), պարզապես թուրքացության արգելում է և միանգամայն անընդունելի է:

քոնեայ, յորևս բախտի բարի գոյ կարծես՝ մակացու ի ծնէ կուրաց
 էթէ զհին պատահման հանգունակի մակեղուտ անանջատ: Եւ զի գայ-
 ստիկ ոչ այլ ինչ իմաստասիրէր բայց միայն վասն իւրոյ ուսեմն
 Հերմայ աշակերտի. զի նորս, թողեալ զիմաստասիրութեանն ար-
 ճեստ, չզգաւ ի կենցաղական զեղխուեմն, իբրու թէ կորչի ծնէ կեղեւ,
 զգայ զվարձութեանն, և ըզձայ տեսութեան, իսկ զհին տեսութեան՝ ի
 պատահմանէ կուրեացեալ, յո՛մ տարակուսելի է, Ջօր բանս զբեզ
 ակն տունջեան անուանէ, և զմեզ կափուցեալս ի ճառագայթից և
 իւրթնիս և խաւարչտին եղեալ: Մակայն առ այստիկ ուղ ինչ էթէ
 իմաստասիրեցից, ոչ պատկանելի է, այլ մանուսանդ փութալի. իէպէտ
 և ոչ ստուածպետականին հասին բախտի և օծման և մաքրու-
 թեան, սակայն կաթիլ իմն աստուածային առ նոսա կաթեալ:

2. Նույնը, 1Բ, էջ 85.

«Աղականութիւն խոկայ երկրոցունց մեծագունի աշխարհի և փոքու
 մանուսնդ էթէ արատաքոյ հրամանաց իմանալի աշխարհին. քանզի
 իմանալի աշխարհ աստուածային էութիւնն իմանի բոտ Հերմեսեայ
 մեծի, իսկ փոքր մարդկայինս սեռ և մեծագոյն յորում բնակեալս եմք:»

3. Նույնը, 2, էջ 182.

«Բայց Պդասոն փոքր ինչ իմաստասիրելով զերակատար զոյճիցս
 առելով կամեցաւ զարարչականն էութիւն յասելն իւրում այսպէս, թէ
 որ զամենեւեան ամեալ անկողական և մակասար բնութիւն, ի վե-
 ուրջ կողով ամենայնի նախախնամէ զամենեւեան, տեսանելոյ և ինքն
 ոչ յուսեմք տեսանի, այլ անցեալ կայ սարսանդեալ յիւրումս ասան-
 ձին բարձրութեան. Եւ Հերմեսոս (—Հերմէս Ենամեծ) մեծ շարժօզ
 զնս և տածօզ և իմանալի աշխարհ:»

4. Նույնը, ՀԱ, էջ 205.

«Այլ բնականքս այս թէպէտ Եօզոյ սիմեոնիզոնն անուանեալ, սա-
 կայն մտաց և մակացութեան ընդունեալ. վասն որոյ երկիր զսա կո-
 չել աստուած ոչ պատկառի, Հերմեսոսմեծ (—Հերմէս Ենամեծ), թէ-
 պէտե անշարհ, բայց ի բազմաց աստուածս. վասն որոյ յիւրում
 սքանչելի տախտակին այսպէս հատանելով պարզ և զճիտս. աստուած
 անշարժելի աշխարհ, երկին շարժուն աշխարհ, մարդ բանաւոր աշ-
 խարհ, երկիր, և միակից աստուած: Իսկ և թէ ոչ բանաւոր, զիմով
 մարդ. և եթէ ոչ իմաստուն, որպակ բանաւոր. և եթէ ոչ մակասացա-
 կան, չճիկն իմաստուն. և որ ոչ իմաստուն, ճրգոն մտաց և մակա-
 ցութեանն ընդունակ:»

Այս հատվածներից առջինում հիշատակված Հերմեսը, որը Եվրոպի-
 գեո ճեմականի աշակերտն է եղել՝ անշուշտ, Հերմես Ենամեծը չէ, այլ, ինչ-
 պես ես կարծում եմ, նորպդասոնական Հերմես մեկնիչն է: Արիստոտել-
 յան վերոհիշյալ անհայտ մեկնիչ Եվրոպիգեոը հիշատակված է նաև Ստե-
 փանոս Սյունեցու «Եսա Տ. Գերմանոս» գրած թղթի՝ նեակյալ հատվածում.

«Իսկ ոմն յերկուց անձնաւորեալ, մի ասացաւ բնութիւն, որպէս մեկնէ
 Յիւրոպիգէոս Աթենացի, զպարզսն անուանան զսերմանեալսն յԱրիս-»

1 Տես «Գիրք թղթոց», Թեֆլիս, 1901, էջ 284.

տուէլէ, ասացեալ եղջերուաբազս ի ստորգութիւնն, ոչ միայն ի
 վերայ պարզիցն սոէ, այլ և զշագաշարար կառակցեալսն մի ասելի
 բնութիւն:»

Ինձ թվում է, որ Ստեփանոս Սյունեցին և Գրիգոր Մագիստրոսը կա-
 րող էին օգտված լինել Արիստոտելյան այս անհայտ հեղինակի մեկնու-
 թյան հայերեն թարգմանութունից, որի մեջ, հավանորեն, հիշատակված է
 եղել և Եվրոպիգեոսի աշակերտ Հերմեսը:
 Իսկ Գրիգոր Մագիստրոսի մյուս հատվածները, որոնց մեջ հիշատակ-
 ված է Հերմես Մեծը կամ Հերմես Ենամեծը՝ վերաբերվում են, անշուշտ,
 «Հերմայ Ենամեծի» առ Ասիղեպետ Սահմանք-ին:

7. Կարևոր եմ համարում նաև հիշատակել, որ մեր հրատարակած այս
 գրվածքում հանդիպում են մի քանի նոր բառեր, որ չունեն նոր Հայկա-
 ցյան և Առձեռն բառարանները: Այդպիսի բառեր են.

1. Անսերուն — շեւուր է գոյացութիւն անսերուն:»
2. Պակալմ — սորպէս պակալեցէ ցանկութեամբ, որ յորովայնին է՝ սոյն-
 պէս և մայրն ցանկայ. սոյնպէս և որ ինչ յանձինն պակալեցէ ցան-
 կութեամբ՝ գայս և մարդն ցանկայ:»
3. Ամենակերպ, ամենորակ — բնութիւն է ամենակերպ ի մարդումն և
 ամենորակ ներքործութիւն:»
4. Պարիմացական — բրտացում ունելով զիւր բանն պարիմացական:»
5. Շարիմանամ — բնութիւն շարիմանալով:»

8. Հերմէս Ենամեծի Սահմանքի սույն հրատարակութեան հիմք են
 «Հերմայ Ենամեծի» Սահմանքի սույն հրատարակութեան հիմք են
 «Հերմայ Ենամեծի» Սահմանքի սույն հրատարակութեան հիմք են

Յ = Անադիբ իմ գրադարանի՝
 Թուղթք՝ 245. — Մեծութուն՝ 15×10. — Տողք՝ 21. — Գիրք՝ նորոգելի
 — Նյութ՝ ողորկ թուղթ: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ: — Հանգամանք՝ լաւ:
 — Թվական, գրիչ և տեղ՝ անհայտ:
 Բովանդակութիւնն. — Թ. 3ա — 121ա. Երևանեայն Գրիգորի նիւսացւոյ
 ասացեալ վասն բնութեան մարդոց: — Թ. 121բ — 210բ. «Գրիգորի կոյն-
 ասացեալ վասն բնութեան մարդոց: — Թ. 210բ —
 40պոսի երբորն Բարսիլ տեսութիւն ի մարդոյ կազմութիւն:» — Թ. 210բ —
 216բ. «Հերմայ Ենամեծի առ Ասիղեպետ սահմանք:» — Թ. 217ա — 241ա.
 «Արիստոտելի իմաստասիրի յազգայ յամ (պատմ.) աշխարհի առ Աղէք-
 սանդրոս թագաւորն:» — Թ. 241ա — 244բ. «Արիստոտելի յազգայ տաքիւն-
 ութեան առ Աղէքսանդրոս թագաւորն:»

Ե = Անադիբ № 2303 (2327) Պետական ձեռագրատան:
 Թուղթք՝ 286. — Մեծութուն՝ 19½×13. — Տողք՝ 27 կամ 25. — Գիրք՝
 բնորոգելի: — Նյութ՝ ողորկ թուղթ: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ: — Հանգա-
 մանք՝ լալ: — Թվական՝ Ռձ և ճէլիկն (= 1652): — Գրիչ՝ Մարկոս սարկա-
 վագ:

« Այժմ Մատենադարանի ձեռ. № 9427:

Բովանդակություն. — Թ. 2 — 58բ. «Միմէոնի վարդապետի Ջուզազ-
ւոյ արարեալ քերականութիւն ըստ լեզուի մերում հայկազանց»։ — Թ.
59 — 91բ. «Միմէոնի վարդապետի Ջուզազւոյ արարեալ գարամարա-
նութեան հաւաքումն»։ — Թ. 92 — 107ա. «Յաղագս շարամանութեան որ է
հասար Երկրորդ»։ — Թ. 107բ — 149ա. «Յաղագս շարամանութեան որ է
հասար Երրորդ»։ — Թ. 149բ — 273բ. «Միմէոնի Դաւնոյ եպիսկոպոսի
արարեալ մեկնութիւն զրոցն Պրովիզի»։ — Թ. 274 — 280ա. «Համառոտ հա-
ւաքումն վասն մարմնոյ և նոյնս և որոց բազկանայ մարմինն»։ —
Թ. 280ա — 284բ. «Հերմայի իմաստասիրի սասցեալ»։

d = ձեռագիր № 419 (449) Պետական ձեռագրատան։

Թուղթք՝ 99։ — Մեծութիւն՝ 24 × 17։ — Տողք՝ 32։ — Նյութ՝ թուղթ։
— Կազմ՝ կաշեպատ տախտակ։ — Գիր՝ նոսր։ — Վիճակ՝ բավարար։ — Թվա-
կան՝ 1777 թ.։ — Գրիչ՝ Գրիգոր Գլխի։

Բովանդակություն. — Թ. 1ա. «Յաղագս բնութեան մարդոյ»։ — Թ. 7ա.
«Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ սասցեալ վասն բնութեան մարդոյ»։ —
Թ. 93բ — 96բ. «Հերմա եռամեծի առ Ասկղեպիոս Մանանդ»։

e = ձեռագիր № 538 (414) Պետական ձեռագրատան։

Թուղթք՝ 144։ — Մեծութիւն՝ 13 × 9։ — Տողք՝ 23։ — Նյութ՝ թուղթ։
— Կազմ՝ կաշեպատ տախտակ։ — Վիճակ՝ բավարար։ — Թվական, գրիչ, տեղ՝
անհայտ. ունի 1595 թվի հիշատակագրություն։

Բովանդակություն. — Թողովածու է, որի մեջ Հերմես եռամեծի Ման-
անդը գտնվում է 113ա էջից սկսած մինչև 122բ էջը. վերնագիրն է՝ «Ման-
անդը Հերմայի»։

f = ձեռագիր № 2269 (2285) Պետական ձեռագրատան։

Թուղթք՝ 112։ — Մեծութիւն՝ 21 × 15,5։ — Տողք՝ 32։ — Նյութ՝ թուղթ.
— Գրություն՝ Երկայուն։ — Կազմ՝ կաշեպատ տախտակ։ — Վիճակ՝ բավարար։
— Գիր՝ նոսր։ — Ժամանակ՝ ժԸ դար։ — Գրիչ՝ տեղ հարութային։

Բովանդակություն. — Ժողովածու է, որի մեջ Հերմես եռամեծի Ման-
անդը գտնվում է 87ա էջից սկսած հետևյալ վերնագրով՝ «Հերմես եռա-
մեծի առ Ասկղեպիոս Մանանդ»։

i = ձեռագիր № 1500 (944) Պետական ձեռագրատան։

Թուղթք՝ 1188։ — Մեծութիւն՝ 36 × 26։ — Նյութ՝ թուղթ։ — Կազմ՝ կա-
շեպատ տախտակ. — Գիր՝ բոլորգիր (չղաղբի որդ գծերով)։ — Գրիչ՝ Մխի-
թար վարդապետ Այրիվանեցի։ — Ժամանակ XIII դար։ — Տեղ՝ Այրիվանդ։
— Հիշատակարան՝ գլխավոր հիշատակարանն ընկել է. ունի բազմաթիվ հի-
շատակագրություններ։

Բովանդակություն՝ ճառերտիր. տես Կարենյանց Հ., Մայր Յուցակ.
թ. 924, էջ 130 — 133.

Բացի այս օրինակներից՝ կա նաև մի ձեռագիր կս (թ. 1838/1905
Պետական ձեռագրատան), որն ունի Հերմես եռամեծի Մանանդից մի
հատված հետևյալ վերնագրով՝ «Հերմէսի եռամեծի իմաստասիրէ» (թ. 271ա),
Այս հատվածի ընթերցվածները ծանոթութիւններն մեջ չեն նշանակված.
որովհետև նրա մեջ չկան կարևոր օրէնք ընթերցվածներ։

Մանանդի քննական մեր հրատարակությանը զործակցել է պատմա-
կան գիտութիւնների քննիչ Լ. Խաչիկյանը, որը սիրամտաբար կերպով
նշանակել է իմ ա և ն ձեռագրերի քաղցրատեսությամբ կազմված բնագրի
լուսանցքում ձ, օ, ւ և ձ ձեռագրերի տարբեր ընթերցվածները, և Խաչիկ-
յանը տվել է նաև իր համեմատած չորս ձեռագրերի մասին անհրաժեշտ
տեղեկութիւնները. նրա զործակցութիւնը մեծապես հեշտացրեց այս կար-
ևնը բնագրի հրատարակութիւնը ձեռագրերի համեմատությամբ. ուստի
և հարկ եմ համարում հայտնել նրան իմ շնորհակալութիւնը։

Պետք է առանձնապէս մատնանշել, որ Հերմես եռամեծին վերագրված
այս կերպախրութիւնը, շնորհիվ իր հեթանոսական խորթ ու արտասովոր
բովանդակութեան, որ հասկանալի չէր քրիստոնեական աշխարհայեցողու-
թեան ունեցող գրիչների համար՝ սրանց կորսից ենթարկվել է զգալի աղ-
ձառումներին. Դրա համար էլ բնագրի ուղիղ վերածնունդը և ճշտումը խիստ
զվար էր և պահանջեց ինձանից բավական ջանք ու աշխատանք։

Վերակազմված բնագրում մի քանի կետեր նաև այժմ ինձ համար
մնում են մտնել և խնդրական ու պետք է հուսալ, որ այդ կետեր կարելի
կլինի թերևս ուղղել Վիեննայի և Վենետիկի ձեռագրիչների ընթերցվածնե-
րի օրնութեամբ։

Ծանոթութիւնների տեղի վրա անհրաժեշտ եմ համարում հիշել հետե-
վալը. Համեմատութիւնների մեջ չեն առնված ընդհանրապես ուղղագրա-
կան ընթերցվածները, որոնք վերաբերվում են օ կամ ա (օրինակ՝ օդ —
ուղ), ո կամ օ (օրինակ՝ տեսանող — տեսանօղ), յ-ով և ստանց յ-ի (օր-
նակ՝ ջրոյ — ջրո), Ը-ով կամ ստանց Ը-ի (օրինակ՝ մշաբնփնտար — մըշ-
անփնտար) ուղղագրութիւններին. Ընդունել եմ սովորական դարձած ուղ-
ղագրութիւնները՝ օղոյ, տեսանող, օջրոյ, օմշանփնտար։ Ծանոթու-
թիւնների մեջ մեծ մասամբ չեն հիշվում նաև պատվագրութիւնները։

Յուցակ գործածված առանցիցների

- a = ձեռագիր իմ գրադարանի (այժմ ձեռագիր 9427, Պետական ձե-
ռագրատան), թվականն անհայտ։
- b = ձեռագիր 2303/2327 Պետական ձեռագրատան, գրված 1652 թվին։
- d = ձեռագիր 419/449 Պետական ձեռագրատան, գրված 1777 թվին։
- e = ձեռագիր 538/414 Պետական ձեռագրատան, գրված 1595 թվից
տուֆ։
- f = ձեռագիր 2269/2285 Պետական ձեռագրատան, գրված ժԸ դարում։
- i = ճառերտիր (Մխիթար Այրիվանեցու) 1500/944 Պետական ձեռա-
գրատան, գրված XIII դարի վերջերում։

զուսնչ ունին և անձն. զի անհնայն, որ անէ և նուազէ կենդանի է:

Եւ կենդանեացն են, որ անձանք և շնչաւորք են, և են, որ միտս և 5 անձն և շուսնչ ունին, և են, որ միտն շուսնչ, և են, որ անձն և շուսնչ, և են, որ միտն կենան: Զի կենանք ասանց շնչոյ և մտաց և անձին և անձանօրթեան կարէ բազ- 10 կանալ, բայց այլքն անհնչքեան ասանց կենացն անկար է գոր

Բան մտաց արբանեակէ զի գոր կամի միտքն՝ զայն և բանն թարգ- մանէ: Միտք զամենայն ինչ տե- 15 անէ, իսկ աչք զամենայն մարմ- նականու: Եւ սակայն միտք աչացն ոչ լինի գէտ, այլ աչք մտաց:

Մտաց ոչինչ անձատ է, բանի ոչինչ անձանեի: լուս կարով իմա- 20 նա՝ խօսելով խօսի, քանզի ի լուսիկան միտք զգանայ զբանն: Որ ի լուսիկէն է և ի մտաց բան մու- փրկութիւն: որ ի բանէ բան՝ ի կորուստ. զի վասն մարմնոյն 25 մարդն մանկանացու, բայց վասն բանին՝ անձան:

Որ զբանն ոչ իմանայ՝ միտս ոչ ունի. որ խօսի ասանց մտաց՝ ոչինչ ասէ. ոչինչ իմանալով՝ միտս 30 ոչ ունի և խօսի. զի խօսելն ամբ- րոյ է և ամբոյն ոչ միտս և ոչ բան ունի:

